


44224

Stuv



Գ Ի Ր Ք

# ՍԱՂՄՈՍԱՑ

ԿԱՀԵ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ  
ՏԱԿՐՈՒԹԻՒՆ Ա. Յ. ՊՈՅԱԶԵԱՆ

1910

# \*ԳԻՐՖ ՍԱՂՄՈՍԱՑ

## ՍԱՂՄՈՍ Ա.

- 1 Երանելի է այն մարդը՝  
Որ ամբարիշտաներուն խորհուրդին մէջ չքալեր,  
Ու մեղաւորներուն ճամբանն մէջ չկենար,  
Եւ ծաղը ընողներուն նստած տեղը չնստիր.  
2 Հապս անոր հաճութիւնը Աստածոյ օրէնքին մէջ է,  
Եւ ցորեկ ու գիշեր անոր օրէնքին վրայ կը մստածէ:  
3 Եւ անիկա ջաւրի ճամբաները տնկուած ծառի պէս  
պիսի ըլլայ,  
Որ իր ժամանակին իր պառւզը կուտայ,  
Ու անոր տերեւը պիսի ջթափի,  
Եւ ինչ բան որ ընէ՝ պիսի յաջողի:  
4 Այսպէս չեն ամբարիշտաները,  
Հապս մշեղի պէս՝ զոր հավը կը ցրուէ:  
5 Ասոր համար ամբարիշտաները դատաստանին մէջ պիսի  
չկրնան կենալ,  
Ու ալ մեղաւորները արդարներուն ժողովքին մէջ:  
6 Վասն զի Տէրը կը ճանչոյ արդարներուն ճամբան,  
Բայց ամբարիշտաներուն ճամբան պիսի կորսուի:

## ՍԱՂՄՈՍ Բ

- 1 Ինչո՞ւ չեթանաները խուվլութիւն կ'ընեն,



- Ու ժողովուրդները պարսագ բան կը մնածեն,  
 2 Երկրի թագաւորները ինքինքնին կը հաստատեն,  
 Ու իշխանները մէկանե խորհուրդ կ'ընեն  
 Տէրովք դէմ ու անոր Օծեալին դէմ,  
 3 Հոււլու, Կոտրենք անոնց կատերը,  
 Ու մեզմէ ձգենք անոնց \*ըստը,  
 4 Երկինքը ընակողը անոնց գրաց պիտի ծիծաղի,  
 Տէրը ծագր պիտի ընէ զանոնք:  
 5 Այն առան իր բարկութիւնովը պիտի խօսի անոնց,  
 Եւ իր սրտմասութիւնովը պիտի խռովեցնէ զանոնք,  
 ըստը,  
 6 Եւ օծեցի իմթագաւորս  
 իմ սուրբ լեռանս, Ալոնի, վրայ:  
 7 Հրամանը պիտի պատմեմ.  
 Տէրը ինծի ըստւ,  
 Դուն իմ Որդիս ես,  
 Ես այսօր քեզ ծնայ:  
 8 Խոնդրէ ինծի, ու չեթանոները քեզի ժառանգու-  
 թիւն պիտի տամա՞,  
 Ու երկրի ծայրերը՝ քեզի սոտցուածք.  
 9 Զանոնք երկաթէ գտաւազմանլ պիտի դատես,  
 Բրուտի ամանի պէս պիտի ֆշտես զանոնք:  
 10 Ուստի հիմա, ովլ թագաւորներ, միտքերնիդ առէք,  
 Երկրի դաստաւորներ, խրասուեցէք:  
 11 Երկիւղով Տէրոջը ծառուցեցէք,  
 Ու դողալով ժանիք վախցէք:

\*Եբք. չուտմաները  
 ժկամ, հովուես  
 ժկամ, ցնծացէք

- 12 Որդին համբուրեցէք՝ որպէս զի չբարկանայ,  
 Ու ճամբուռ մէջ չկորառէք,  
 Երբ անոր բարկութիւնը քիչ մը բորբոքի,  
 Երանի՛ այն ամէնուն որոնք անոր կը յուսան:

## ՍԱՂՄՈՍ Գ

Սաղմաս Դաւթի, իր որդւոյն Աբիսողոմի երեսէն  
 փախած ժամանակէ

- 1 Ովլ Տէր, իմթշնամիներս ո՛րչափ շատցան.  
 իմ վրաս ելուզները շատուոր են:  
 2 Շատերը իմ անձիս համար կ'ըսեն թէէ  
 Ասոր փրկութիւն չկայ Ասոուծմէն: (\*Սէլաւ)  
 3 Բայց, ովլ Տէր, գուն ես իմ ասպարս,  
 իմ փառքս ու իմ գլուխս բարձրացնողս:  
 4 Իմ ձայնավո Տէրոջը կոմչեցի,  
 Ու իր սուրբ լեռնէն ինծի պատասխանեց: (Սէլաւ)  
 5 Ես պառկեցայ ու քնացայ.  
 Որթնցայ, վասն զի Տէրը զիս պաշտպանեց:  
 6 Ես պիտի չվախնամ բիւրաւոր ժողովսուրդներէն՝  
 Որոնք իմ չորս կողման պատեցին:  
 7 Ենիր, ովլ Տէր, զիս փրկէ, ովլ իմ Ասոուծման,  
 Պասն զի գուն զարկիր իմ բոլոր թշնամիներուու-  
 թուցը.

\*Այս բառին սոյսէ և շանուառներու նկատ յայտնէ չե, առ-  
 ևյա Եբայոյան բնուժին մէջ գործութէն մէնտ ու դահն-  
 ցինտ թարիւանութեան մէջ: Կ'երեւէ Ան Երդեցուն մէջ յայ-  
 սոին իւ դոքանցէն իրենց Երդեցուն մէջ յայս իրենց  
 յայն ուրեւու հոմար և մայս բարձրացնելու համար:

Ամբարելշտներուն ակռաները փշբեցիր:

8 Փրկութեւնը Տէրոջն է.

Քու օրհնութեւնդ քու ժողովուրդիդ վրայ ։է ։  
(Սէլաւ)

## ՍԱՂՄՈՍՍ Ե

Դիմաւոր երաժշախին, Դնկինօթի վրայ. Սաղմոս Դաւթիւ

1 Վանչելու ատենս ինծի պատասխան տուր, ով իմ  
արդարութեան Աստուածը.

Նեղութեան մէջ զիս ընդարձակեցիր.

Ողբմէ ինծի ու լուէ իմ՝ աղօթքս:

2 Մարգոց որդիներ, մինչև ե՞րբ իմ փառքս ամօթի  
ուրդիք բարչներ,

Ես ունայնութիւն պիտի սիրէք ու ստութիւն փընտ-  
ռէք: (Սէլաւ)

3 Բայց գիտցէք որ Տէրը իրեն նուիրուած ժորդը ։որոշեց,  
Տէրը պիտի լուէ իրեն կանչելու ատենս:

4 Գողացէք ու մեղք մի գործէք.  
Խօսեցէք սիրտերնուգ չետ անկողիններնուգ վրայ ու

լուեցէք: (Սէլաւ)

5 Արդարութեան զոհեր մասուցէք,  
Ու Տէրոջը յաւսացէք:

6 Շատերը կ'առեն թէ Ո՞լ մեղք բարութիւն պիտի  
ցուցնէ:

\*կամ, ըլլայ

+Ա.սէլ հառանաքիւն խրէիք+ ըսրինելու նուաբաններուան  
անսանն է:

†կամ, երեւելի ըրաւ-

Ով Տէր, քու երեսիդ լոյսը մեր վրայ ծագէ:

7 Խմ սրախ ուրախութիւն տուիիր:

Անոնց ցորենին ու գինիին առաստութեան ժամանա-  
կէն աւելի:

8 Խաղաղութեամի պիտի պառկիմ ու քնանամ,  
Վասն զի դուն միայն, ով Տէր, զիս ապահովութեամի  
կը բնակեցնես:

## ՍԱՂՄՈՍՍ Ե

Գլասուոր երաժշախին, Դնկիւթի վրայ. Սաղմոս Դաւթիւ

1 Ով Տէր, ականջ դիր իմ խօսքերուս,

Միարգ առ իմ՝ աղաղակա:

2 Իմ կանչելուս ձայնը մոնիկ ըրէ, ով իմ՝ Թագտուորս  
ու Աստուածս,

Վասն զի ես քեզի Կ'աղաղէմ:

3 Ով Տէր, առաստանց պիտի լսես իմ՝ ձայնս,

Առաստանց գասարասա պիտի ըլլամ՝ քեզի ու սպա-  
սեմ:

4 Վասն զի դուն անօրէնութիւն ու զող Աստուած չես,  
Զարը քու քսիդ պիտի ընակի:

5 Հապանները քու աչքերուգ առջն պիտի չկենան,  
Բոլոր անօրէնութիւն գործողները Կ'աստես.

6 Սուտ խօսողները կը կրամնցնես,  
Տէրը արինահէել ու նենդաւոր մարդէն կը զգաւի:

7 Բայց ես քու ողբմութեանդ շատութիւնովը քու  
սունդ պիտի մոնեմ:

\*Ա.սէլ հառանաքիւն խրէիք+ հայւը նուաբաններուան  
անսանն է:

†կամ, աղօթքս պիտի ներկոյացնեմ

- Քու վախովդ երկրպագութիւն պիտի լնեմ քու սուրբ  
տաճարից մէջ :
- 8 Ով Տէր, քու արդարութիւնովդ ինծի առաջնորդ  
եղի թշնամիներուս համար.  
Քու ճամբարդ շիտկէ իմ առջեւս.
- 9 Վասն զի աննաց բեկնին մէջ ճշմարտութիւն չկայ,  
Անոնց ներսիդին չարութիւն է.  
Անոնց կոկորդը բաց գերեզման է.  
Իրենց լեզուովը նենգաւոր եղան :
- 10 Ով Ասուած, յանցաւոր հանէ զանոնք.  
Իրենց խորհուրդներովը թալ իյնան.  
Անոնց շատ ամեարշաւութիւններուն համար հալածէ  
զանոնք.
- Վասն զի քեզի դէմ ապաստամբեցան :
- 11 Բայց ամէն քեզի յուսացողներ թող սուրախ ըլլան.  
Յաւիտեան թող ցնծան, վասն զի դուն զանոնք կը  
պաշտպանեն.
- Եւ քու անունդ սիրողները թող քեզմով զուարժա-  
նան :
- 12 Վասն զի դուն պիտի օրհնես արդարը, ով Տէր,  
Բարի կամեցողութիւնով անոր չըսո կողմը պիտի  
պատե՛ որպէս թէ վահանով մը :

## ՍԱՂՄՈՍ Զ

Գլխաւոր երաժշտին, նկնիթի վրայ, \*Շէմինիթի վրայ.  
Սաղմոս Դաւթի :

- 1 Ով Տէր, քու սրամառութիւնովդ վիսմի յանդիմաներ,  
Եւ քու բարկութիւնովդ զիս մի խրատեր :

\*Այսէնին, ութերորդի

- 2 Ով Տէր, ողբրմէ ինձին, վտան զի տկար իմ եւ,  
Զիս բժշկէ, ով Տէր, վտան զի սակորներս կը սարսափին :
- 3 Իմ անձս ալ խիստ արասափեցաւ.  
Եւ գուն, ով Տէր, մինչեւ ե՞րբ :
- 4 Դարձիր, ով Տէր, գրկէ իմ անձս,  
Քու ողբրմութեանդ համար զիս ապատէ :
- 5 Վասն զի մահուան մէջ քեզ յիշատակել չկայ.  
Գերեզմանին մէջ ո՞վ քեզի շնորհակալութիւն պիտի  
ընէ :
- 6 Հասուաչնակ ընելէ յոպնեցայ.  
Ամէն գիշեր առաստութեամէ կը լոււամ իմ անկողինս,  
Արցունքներովլս կը թշշեմ իմ մահինս :
- 7 Իմ աչքս մաշեցաւ արտմութենէ,  
Իմ ամէն թշնամիներուս համար հինցաւ :
- 8 Ինձմէ ես կեցէք ամէնդ ալ ող անօրէնութիւն կը  
գործէք.  
Վասն զի Տէրը իմ լալուս ձայնը լսեց.
- 9 Տէրը իմ աղօթքս լսեց.  
Տէրը իմ խնդրուածքս պիտի ընդունի :
- 10 Թող ամէնան ու խիստ զարհուրին իմ ամէն թշնա-  
միներս,  
Ես գաւնան ու շուտով թող ամշնան :

## ՍԱՂՄՈՍ Է

\*Շիկայօն Դաւթի, զոր երգեց Տէրոջ ըենիսամինեան Քու շի  
խօսքերուն համար :

- 1 Ով իմ Տէր Ասուածս, քեզի կը յուսամ,  
Փրկէ զիս իմ ամէն հալածիչներէս ու ազատէ զիս,

\*Կամ, Մեղեդի. տես Ամբ. գ. 1:

- 2 Զըլլոյ որ առիւծի պէս իմ անձս գիշատէ,  
Ու պատառէ և աղասող մը ըլլոյ:
- 3 Ով իմ Տէր Աստուածո, եթէ այս բանը ըրի,  
Կամ թէ իմ ձեռքերուս մէջ անօրէնութիւն կայ,  
4 Եթէ բարեկամիս չորութիւն ըրի,  
Ու յափշակեցի զանի՞ո որ առևանց պատճառի իմ  
թշնամին էր:
- 5 Թող թշնամին հալածէ իմ անձս ու հասնի անոք,  
Ու երկրի վրայ կոփուտէ իմ կեանքու,  
Եւ իմ փառքո հողի վրայ բնակեցնէ: (Աէլաւ)
- 6 Ելիր ով Տէր, քու բարկառութիւններուն դէմ բարձր  
եղիր,  
Եւ քու հրամայած դաստաստանիդ ինձի համար ար-  
թընցիր:
- 7 Եւ ժողովորդներուն ժողովը քու չորս կողմէ պիտի  
պատեն:
- Անոնց վրայ գէպի բարձրը դարձիր:
- 8 Տէրը պիտի դատէ ժողովուրդները.  
Ով Տէր, իմ դաստաստանս տես,  
Իմ ունեցած արդարութեանս ու անմեղութեանս  
նոյելով:
- 9 Ու մարդիշտներուն չարութիւնը թող հատնի:  
Բայց գուն արդարը հաստատէ.  
Վասն զի գուն, ով արդար Աստուած, կը քննեա  
սիրտերը ու երիկամունքները:
- 10 Իմ պաշտպանութիւնս Աստուածմէ է.  
Որ կ'ապրեցնէ սրտով ուղղուները:
- 11 Աստուած արդար դաստաւոր է,  
Ու Աստուած Նորուսէն օր բարկացած է.

- 12 Եթէ անիկա չդառնայ, իր սուրբ պիտի սրէ,  
Աղեղը լարեր ու պատրաստեր է:
- 13 Ու մահու գործիքները անոր համար պատրաստեր է,  
Իր նետերը \*հալածիչներուն համար շիներ է:
- 14 Աչս անօրէնութեան երկունքը բանեց զանիկա,  
Զարութիւն յշացաւ ու ստութիւն ծնաւ:
- 15 Հոր փորեց ու խորունկցուց,  
Բայց իր շնած փոխն մէջ ինք պիտի կյնոյ,  
16 Անոր չարութիւնը իր գլուխը պիտի դառնայ,  
Ու անոր բանութիւնը իր գագաթին փոյց պիտի իշնէ:  
17 Գոհութիւն պիտի մասաւցանեմ Տէրոջը իր արդա-  
րութեանը համոր,  
Ու սաղմոն պիտի երդեմ բարձրեալ Տէրոջը անուտնի:

## ՍՍՂՄՈՍ Ը

Գլաւոր երաժշտին, †կիթթիթի վրայ, Սաղմոն Գաւթի:

- 1 **Պ**լ Տէր, մէր Տէրը,  
Ի՞նչ փառաւոր է քու անունդ լսովը երկրի վրայ,  
Որ քու փառարդ երկինքներէն վեր դժիր:  
2 Մանկանց ու կաթներ տղայց բերնէն  
†Գովութիւն կատարեցիր՝ քու թշնամիներուդ հա-  
մար,  
Որպէս զի թշնամին ու վրէժինդիրը լոեցնեա:
- 3 Երբ աեւնեմ երկինքդ, քու մատերուդ գործը,  
Լուսինը ու աստերը, զարոնք դուն հաստատեցիր,

\*կամ, կըսկուս

†կը և բառունք եւ աւեստի հը հասած դարանի անունն է:  
‡կամ, Զօրութիւն

- 4 Մարդը ի՞նչ է՝ որ զանիկա կը յիշես,  
կամ մարդու որդին, որ անոր այցելութիւն կ'ընես;  
5 Քիչ մը վար ըրիթ զանիկա հրեշտակներէն,  
Փառքով ու պատուով պասկեցիր զանիկա.  
6 Քու ձեռքերուդ գործերուն վրայ իշխան դրիբ զա-  
նիկա.  
Ամէն բան անոր սաքին տակ գրիբ.  
7 Բոլոր ոչխարները ու արջառները,  
Նուև վայրինի անստունները,  
8 Երկինքի թռչունները ու ծովուն ձուկերը,  
Եւ ինչ որ ծովու ճամբաներուն մէջ կը պարտի:  
9 Ով Տէր, մեր Տէրը,  
Ինչ փառաւոր է քու անունդ բոլոր երկրի վրայ:

## ՍԱՂՄՈՍ թ

- Դիմուոր երաժշտին, Մութլապէնի վրայ: Սաղմոս Դաւթի:  
1 Փոյսութիւն պիտի մատուցանեմ՝ Տէրոջը իմ ըո-  
լոր սրտով.  
Քու ամէն սրանչելիքներդ պիտի պատմեմ:  
2 Քեզմով ուրախ պիտի ըլլամ՝ ու ցնծամ.  
Քու անոււնդ սազմոն պիտի երգեմ, ով Բարձրեալ,  
3 Թշնամիներս ես դառնալու ատեննին  
Քու երեսէդ պիտի ինյան ու կորսուին.  
4 Վասն զի դատաստանս և իրաւունքս գուն տեսար.  
Աթօսին վրայ նստար էբրւ արդարութեան դատաւոր:  
5 Հեթանոսները յանդիմանեցիր,  
Ամբարիշող կորնցուցիր,  
Անոնց անունները ջնջեցիր յաւիտեանս յաւիտենից.  
6 Թշնամիին աւերմունքները բոլորին վերջացան.

- Քաղաքները աւրեցիր.  
Անոնց յիշատակը իրենց հետ կորսուեցաւ,  
7 Բայց Տէրը յաւիտեան կը մնայ.  
Անիկա իր աթոռը պատրաստեց դատաստանի համար:  
8 Ենք պիտի դատի աշխարհը արդարութիւնով,  
Ժողովուրդներուն դատաստան պիտի ընէ ուղղու-  
թիւնով:  
9 Տնանկին ալ ապաւէն պիտի ըլլայ Տէրը,  
Ապաւէն նեղութեան ժամանակները,  
10 Եւ անոնք որ քու անունդ դիտին՝ քեզի պիտի յուտան,  
Վասն զի քեզ փնտառզները, ով Տէր, երեսէ չձգեցիր:  
11 Սաղմոս երգեցէք Տէրոջը որ Ախօն կը բնակի,  
Ժողովուրդներուն մէջ զատմեցէք անոր ըրածները:  
12 Վասն զի արեան վրէժինդիրը յիշեց զանոնք,  
Զմռացաւ նեղեալներուն աղաղակը:  
13 Ով Տէր, ողորմէ ինձի,  
Տես իմ թշնամիներէս իրած նեղութիւնու,  
Դուռն որ զիս մնչուան դոներէն կը վերցնես.  
14 Որպէս զի քու ամէն գովութիւններդ պատմեմ  
Ախօնի աղջկոն դաներուն մէջ.  
Պիտի ցնծամը քու քրկութիւնովդ:  
15 Հեթանոսները իրենց շնանձ փոսին մէջ ընկղմեցան,  
Իրենց գողտուկ լարած որոգոյթին մէջ իրենց սոքը  
բռնւեցաւ:  
16 Տէրը Ճանչցուած է, վաճ զի դատաստան ըրաւ.  
Ամբարիշող իր ձեռքին գործերով սրոգոյթին կ'կյ-  
նոյ: (\*Հեկկոյօն. Սէլաւ)  
17 Ամբարիշողները դժոխքը պիտի դառնան,

\*Այսիւհետեւ, մոտածութիւն

- Եւ ամեն աղգերը՝ որոնք զԱստուած կը մոռնան;  
 18 Քանի աղքատը պիտի չմոռցուի մինչև վերջը.  
 Տնանկներուն յայոլ յաւելուան պիտի չկորսուի:  
 19 Ելիր, ով Տէր, մարդը չօքանայ.  
 Թող հեթանոսները դաստին քու առջեղ.  
 20 Ու Տէր, \* զանոնք վախցուի.  
 Թող հեթանոսները ճանչնան թէ իրենք մարդ են:  
 (ԱԷԼՈՎ)

## †ՍԱՂՄՈՍ Ժ

- 1 Ու Տէր, ինչո՞ւ հեռու կը կենաս.  
 Նեղութեան ժամանակները անաես կ'ըլլաս  
 2 † Ամբարշամին ամբարտաւանութեանը պատճառաւ  
 աղքատը կը տոչովի,  
 իրենց խորհած հնաբըներուն մէջ թող բռնուին,  
 3 Վասն զի ամբարիշը իր անձին ցանկութիւնով կը  
 պարծենոյ,  
 Եւ ագոնչը իր անձին երանի կու տոյ, Տէրը կ'անարդէ:  
 4 Ամբարիշը իր երեսին ամբարտաւանութեանը հա-  
 մոր զԱսուածք չփնտուեր.

\*Լու, անոնց վրայ սորվեցնող դիր

- †Ո.յ. բաներորդ Սաղոսը Եօթանառից և Հայոց Քրոնո-  
 թերժանութեանց մէջ ինեւրոդին հետ դրայուցուածն է,  
 որով այս նարդանութեան մէջի մշտառաներորդը՝ անաց  
 մէջ բաներորդ յէլուածն է, ու այնու իւ լարանակուած  
 պառը հարցիւր ժուառաւութեաներորդը: Տես այս ուղիւ  
 ծառընութեանց:
- ‡Լու, Ամբարիշը իր ամիսարտաւանութիւնով սոս-  
 տիկ կը հալածէ աղքատը

- Բոլորավին անոր մորին մէջ Աստուած չկայ:  
 5 Ամէն ժամանակ անոր ճամբաները պլնդ են.  
 Քու դաստանաներդ անոր առջեւն բարձր են,  
 Անիկու իր բոլոր թշնամիներուն վրայ կը փէւ:  
 6 Իր սրամին մէջ ըստ թէ Պիտի չսասանիմ.  
 Վասն զի աղգէ մինչև աղդ նեղութեան մէջ պիտի  
 չըլլաս:  
 7 Անոր բերանը անէծքով ու նենգութիւններով ու  
 հարսաւչարութիւններով լեցուն է.  
 Անիրաւութիւննը ու անօրէնսւթիւննը անոր լեզուին  
 տակ են:  
 8 Գեղերաւն գարսնի տեղերը կը նսաի,  
 Գաղտուկ տեղերու մէջ անմեղը կը սպաննէ.  
 Անոր աչքերը ծածկաբար անանկներուն կը նային:  
 9 Գաղտուկ տեղեր գարսնամնաւ կ'ըլլայ, ինչպէս առ-  
 իւծը իր որջին մէջ.  
 Գարսնակազ կը նսաի աղքատը յափշտակելու հա-  
 մար.  
 Աղքատը կը յափշտակէ իր որոդայթը ձգելով զա-  
 նիկա.  
 10 Ու կծկած կը պատկի,  
 Եւ անանկները անոր ճանկերուն տակ կ'իյնան:  
 11 Իր սրամին մէջ ըստ թէ Աստուած մոռցեր է,  
 Ու իրեալ ծածկեր է որպէս զի բնաւ չուեսնէ:  
 12 Ելիր, ով Տէր, ով Աստուած, ձեռքդ վեր վերցուր,  
 Մի մանար նեղեալները:  
 13 Խնչո՞ւ համար ամբարիշը կ'անարդէ զԱստուած.  
 Իր սրամին մէջ ըստ թէ Պիտի չքննես:  
 14 Դուն աեսար, վասն զի ցաւին ու նեղութեանը կը  
 նայիս

- Քու ձեռքովդ գովարեն հասուցանելու համար:  
Աղքասար ինքինք քեզի կը յանձնէ:  
Որբին օգնականը դուն եւս  
15 Ամբողջամին բազուկը կոտրէ,  
Ու չարին անօրէնութիւնը գինուտէ ձևւու ու աւշգանես:  
16 Տէրը յաւիտեանս յաւիտենից Թագաւոր է:  
Հեթանոսները կորսուած են անօր երկրէն:  
17 Տնանկներուն ցանկութիւնը լսեցիր, ու Տէր.  
Անոնց միաները պիտի հաստատեն, ու քու ականջդ  
պիտի տաս  
18 Որբին ու տնանկն դաստաստանը տեսնելու,  
Որպէս զի երկրի մարդը ա'լ զանձնէ չլափցինէ:

## ՍԱՂՄՈՍ ԺԱ

Գլխաւոր երաժշտին, Սուլմա Դաւթի:

- 1 Տէրոջը ապաւինեցայ.  
Ի՞նչպէս իմ՝ անձիս կ'ըսէք թէ  
Թռչունի պէս գէպի ձեր լեռը թռչէ.  
2 Վասն զի ահա մերաւորները աղեղ լսրեցին,  
Իրենց նետերը լարին վրայ պատրաստեցին,  
Որպէս զի մնութ արէն սիրալ շիտակ եղողներուն նե-  
տեն:  
3 Եթէ չիսերը կործանին,  
Արդարը ի՞նչ պիտի ընէ:  
4 Տէրը իր սուրբ տաճարին մէջ է.  
Տէրոջը աթուուր երկինքն է.  
Անոր աչքերը կը տեսնեն,  
Անոր թարթիները կը քմնեն մարդոց որդիները:  
5 Տէրը կը քննէ արդարը.

- Բայց անոր անձը կ'ատէ ամբարիշալ ու բանութիւն  
սիրողը:  
6 Ամբարիշաներուն վրայ պիտի տեղան որոդայթներ,  
Հուր և ծծումը ու խորշակ.  
Այս գրու ըլու անոնց բաժակին ըստինը:  
7 Քանզի արդար Տէրը արդարութիւնը կը սիրէ,  
Անոր երեսը ուղղին կը նայի:

## ՍԱՂՄՈՍ ԺԲ

Գլխաւոր երաժշտին, Շէմինիթի վրայ, Սալմոն Դաւթի:

- 1 **ՈԼ** Տէր, փրկէ, վասն զի սուրբ չմնաց.  
Վասն զի հաւատարիմերը մարդոց որդիներուն մէջէն  
պակաեցան:  
2 Ամէն մարդ սուր կը խօսի իր ընկերին հետ.  
Շողարորթող շրթունքներով ու կրկին սրաով կը խօ-  
սին:  
3 Տէրը պիտի կորէ ամէն շողարորթող շրթունքները  
Ու մեծախօս լըզուն,  
4 Որմաք լսին թէ Լեզուներովիս պիտի յաղթենք,  
Շրթունքներնիս մերն է. մեր վրայ տիրող ով պիտի  
ըլլու:  
5 Աղքասաներուն զրկանքին ու տնանկներուն հեծու-  
թեանը համար  
Հիմա պիտի ելլեմ, կ'ըսէ Տէրը,  
Աղասանթեան մէջ պիտի գնեմ զանձն որ կը փչուի:  
6 Տէրոջը խօսերը մարդուր խօսքեր են.  
Հողէ բովքի մէջ զատուած

- Ու եօթը անգում մաքրուած արծաթի պէս են:
- 7 Ու Տէր, գուն պիտի պահես զանոնք,
- Ու պիտի պաշտպանես այս ազգէն մինչև յաւիտեան:
- 8 Ամբարիշները ամէն կողը կը պարախին,  
Երբ մարդոց որդիներուն մէջ անարդները բարձրանան:

## ՍԱՂՄՈՍ ԺԳ.

Գլխաւոր երաժշախին. Սալմոն Դաւթի:

- 1 Ու Տէր, մինչև ե՞րբ բոլորին զիս պիտի մասնաս,  
Մինչև ե՞րբ քու երեսդ ինձ պիտի ծածկես:
- 2 Մինչև ե՞րբ մորքին մէջ հոգեր պիտի դնեմ,  
Ամէն օր սրտին մէջ արտամութիւն առնենալ:
- 3 Մինչև ե՞րբ թշնամին իմ վրաս պիտի բարձրանայ:
- 4 Նայէ, ուլ իմ Տէր Աստուածո, ու պատուիսան տուր  
ինձիք.

Լուսաւորէ իմ աչքերս,

Որպէս զի մահուան գունք չքնանամ:

- 4 Զըլլոյ որ թշնամին ըսէ թէ Յաղթեցի անոր.  
Կամ նէ ինձիք էմ կեցողները ինդան իմ սասանելու  
ասենատ:

- 5 Ես քու ողբարմութեանդ յուսացայ:  
Իմ սիրոս քու փրկութիւնովդ պիտի ցնծայ:

- 6 Պիտի երգեմ Տէրոջը,  
Վասն զի ինձիք բարեբարութիւն ըրաւ:

## ՍԱՂՄՈՍ ԺԴ.

Գլխաւոր երաժշախին. Սալմոն Դաւթի:

- 1 Անդգամը իր սրտին մէջ ըստ թէ Աստուած չկայ,  
Ապականեցան ու պիղչ որդին ըըլին:

- Մէկը չկայ որ աղէկութիւն ընէ:
- 2 Տէրը երկնքին նոյեցաւ մարգոց որդիներուն վրայ,  
Որպէս զի աեսնէ թէ կայ արդեօք իմաստուն մէկը  
Որ զԱստուած գնառէ:
- 3 Ամէնը խոտորեցան, մէկուղ անախտան եղան,  
Աղէկութիւն ընող մը չկայ, մէկ ալ չկայ:
- 4 Միթէ չե՞ն ձննչնար ամէն անօրէնութիւն ընազները,  
Որոնք հաց ուտելու պէս իմ ժողվուրդս կ'ուտեն,  
Ու Տէրոջը չեն կոնչեր.
- 5 Այն ատեն շատ վախցան.  
Քանզի Աստուած արդարուներուն ազգին մէջ է:
- 6 Աղքասանին խորհուրդը ամօթավ ըրիք,  
\*Սակայն մենք յայուը Տէրն է:
- 7 Երանի՛ թէ Ախոնէ գար Խորայէլի փրկութիւնը.  
Տէրը իր ժողվուրդը գերութենէն դարձուցած ա-  
անձի:
- 3 ակուր պիտի ցնծայ, ու Խորայէլ սւրախ պիտի ըլլայ:

44224

## ՍԱՂՄՈՍ ԺԵ

- Սալմոն Դաւթի:
- 1 Տէր, ո՞վ պիտի կենայ քու վրանիդ մէջ,  
Ո՞վ պիտի ընակի քու սուրբ լեռունդ վրայ:
- 2 Ան որ անմեղութեամբ կը քալէ, ու արդարութիւն  
կը գործէ,  
Եւ ճշմարտութիւն կը խօսի իր սրտին մէջ:
- 3 Ան որ լեզուով չըրպարտեր,  
Ծնկերին չարութիւն չըներ,

\*Կամ, Քանզի



Եւ իր գբացին վրայ նախատինք չդներ.

4 Որուն առջև անարդուած է չարադրձը,  
Բայց աստուածավաները կը պատուէ.

Երդում կ'ընէ իր \*վնասին ու չդառնար.

5 Իր արծաթը վարձբով չտար,

Ու անմեղին դէմ կաշառք չառներ:

Ու որ ասոնք կ'ընէ, յաւիտեան պիտի չսասանի:

## ՍԱՂՄՈՍ ԺԶ

ԵՐԳ ԴԱՎԻԹԻ

1 Ու Աստուած, զիս պահէ,  
Վասն զի քեզի յուսացայ:

2 Տէրջը լսի, իմ Տէրը դուն ես,  
Աւսոնց քեզի բարիք մը չունիմ:

3 Երկրի մէջ եղող ուուրբերուն ու պատուականներուն՝  
Անոնց վրայ է իմ բոլոր հաճութիւնս:

4 Անոնց ցաւերը պիտի շատնան, որոնք ուրիշի մը  
Կ'արսորան.

Անոնց արբենի նուէրները պիտի չնուէրեմ,

Ու անոնց անունները շրթունքներուս վրայ պիտի  
չսունեմ:

5 Տէրն է իմ ժառանգութեանս ու բաժակիս բաժինը.  
Իմ վիճակս դուն պիտի պահէս:

6 Վիճակներ եւան ինծի զւուրծալի ու կ'ընու մէջ,  
Իրու իմ ժառանգութիւնս ինծի գեղեցիկ եղաւ:

7 Պիտի օրչնեմ Տէրը որ զիս խրատեց.  
Նաև իմ երիկամունքներս գիշերուան մէջ ինծի կը  
սորվեցնեն:

\*Կամ, դրացին

8 Ամէն ատեն Տէրը իմ առջեւս գրի.

Որովհէտեւ իմ աջ կաղմն է, պիտի չսասանիմ:

9 Ասոր համար սիրտս ուրախ եղաւ ու \*փառքս բերկ-  
րեցու,

Ու մարմինս այլ յուսով պիտի հանգստանսց:

10 Վասն զի իմ անձս դգերեզմանին մէջ պիտի չլու-  
զուս:

Ու քու առւրսիդ ալ ապականութիւն տեսնել պիտի  
չտառ:

11 Կենաց Ճամբան ինծի պիտի ցուցնես.

Երեսիդ առջև լցուն ուրուխութիւնն կայ,

Քու աջ կողմդ միշտ հաճութիւններ կան:

## ՍԱՂՄՈՍ ԺԷ

Աղօթք ԴԱՎԻԹԻ

1 Ու Տէր, լու արդարութիւնը,  
Մարի ըրէ իմ աղաղակս,

Ականջ գիր աղօթքիս,

Որ խարերաց շրթունքներով չէ:

2 Իմ գատասասան քու երեսէդ թող ելլէ.

Քու աչքերդ ուղղութիւնը թող տեսնեն:

3 Իմ սիրտս փորձեցիր, գիշեր տան քննեցիր.

Զիս քառակ փորձեցիր ու բան մը չգտար.

\*Միաբա գիր որ բերանս պատուիրանազանց ըլլաց:

4 Մարդոց գործերուն նայելով

\*Ու յունչա, անձս, վամ, լեզըւս

†կամ, գժոկիմն

‡կամ, բերանս իմ խորհուրդէս պիտի չհեռանաց

- Քու շրմունքներուդ խօսերովիը ես բռնաւորին ճամբ-  
րաներէն զգուշացյաց:
- 5 Իմ՝ քայլերս քու ճամփաներուդ մէջ պահէ,  
Որպէս զի իմ՝ գնացքներս չսասանին:
- 6 Ես քեզի կանչեցի, վասն զի ինձի պատսափան պիտի  
տաս, ով Աստուած:
- Խոնդրչեցուր ինձի քու ականջդ, լսէ իմ խօսքս:
- 7 Ալբանչելի կերպով՝ քու ողբրմութիւններդ ցուցուր,  
Դուն որ Շեզ յուսացողները աջ ձեռքովդ կ'ազատես  
Հակառակ կեցաղներէն:
- 8 Աչքի բբիւ պէս զիս պահէ,  
Թեւերուդ հսկանաւորութեանը տակ զիս ծածկէ
- 9 Ինձի տառապանք առուոդ ամբարիշաներուն երեսէն:  
Իմ՝ անձիս թշնամիները զիս պաշարեցին:
- 10 Իրենց պարարտութիւնով ծածկուեցան,  
Իրենց լերնալի ամբարտաւանութեամբ խօսեցան:
- 11 Հիման քայլերնաւս չըսո կողը պատելով՝  
Աչքերնին եւ քայ անկեցին գետինը զարնելու համար,
- 12 Առիւծի պէս որ կը փափաքիք գիշատել.  
Առիւծի կորիւնի պէս որ գարսանակալ կ'ըլլայ:
- 13 Ելիր, ով Տէր, անոր առջև ինչէ օդասութեան համիր,  
Զամիկս գետինը զարկ.  
Քու սրադ փրկէ իմ՝ անձս ամբարիշաներէն,
- 14 Քու ձեռքալի մարդոցմէն, ով Տէր,  
Աշխարչի մարդոցմէն՝ որսնց բաժինը ոյս կեանքին  
մէջ է,
- Ու մնանց փորիրը շատեմարաններէդ կը լեցնես.
- \*Անոնց որդիներն աւ կը կշտանան,

- Ու իրենցմէ առելցածը իրենց աղօցը կը թողուն:
- 15 Իմ՝ ես արդարութեամբ պիտի տեսնեմ՝ քու երեսգ,  
Երբ արթնամ՝ քու գէմքէդ պիտի կշտանամ:

## ՍԱՂՄՈՍ ԺԸ

Գլխաւոր երածշաբն, Տէրոյն ծառային Դաւթէ Սաղմոս, որ ըստ  
Տէրոյն այս երգին խօսերը այն օրը որ Տէրը աղասեց զանիկա՞իը  
ամէն թշնամիներուն ձեռքէն, և Սաւուղի ձեռքէն ու լսու,

- 1 Ով Տէր, իմ՝ զըրութիւնս, քեզ պիտի սիրեմ:  
2 Տէրը իմ վէմս, ամրութիւնս ու քրկիչս է:  
Իմ՝ Աստուածս իմ պարփակս է, ես անոր կը յուսամ,  
Անիկս իմ վաշանս ու իմ փրկութեանս եղջիւրը  
Ու իմ բարձր աշտարակս է:  
3 Օրչնեալ Տէրը կը կանչեմ,  
Ու իմ թշնամիներէս կ'աղասիմ:  
4 Մահուան լարերը իմ բալըրակս առին,  
Ու անօրէնութեան հեղեղները զիս վախցուցին:  
5 Գերեզմանին լարերը զիս պաշտրեցին,  
Ու մահուան որոդայթները իմ առջեւս առին:  
6 Իմ՝ նեղութեամա մէջ Տէրոյն կանչեցի,  
Ու իմ՝ Աստուծոյս աղաղակեցի,  
Անիկս իր տաճարէն իմ ձայնս լոեց,  
Ու իմ աղաղակս անոր առջե՝ անոր ականջը հասաւ,  
7 Այն ատեն երկիր սասանեցաւ ու գողաց,  
Ու լեռներուն հիմերը շարժեցան ու սասանեցան,  
Քանիդ Անիկս բարիկացաւ:  
8 Անոր քիթէն ծուխ ելաւ,  
Ու բերնէն մաշող կրակ.  
Անկէ կոյժակներ բռնկեցան.

- 9 Եւ անիկա երկինքը խոնարհեցուց ու իջաւ,  
Եւ անոր ոսքերուն տակ մառափուղ կար:
- 10 Ու քերպվէի մը զբայ ելաւ ու թռաւ,  
Ու հովին թեւերուն զբայ սլոցաւ:
- 11 Խառարդ իրեն ծածկոյթ դրաւ,  
Ու իր բոլորտիքը իրեն բնակարան.  
Թանձը ջուրերը ու երկինքի ամպերը ըրաւ:
- 12 Անոր առջեւ եղող պայծառութենին անոր ամպերը  
անցան  
Կարկուտավլ ու կրակի կայծակներով.
- 13 Ու Տէրը երկինքին մէջ որոտաց,  
Եւ բարձրեալը իր ձայներ լոււ տոււաւ  
Կորկուտավլ ու կրակի կայծակներով:
- 14 Եւ իր նետերը զրկեց ու զանոնք ցրուեց,  
Եւ շատ կայծակներ զրկեց ու զանոնք խռովեցուց:
- 15 Եւ քու յանդիմնութեւնովդ, ով Տէր,  
Քու բարկութեանդ հովին փէելավը  
Ջուրերուն յատակները երեւցան,  
Ու աշխարհի հիմերը յայտնուեցան:
- 16 Բարձրէն զրկեց ու զիս բռնեց,  
Եւ շատ ջուրերէն զիս հանեց:
- 17 Իմ զօրեղ թշնամիէս ու զիս տառըներէն աղատեց  
զիս.  
Վասն զի ինձմէ զօրաւոր էին:
- 18 Իմ նեղութեանս օրը իմ առջեւս առին,  
Բայց Տէրը ինձի հասուարանիւն գաւազան եղաւ,
- 19 Եւ զիս լոյնարձակ տեղ մը հանեց,  
Ու զիս ազատեց, վասն զի ինձի հաւնեցաւ:
- 20 Տէրը իմ արդարութեանս պէս ինձի փոխարէն կու  
տայ:

- Իմ ձեռքերուս մաքրութեանը համեմատ հատու-  
ցում կ'ընէ ինձի.
- 21 Վասն զի Տէրոջը ճամբաները պահեցի,  
Ու իմ Աստուծոյ գէմ ամբարջութիւն չըրի:
- 22 Քանզի անոր ամէն դատաստանները իմ առջեւս էին,  
Ու անոր օրէնքները ինձմէ չչեւացուցի:
- 23 Նաև անոր առջեւ կատարեալ եղաւ,  
Ու իմ անօրէնութենէս զգուշացայ:
- 24 Եւ Տէրը ինձի հատուցում ըրաւ իմ արդարութեանս  
համեմատ,  
Իմ ձեռքերուս մաքրութեանը համեմատ՝ որ անոր  
առքերուն առջեւ է:
- 25 Ողորմածին հետ ողորմած կ'ըլլաս,  
Կատարեալ մարդուն հետ կատարեալ կ'ըլլաս.
- 26 Մաքուրին հետ մաքուր կ'ըլլաս,  
Ու ծուռին հետ կը ծորիս
- 27 Վասն զի գուն վշատած ժողովսւրդը կ'ազատես,  
Ու ամիաբառաւան աչքերը կը ցածցնես:
- 28 Քանզի դուն իմ ճրագս կը վառես.  
Իմ Տէր Աստուծս իմ խաւարո կը լուսաւորէ:
- 29 Վասն զի քեզմով գունդի մը զբայ կը վազեմ,  
Ու իմ Աստուծովս պարփառէ կ'անցնիմ:
- 30 Աստուծոյ ճամբան կատարեալ է.  
Տէրոջը խօսքերը փորձուած են.  
Անիկա ամէն իրեն յուսացողներուն ասպար է:
- 31 Քանզի Տէրոջմէն զատ ո՞վ է Աստուծ,  
Կամ մեր Աստուծմէն զատ ո՞վ է վէմ:
- 32 Աստուծ է որ ինձի զօրութիւն կը հագցնէ,  
Ու իմ ճամբան կատարեալ կ'ընէ:  
33 Իմ սոգերս եղջերուի սրբերան պէս կ'ընէ,

- Ու իմ՝ բարձր տեղերուս վրայ զիս կը կսյնեցնէ:
- 34 Զեւքերս պատրապմի կը վարժէ,
- Ու իմ՝ \*բաղսութեներս պղնձէ աղեղ կը լարեն»:
- 35 Խճի նաև քու բրկովթեանդ ասպարը տուիր.
- Եւ քու աշ ձեռքդ զիս զօրացուց:
- Ու քու քաղցրութիւնդ զիս մեծուց:
- 36 Իմ՝ քալելու ճամկաս ներքեւս լայնցուցիր,
- Ու իմ՝ սոքիս յօդուածները չսասանեցան:
- 37 Իմ՝ թշնամիներս հալածեցի ու անոնց հասոյ,
- Ու ես չպարձայ՝ մինչև որ զանոնք հատուցիր.
- 38 Զանոնք գետմնի զարկի, ու կանգնելու կարող չեղան.
- Անոնք իմ՝ սոքերուս առկ ինկան:
- 39 Ու պատերազմի համոր ինձի զօրութիւն հագցուցիր,
- Իմ՝ վրաս ելլողները տակու ձգեցիր:
- 40 Ու իմ՝ թշնամիներուս դկանակը ինձի բարձրեւառուիր,
- Որպէս զիս զիս ասաողները ջարդեմ:
- 41 Աղաղաղիցին, բայց աղասող չկար.
- Տէրովը ուղարկեցին, բայց անոնց պատասխան չտուաւ:
- 42 Ու զանոնք հօվին առջեկէն մշտած փոշիի պէս մանրեցի,
- Եւ փողցներուն ցեկան պէս մէկդի ձգեցի զանոնք:
- 43 Ճողովուրդին կուներէն զիս ապաստեցիր,
- Ու զիս աղդերու գլուխ ըրիր.
- Իմ՝ չդիտած ժաղովուրդս ինձի ծառուցից:
- 44 Իրենց ականջներով լածնուռն պէս ինձի հնավանդ դեցան:
- Օտարները ինձի իսոնար հութիւն ըրին»:

\*կամ, բաղաւեկներովս պղնձէ աղեղ մը կոտրուի  
†կամ, պարանցը ինձի տուիր  
‡Եր, առեցին

- 45 Օտարները տկարացան,  
Եւ իրենց պահութած տեղերէն գողացին:
- 46 Տէրը կենդանի է, ու իմ՝ Վէմս օրհնեալ ըլլայ,
- Եւ իմ գրկութեանս լասուածը բարձր ըլլայ:
- 47 Ասուած է որ իմ՝ վրեժս կը ինդրէ,
- Ու ժաղովուրդները ինձի կը հնավանդեցնէ:
- 48 Իմ՝ թշնամիներէս զիս կը փրկէ.
- Կաև զիս իմ՝ վրաս ելլողներէն առելի բարձրացուցիր,
- Ու բանաւոր մարդէն զիս ազատեցիր:
- 49 Անոր համոր, ով Տէր, աղգերուն մէջ քեզ պիտի  
գովեմ:
- Եւ քու անուանդ ստղման պիտի երգեմ:
- 50 Իր թագաւորին փրկութիւնները մերձցնողը
- Ու իր օծեալին, Դաւելիթի, ու անոր սերունդին  
Յաւետեան սղումնեթիւն ընողը Ան է:

## ՍՈՂՄՈՍ ԺԹ

Գլուխոր երաժշախն. Ստղման Դաւթի:

- 1 Երկինք Ասուածոյ փառքը կը պատմէ,  
Ու երբինք հաստատութիւնը անոր ձեռքերուն դոր-  
ծերը կը ցուցնէ:
- 2 Օրը օրին կը յայտնէ խօսքը,  
Ու զիշերը գիշերին կը ցաւցնէ զիտութիւնը:
- 3 Զկայ զբայց ու չկամ խօսքեր.  
Անոնց ձայնը չսառեիր:
- 4 Բայց ամէն երկիր ելլաւ անոնց հնչեալ,  
Ու մինչև աշխարհին ծայրը՝ անոնց խօսքը  
Անոնց մէջ արեւելն համոր վրան մը կանդնեց.

- 5 Ու \*անիկա իր առագաստէն ելած փեսոյի պէս է,  
Հզօր մարդու պէս իր ճամբան վաղելով կ'ուրախանոյ;  
6 Անոր ելքը երկինքի ծայրէն է,  
Ու անոր աշջանը մինչև անոնց ծայրերը,  
Եւ անոր ատպութենէն բան մը չծածկուիր:  
7 Տէրոջը օրէնքը կատարեալ է, հոգին կը նորոգէ.  
Տէրոջը վկայութիւնը ճշմարիտ է, տգէտը իմաստուն  
կ'ընէ:  
8 Տէրոջը կանմները շիտակ են, սիրալ կ'ուրախայնեն.  
Տէրոջը պատուիրանքները պայծառ են, աչքերուն  
լցոյ կու տան:  
9 Տէրոջը վախը սուրբ է, յաւիտեան կը մնայ.  
Տէրոջը գատառատանները ճշմարիտ ու բոլորին ար-  
դար են:  
10 Ցանկալի են անոնք սոկիէն ու շատ փորձուած սոկիէն.  
Մեղրէն անոյշ են, ու խորիսիէ կաթած մեղրէն:  
11 Նաև քու ծառադ աննցմավ կը խրասուի,  
Ու զանոնք պաշելուն փարձըը շատ է:  
12 Ո՞վ կընոյ միտք առնել իր յանցանքները,  
Ծածուկ մրգերէն զի մաքրէ.  
13 Ամբարտաւոն մրգերէն ալ պահէ քու ծառադ.  
Թող անոնք ինձի չտիրեն.  
Այն ասեն անմեղ կ'ըլլամ,  
Ու կը մաքրուիմ մեծ անօրէնութենէ:  
14 Բերնիս խօսքերը ու սրաիս խորհուրդը  
Քու առջեւդ ընդունելի ըլլան,  
Ով Տէր, իմ վէմ ու փրկիչս:

\*Այսինքն, արեւը

## ՍԱՂՄՈՍ Ի

Գլխաւոր երաժշտին. Սաղմոս Դաւթի:

- 1 Կեղութեան օրը Տէրը պատասխանէ քեղի,  
Յակոբի Աստուծոյն անունը քեղի պաշտպանէ.  
2 Օգնութիւն զրկէ քեղի սուրբ աեղէն,  
Ու Արօնէ զօրացնէ քեղի.  
3 Քու ամէն ընծաներդ յիշէ,  
Եւ քու ողջակէզներդ լնդունի. (Աէլա.)  
4 Քու սրտիդ համեմատ քեղի տայ,  
Եւ քու ամէն խորհուրդներդ կատարէ:  
5 Քու փրկութիւնովդ պիտի ուրախուանք,  
Ու մեր Աստուծոյն անունովը գրօշակ վերցնենք,  
Տէրը կատարէ քու ամէն ինդրուածքներդ:  
6 Հիմա գիտցոյ որ Տէրը կը պահէ իր օծեալը.  
Անոր պատասխան կու տայ իր սուրբ երկինքէն  
իր աջ ձեռքին փրկութեան ուժովլի:  
7 Ոմնոնք կառքերու, և ոմնոնք ալ ձիերու Քառականին,  
Բոյց մենք մեր Տէր Աստուծոյն անունը պիտի յիշենք:  
8 Անոնք կորացան ու ինկան,  
Բոյց մենք ելանք ու շիտակ կոյնեցանք:  
9 \*Ով Տէր, փրկէ թագուարը,  
Պատասխան առւր մեզի մեր կանչելու օրը":

\*Կամ, Ով Տէր, փրկէ. Թագուարը մեզի պատասխան  
տայ մեր կանչելու օրը

## ՍԱՂՄՈՍ ԻԱ.

Գլխաւոր երաժշտին. Սաղման դաւթի:

- 1 **Ով** Տէր, քու զօրութիւնովդ թագաւորը ուրախ պիտի ըլլոյ,
  - 2 Ոնոր պատին փափաքը իրեն տուիր,
  - 3 Անոր շրթունքներուն ինդիբըը էր՞ չարգիլեցիր:
  - 4 Վասն զի լարսութեան օրհնութիւններով անոր հասար.
  - 5 Ոնոր գլուխը մաքուր ոսկիէ պասկ դրիր:
  - 6 Քիշլէ կեմանք ինդրեց,
  - 7 Ու անոր երկոյն օրեր տուեր յաւիտեանս յաւիտենից:
  - 8 Անոր փառքը մեծ է քու փրկութիւնովդ.
  - 9 Փառք ու վզբելչութիւն դրիր անոր փայ:
  - 10 Վասն զի օրհնութիւնները անոր վրայ հաստատեցիր յաւիտեան.
  - 11 Ուրախութեամբ ուրախ ըրիր զանիկա քու երեսիդ առջև:
  - 12 Վասն զի գուն աննաց կոնակը ետ պիտի դարձնեա.
  - 13 Ով Տէր, քու ուժովդ բարձր եղիր.
- Պիտի երգենք ու սաղման ըսենք քու զօրութեանդ:

## ԳԻՒԲԻ ՍԱՂՄՈՍՍՅ

- 1 Ու կրտկը պիտի ուտէ զաննոք:
- 2 Աննաց պատովդ երկրէ պիտի կորսնցնեա,
- 3 Աննաց սերունդը մարդոց որդիներէն:
- 4 Վասն զի քեզի գէմ չարութիւն պատրաստեցին.
- 5 Նենգութեան խորհուրդ ըրին, բայց կարող չեղան քարարէւ:
- 6 Վասն զի գուն աննաց կոնակը ետ պիտի դարձնեա.
- 7 Բայց աւուրք աննաց երեսին գէմ լարերուդ վրայ պիտի պատրաստեա:
- 8 Ով Տէր, քու ուժովդ բարձր եղիր.

## ՍԱՂՄՈՍ ԻՅ

- Գլխաւոր երաժշտին, Այէլէւ Շահարի վրայ, Սաղման Դաւթի:
- 1 **Սաստուած իմ**, Սաստուած իմ, զիս ինչու թողուցիր,
  - 2 Ով իմ Սաստուածս, ցորեկը Իւշ կոնչեմ, ու չեզ պատասխաներ.
  - 3 Եւ գեշերը Էւ Խանչեմ ու չեմ դադարիր:
  - 4 Բայց գուն առուրք ես,
  - 5 Ով Խորսյէւ գովարանութեանց մէջ ընակող :
  - 6 Մեր հայրերը քեզի յաւացան,
  - 7 Յուսացան, ու փրկեցիր զաննոք:
  - 8 Բերի աղաղակեցին ու աղատեցան,
  - 9 Բերի յաւացան ու չամչցան:
  - 10 Բայց ես որդ Եմ ու մարդ չեմ.
- Մարդոց մէջ քամահրուած, ու ժողովաւրդներուն մէջ անարգուած:

\*ԵԲԻ, պիտի կլլէ

- 7 Ամէն զիս աեւոնողները զիս ծաղր կ'ընեն.  
Երթունք կը բանան, գլուխ կ'երեցնեն,  
8 Էւէլւէ, Տէրոջը յուսացաւ, ու թող փրկէ զանիկա.  
Թող ապատէ զանիկա, վան զի անոր հաւնեցաւ,  
9 Բայց զիս օժռ արգանդէն հանողը դուռ ես.  
Մօրս ծիծը եղած ատենս դուռ ինձի յըս առւիր:  
10 Արգանդէն ես քեզի յանձնուեցայ.  
Իմ մօրս որովայնէն դուռ ես իմ Աստուածաւ:  
11 Մի՛ հեռանար ինձմէ, վան զի նեղութիւնը մօտ է,  
Վասն զի օգնող մը չկայ:  
12 Հաստ զուարակներ չորս կողմն առին,  
Բասանի ցուլերը զիս պաշտրեցին.  
13 Իրենց բերանը իմ՝ վաստ բացին՝  
Յափշտակող ու մանչող առիւծի պէս:  
14 Զուրի պէս թափսւեցայ,  
Ու ամէն սոկոներս քակուեցան.  
Սիրոս մամի պէս եղաւ,  
Հալեցաւ փորիս մէջ:  
15 Զորացաւ իմ յժս հողէ ամանի մը պէս,  
Ու լեզուս քիմքիս փակաւ.  
Եւ զիս մահուան հողը դրիր:  
16 Վասն զի շուները չորս կողմն առին,  
Զարերուն ժողովքը զիս պատեցին,  
Զեռքերս ու ոտքերս ծակեցին:  
17 Իմ ամէն սոկոներս կընամ՝ համբել.  
Անոնք կը նային, կը աեսնեն զիս:  
18 Իմ հանդերձներս իրենց մէջ կը բաժնին,  
Ու պատմուճանիս վասյ վիճակ կը ձգին:  
19 Բայց դուռ, ով Տէր, մի հեռանար ինչք.  
Ով իմ զօրութիւնս, շուտով ինձի օգնութեան հասիր.

- 20 Իմ անձս առւրէն ազատէ,  
Ու \*կեռնքո՞ շնոր ձեռքէն:  
21 Փրկէ զիս առիւծին բերնէն,  
Ու ինձի պատասխան առւր †մեղջերուներուն եղ-  
ջեւներէն:  
22 Քու անունէն եղբայրներուս պիտի պատմեմ,  
Ժողովքին մէջ քեզ պիտի դովեմ:  
23 Ով Տէրոջէ վախցողներ, գովեցէք զանիկա.  
Ով Յակոբի բոլոր զաւակները, փառաւարեցէք զա-  
նիկա,  
Ու վախցէք անկէ, Խորսէլի բոլոր զաւակները:  
24 Վասն զի չանարդեց ու չքամոհրեց առաւապեալին  
‡տառապանքը,  
Ու երեսը անկէ չդարձուց.  
Հապս իրեն կանչած ատենը լսեց:  
25 Քեզմավ պիտի ըլլաս իմ դովութիւնս մէծ ժողովքին  
մէջ.  
Իմ ուխտերս անկէ վախցողներուն առջև պիտի կա-  
տարեմ:  
26 Տնանկները պիտի ուտեն ու կշտանան.  
Տէրը պիտի գովեն զանիկա փնտուղները,  
Զեր սիրուլ յաւիտեան պիտի ազրի:  
27 Պատի յիշեն ու Տէրոջը գառնան երկրի ամէն ծայրերը,  
Ու քու առջեւդ երկրագութիւն պիտի ընեն ազգե-  
րուն ամէն առհմերը,  
28 Վասն զի թագաւորութիւնը Տէրոջն է,

\*Եբը. միամնար

†Կամ, վայրի ցուլերուն

‡Կամ, աղաղակը

- Ու ան կը տիրէ ազդեցուն վրայ:
- 29 Երկրի ամեն պարաբռները պիտի ուտեն ու երկրպաշ  
գութիւն պիտի ընեն.
- Այս հողը իջնողները ծունկ պիտի կրկնեն անոր  
առջև,
- Ու ան ալ որ իր անձը չապեցներ:
- 30 Զաւակը պիտի ծառոցէ անար.
- Ո- Տէրոջը վրայով պիտի պատմուի հալու դարուն  
մէջ:
- 31 Պիտի գան ու անոր արդարութիւնը պիտի պատմեն  
Այս ժողովուրդին, որ պիտի ծնանի.  
Վասն զի այս բանը ան կատարեց:

## ՍԱՂՄՈՍ ԻԳ

Սաղմոս Դաւթի:

- 1 Տէրը իմ հովիւս է.  
Ես բանէ իւ կարօսութիւն պիտի չունենամ:
- 2 Զիս խոսաւէտ արաներու մէջ կը պառկեցնէ.  
Հանդարտ ջուրերուն քալ ինձի կ'առաջնորդէ.
- 3 Հադիս կը նորոգէ.  
Իր անուանն համար արդարութեան ճամբաներուն  
մէջ կ'առաջնորդէ ինձի:
- 4 Քէկէ մահուան շուքի ձորին մէջ ալ պալսիմ,  
Չարէն պիտի չվախնամ,  
Վասն զի գուն ինձի հետ ես,  
Քու ցուպդ ու գաւաղոնդ՝ անոնք զիս պիտի միի-  
թարեն:
- 5 Սեղան կը պատրաստես իմ առջեւս իմ թշնամինե-  
րուս դիմաց.

- իմ գլուխս իւզավ կ'օծես,  
իմ բաժակս իխոս լեցուն է:
- 6 Ցիրաւի բարերարութիւնը ու ողորմութիւնը ինձի  
հետ պիտի գան  
Կեանքիս բալոր օրերուն մէջ,  
Ու շատ օրեր Տէրոջը տունը պիտի բնակիմ:

## ՍԱՂՄՈՍ ԻԴ

Սաղմոս Դաւթի:

- 1 Տէրոջն է երկիր ու անոր լիութիւնը,  
Աշխարհ ու անոր բնակիչները:
- 2 Վասն զի ինք անոր չիմերը ծովերուն վրայ ձգեց,  
Ու զանիկա գետերուն վրայ հասաւանեց:
- 3 Ո՞վ պիտի եղէ Տէրոջը լեռը,  
Կամ' ո՞վ պիտի կենաց անոր սուրբ տեղը:
- 4 Զեռքերով ասւրբը ու սրասով մաքուրը,  
Որ սասնաթեան անձնասուր չեղաւ,  
Ու նենգութեամի երգուրմ չըրաւ.
- 5 Անիկա Տէրոջմէն օրչնութիւն պիտի ստանայ,  
Ու իր փրկութեամը Աստաւծէն՝ արդարութիւն:
- 6 Զանիկա ինսաւողներուն ցեղը պյս է.  
Քու երեսդ ինչորովները \*Յակոբն է: (Աէլաւ)
- 7 Ով գոներ, զլուխնիդ վեր վերցուցէք:  
Ու վերցուեցէք, ով յաւիտենական գոներ,  
Որպէս զի փառաց Թագաւորը մանէ:
- 8 Ո՞վ է պյս փառաց Թագաւորը,  
Կարող ու հզօր Տէրը,  
Պատերազմի մէջ հզօր Տէրը:

\*Լամ, ով Յակոբ

- 9 Ով գոներ, գլուխնիդ վեր վերցուցէք.  
 Ու վերցուեցէք, ով յաւիտենական դռներ,  
 Որպէս զի փառաց Թագաւորը մտնէ;  
 10 Ո՞վ է այս փառաց Թագաւորը,  
 Զօրքերուն Տէրը,  
 Ինքն է փառաց Թագաւորը (Սէլլու)
- ՍԱՂՄՈՍՍՅ
- ԻԵ
- Սահմանադրութիւն
- 1 Ով Տէր, իմ անձո քեզի վերցուցին  
 2 Ով իմ Աստուածո, քեզի յուսուցայ. թող չամշնամ,  
 Ու թշնամիներս իմ վրաս չցնծան:  
 3 Նաև ամէն քեզի սպասողները թող չամշնան.  
 Ուայնութեամբ անօրէնութիւն ընողները թող  
 ամշնան:  
 4 Ով Տէր, քու ճամփաներդ ցուցուր ինծի,  
 Քու շաւելներդ սորվեցուր ինծի:  
 5 Քու ճշմարտութեանդ մէջ ինծի առաջնորդէ ու  
 սորվեցուր ինծի,  
 Քոնզի գուն ևս իմ վրկութեանս Աստուածը,  
 ևս քեզի կը սպասեմ՝ ամէն օր:  
 6 Ով Տէր, քու գթութիւններդ ու ողըրմութիւններդ  
 միշէ,  
 Վան զի յաւիտենական են:  
 7 Մանկութեան մեղքերս ու յանցակներս մի յիշէր,  
 Հասոց քու ողըրմութիւննովդ զիս յիշէ  
 Քու բարութեանդ համար, ով Տէր:
- 8 Տէրը բարի և ուղիղ է.  
 Անոր համար մեղաւորներուն կը սորվեցնէ ճամփան:  
 9 Դատաստանի մէջ պիտի առաջնորդէ հեղերուն,

- Ու իր ճամփան հեղերուն պիտի սորվեցնէ:  
 10 Տէրովը բոլոր ճամփաները ողըրմութիւն ու ճշմար-  
 տութիւն են  
 Իր ուխուը ու վկայութիւնները պահողներուն:  
 11 Ով Տէր, քու անուանդ համար  
 Ներէ իմ անօրէնութիւնս, \*վասն զի մեծ է:  
 12 Ո՞վ է այն մնորդը որ Տէրովընէն կը վախնայ.  
 Ահա անոր պիտի սորվեցնէ իր ընարած ճամփան:  
 13 Անոր անձը բարութեան մէջ պիտի ընտիփ,  
 Ու անոր սերտնովը երկիրը պիտի ժամանգէ:  
 14 Տէրովը ընտանութիւնը իրում վախցոներուն հետ է,  
 Ու իր ուխուը անոնց կը սորվեցնէ:  
 15 Իմ աշքերս ամէն առեն Տէրովըն կը նայէն,  
 Վասն զի իմ սորքերս սորվայթէն ան պիտի հանէ:  
 16 Ինձի գարձիր ու սորմանէ ինձի,  
 Վասն զի մինակ ու վշասցած եմ:  
 17 Արտիս նեղութիւնները շատցան,  
 Իմ վիշտերէս զիս հանէ:  
 18 Իմ նեղութեանս ու տառապանքիս նայէ,  
 Ու բոլոր մեղքերս ներէ:  
 19 Տես իմ թշնամիներս, վասն զի շատցան,  
 Ու անիրաւ տառելութիւնով զիս ատեցին:  
 20 Պահէ իմ անձս ու փրկէ զիս,  
 Թող չսմինամ, վասն զի քեզի յուսացայ:  
 21 Կասորելութիւնը և ուղութիւնը զիս թող պահէն,  
 Վասն զի քեզի սպասեցին:  
 22 Ով Աստուած, փրկէ Խորսէլը  
 Իր ամէն նեղութիւններէն:

## ՍԱՂՄՈՍ ԻԶ

Սաղմոս Գառթի

- 1 Ով Տէր, զիս դատէ,  
Վասն զի իմ անարատութիւնովս քալեցի,  
Տէրովը յուսացայ, պիտի չսասանիմ:
- 2 Ով Տէր, զիս փորձէ ու քննէ,  
Փորձէ իմ երթկամունքներս ու սիրոս  
3 Վասն զի քու ողջորմութիւնդ իմ աչքերուս առջև է,  
Ու քու շշմարտութեանդ մէջ քալեցի:
- 4 Ունայն մարդոց չետ չնասայ,  
Ու կեղծաւորներուն չետ պիտի չխառնուիմ:
- 5 Զարերուն ժողովքը տառեցի,  
Ու ամեարիշաններուն չետ պիտի չնասիմ:
- 6 Անմեղութիւնով ձեռքերս պիտի լուամ,  
Եւ քու սեղանիդ չորս կողմը պիտի պտըաիմ: ով  
Տէր:
- 7 Որպէս զի շնորհակալութեան ձայնը լսել տամ,  
Ու քու տան սքանչելիքներդ պատմեմ:
- 8 Ով Տէր, սիրեցի քու տանդ բնակութիւնը,  
Եւ քու փառքիդ կեցած տեղը:
- 9 Մի կորոնցներ իմ անձս մեղաւորներուն չետ,  
Ու իմ կեռներ՝ արիւնաշեղ մարդոցը չետ,
- 10 Որոնց ձեռքերուն մէջ անօրէնութիւնն կայ,  
Ու անոնց աջ ձեռքը կաշառքալ լեցուն է:
- 11 Բայց եւ իմ անարատութիւնովս պիտի քալեմ:  
Զիս փրկէ ու ինծի ողջոմէ:
- 12 Իմ սպա շխտակութեան մէջ կը կենայ,  
Ժողովքներուն մէջ Տէրը պիտի օրհնեմ:

## ՍԱՂՄՈՍ ԻԵ

Սաղմոս Գառթի:

- 1 Տէրը իմ լցոս ու գրկութիւնս է,  
Ես ուրկէ պիտի վախնամ.  
Տէրը իմ կեռնքիս ազաւէնն է,  
Ես ուրկէ պիտի դողամ:
- 2 Զարերուն իմ մարմինս ուռեկըու համար ինծի մօտեցած տանենը  
իմ նեղիներս ու թշնամիներս սահեցան ու ինկան:  
3 Եթէ վրաս զօրքի բանակ ելլէ,  
Ալիսոս պիտի չվախնայ,  
Եթէ վրաս պատերազմի պատրաստութիւն ըլլոց,  
Անով աւ ես վասահ պիտի ըլլամ:  
4 Բան մը կը ինսդրեմ Տէրոջմէն,  
Ռո տափկա կ'աղոչէմ,  
Որ կեռնքիս բայսը օրերը  
Տէրոջը տանը մէջ բնակիմ  
Տէրոջը վայելչութիւնը տեսնելու,  
Ու անոր տաճարին մէջ զիս+ ինդրելու համար:  
5 Վասն զի չսր օրուան մէջ  
Իր բնակարանին մէջ զիս պիտի պահէ,  
Իր վրանին ծածկութով զիս պիտի ծածկէ,  
Վէմի վրայ պիտի վերցնէ զիս  
6 Ու հիմն իմ գլուխո պիտի բարձրանայ  
Իմ բալորտիս եղող թշնամիներուս վրայ,  
Ու անոր վրանին մէջ ուրախութեան ձայնով զոհէր  
պիտի մասուցանեմ.  
Պիտի երգեմ ու սաղմոս պիտի ըսեմ Տէրոջը

- 7 Ով Տէր, ձայնս լու կանչելու տաենս,  
Ու ողբոմի՛ և պատասխան տուր ինծի՛  
8 Խմ՝ երես փնտուցեք ո՞ւ ընէ՛,  
Խմ՝ սիրառ քեզի ըստաւ, Քու երեսդ պիտի փնտուեմ,  
ով Տէր՛  
9 Քու երեսդ ինծմէ մի ծածկեր,  
Բարկութիւնով ծառադ մէկդի մի ձգեր.  
Խնծի օգնական եղար, զիս մի մերժեր,  
Եւ զիս մի թուղար, ալ իմ՝ փրկութեան Աստուածը<sup>1</sup>  
10 Թէկ հայրս ու մայրս զիս թուղաւն,  
Բայց Տէրը զիս պիտի ըստունի՛  
11 Ով Տէր, քու ճամփադ ինծի արվեցուր,  
Ու շիտակ ճամբուն մէջ ինծի առաջնորդէ թշնամի-  
ներուս համար։  
12 Զիս իմ՝ թշնամիներուս կամքին մի մատներ,  
Վասն զի իմ՝ վրաս տուտ վկաներ  
Ու անիլրաւութիւն փչողներ ելանն։  
13 Հաւատացի Տէրոջը բարութիւնը տեսնելու-  
կենդանիներուն երկրին մէջ։  
14 Տէրոջը սպասէ.  
Զօրացիր ու սիրադ թող զօրանասւ.  
Ալ Տէրոջը սպասէ։

## ՍԱՂՄՈՍ ԻԸ

Սաղմոս Դաւթի՛

- 1 Ով Տէր, քեզի կը կանչեմ,  
Ով իմ Վէմն, մի լուեր ինծի.  
Չըլլայ որ ինծի լուելովդ.

- \*Գէրեզմանը իջնողներուն նմանիմ։  
2 Լու իմ՝ խնդրուածքիս ձայնը  
Երբ քեզի Կ'աղաչեմ,  
Երբ իմ՝ ձեռքերս կը վերջնեմ  
Դէպի քու տուր գարիբդ։  
3 Զիս մի Դկունցներ ամբարիշտաներուն հետ,  
Ու անօրէնութիւն գործողներուն հետ,  
Որոնք իրենց ընկերներուն հետ խաղաղութիւն կը  
խօսին,  
Բայց սրտերնուն մէջ չարութիւն կայ։  
4 Տուր անոնց իրենց գործերուն պէս,  
Ու իրենց լրածներուն չարութեանը պէս,  
Իրենց ձեռքերուն գործերուն պէս տուր անոնց,  
Հասուցում ըրէ անոնց։  
5 Որովհեաւ անոնք Տէրոջը ըրածներուն  
Ու անոր ձեռքերուն գործերուն մատգրութիւն չեն  
լներ,  
Պիտի կործանէ զանոնք, ու ու պիտի չշինէ։  
6 Օրչնեալ ըլլաց Տէրը,  
Օր լսեց իմ՝ աղօթքիս ձայնը։  
7 Տէրը իմ՝ զօրութիւնս ու իմ՝ ասպարս է.  
Խմ՝ սիրառ անոր յուացաւու, ու ես օդնութիւն գտայ,  
Ուստի սիրառ ուրախացաւ,  
Ես ես իմ՝ երգովս զանիկա պիտի գովեմ։  
8 Տէրը անոնց վշն է,  
Ու իր օծեալին փրկութեանը պարփազն է:  
9 Փրկէ քու ժողովուրդգ.

\*ԵՔՌ. Գուբը

†ԵՔՌ. քաշեր

ԲԼ օրհնէ քառ ժառանգաւթիւնդ.  
Նաև հովուէ զանոնք ու յաւիտեան բարձրացուր.

## ՍԱՂՄՈՍ ԻԹ

Սաղմոս Դաւթիւ

- 1 **Տէրոջը առւելք, ով \*հզօրաց որդիներ,**  
Տէրոջը առւելք փառք ու զօրսւթիւնն:
- 2 **Տէրոջը առւելք իր անուան փառքը,**  
Տէրոջը երկրպագութիւն ըլքէ սրբաւթեան զարդարանքով:
- 3 **Տէրոջը ձայնը ջուրերուն վրոյ է.**  
Փառաց Աստուածը կ'որսույ,
- 4 **Տէրոջը շատ ջուրերուն վրոյ է,**
- 5 **Տէրոջը ձայնը ուժով է,**  
Տէրոջը ձայնը վիշտառութիւնով է:
- 6 **Տէրոջը ձայնը եղեւինները կը կոսրէ,**  
Ու Տէրը կը կոսրէ Լիբանանի եղեւինները.
- 7 **Տէրոջը ձայնը միջնջերուներու ձագին պէս,**  
Տէրոջը միջնջերուներու ձագին պէս:
- 8 **Տէրոջը ձայնը կոսկին բացերը կը ճեղքէ,**
- 9 **Տէրոջը ձայնը կոսկին անապատը,**  
Տէրը կադէսի անապատը կը դաշտոնէ:
- 10 **Տէրոջը ձայնը եղեւինները կը ծնեցնէ,**  
Անոր տաճարին մէջ ամեն ալ կը խօսին անոր փառքը:

11 **Տէրը իր ժողովուրդին զօրութիւն պիտի տոյ,**  
Տէրը իր ժողովուրդը խաղաղութիւնով պիտի օրհնէ:

## ՍԱՂՄՈՍ Լ

Սաղմոս Դաւթիւ տանը նաւակառեաց երգը:

- 1 **Ով Տէր, կը բարձրացնեմ՝ քեզ, վասն զի զիս աղասեցիր,**  
Ու թշնամիներս իմ վրաս չուրախացուցիր:
- 2 **Ով իմ՝ Տէր Աստուածու, քեզի կանչեցիր,**  
Ու զիս բժշկեցիր:
- 3 **Ով Տէր, իմ անձս դերեզմանէն \*հանեցիր,**  
Գուցը իշնոյներան մէջէն զիս աղբեցուցիր:
- 4 **Սաղմոս երգեցէք Տէրոջը, ով անոր սուրբերը,**  
Ու անոր սրբութիւնը յիշելով շնորհակալ եղէք:
- 5 **Վասն զի մէկ լոսէ իր բարկութեանը մէջ է,**  
Բայց իր հաճութեանը մէջ է հեր բանկին տատենը,  
Երիկոնը լաց կոյ,
- 6 **Յաց տառան ուրսխութիւնն:**
- 7 **Ես իմ՝ յաջոպութեանս մէջ ըսի թէ Յաւիտեան պիտի չսասանիմ:**
- 8 **Ով Տէր, քու հաճութիւնով իմ՝ լեռս հաստատուն ըլիր.**
- 9 **Երեստ ծածկեցիր, ու ես խովվեցայ,**
- 10 **Ով Տէր, քեզի կը կանչեմ,**  
Ու Տէրոջը աղասմնիք կ'ընեմ:
- 11 **Իմ՝ արիւնէս ինչ օդուա կ'ըլլայ**  
Եթէ ես գուրը իշնեմ.

\*Եբէ. վեր հանեցիր

- Միթէ հողը քեզ պիտի գովէ՞,  
կամ անիկաս պիտի պատմէ՞ քու ձշմարտութիւնդ։
- 10 Լուէ, ով Տէր, ու ողբքէ ինծի.  
Ով Տէր, ինծի օգնական եղիր։
- 11 Իմ՝ առգսո պարի փոխեցիր,  
Քուրձու ինծմէ հանեցիր։  
Եւ ինծի սւրախութիւն հագցուցիր։
- 12 Որպէս զի է ֆառքս սաղմն երգէ քեզի ու ալ զուէ,  
Ով իմ՝ Տէր Սատուածս, յաւիտեան քեզ պիտի գովէմ։

## ՍԱՂՄՈՍ ԼՍ.

Գլխաւոր երաժշախն, Սաղմն Դաւթի:

- 1 Ով Տէր, քեզի յուսացայ,  
Յաւիտեան չամչնամ։  
Քու արդարութիւնովդ զիս ազատէ։
- 2 Քու ականջդի ինծի խնարհեցուր,  
Շուտովդ զիս ազատէ։  
Ինծի ամրութեան վէմ մը եղիր։  
Եւ զիս ապրեցնելու համար ապաստանի տուն մը։
- 3 Վասն զի իմ վէմ ու ըերդս դուն ես,  
Եւ քու անուանդ համար ինծի առաջնորդէ ու զիս  
կառավարէ։
- 4 Որոպայթէն զիս հանէ, զըր ինծի համար գաղտուկ  
լորեր են,  
Վասն զի իմ զօրութիւնս դուն ես։
- 5 Իմ՝ հսպիս քու ձեռքդ կը յանձնեմ։  
Ով Եհավա Աստուած ձշմարտութեան, դուն զիս  
փրկեցիր։
- 6 Անոտի ունայնութիւններ պահողները ատեցի։

- Բայց ես Տէրովը յուսացայ։
- 7 Քու ողբմութիւնովդ պիտի ցնծամ և ուրախ ըլլամ։  
Վասն զի իմ՝ թշուառութիւնս տեսար,  
Ու իմ անձս տառապանիներու մէջ գիտցար։
- 8 Եւ զիս թշնամիին ձեռքը չմասնեցիր,  
Հապա իմ՝ ուրգերս լոյնարձակ տեղ մը կանգնեցուցիր։
- 9 Ով Տէր, ողբմէ ինծի, վասն զի նեցութեան մէջ եմ։  
Սրանեղութենէ մաշեցաւ իմ՝ աչքս, իմ՝ անձս ու իմ՝  
փորս։
- 10 Վասն զի իմ՝ կեռնքս տրտութենէ՝  
Ու արքիներս հաւաշանք ընելէ սպառեցան։  
Իմ՝ պիտի թշուառութենէս տկարցաւ,  
Ուզորներս ալ մաշեցան։
- 11 Իմ՝ բոլոր թշնամիներուս, մանաւանդ դրացիներուս,  
առջև նախատինք եղայ,  
Ու իմ՝ ծանօթներուս երկիւղ եղայ։  
Զիս գուրսը տեսնողները ինծմէ կը փախչէն։
- 12 Մեռածի պէս սրոտ մնուցուած եղայ,  
Կրտսուած ամսնին նմանեցայ։
- 13 Վասն զի շատերու բամբասանքը լսեցի.  
Զորս կողմն վախ կաթ.  
Երբ անմէք ինծի համար մէկտեղ ժողուեցան,  
Խորհուրդ կընեին որ հոգիս տռնեն։
- 14 Բայց ես քեզի յուսացայ, ով Տէր  
Ըսի թէ Դուն ես իմ՝ Աստուածս։
- 15 Իմ՝ ժամանակներս քու ձեռքդ են։  
Փրկէ զիս թշնամիներուս ձեռքէն ու զիս հալածող-  
ներէն։
- 16 Քու ժառացիդ վրայ երեսդ փայլեցաւը,  
Քու ողբմութիւնովդ զիս փրկէ։

- 17 Ով Տէր, չամշնամ՝  
Վասն զի քեզի կանչեցի.  
Ամբարիշտները թող ամշնան,  
Ու գերեզմանին մէջ թող լուռ կենան։
- 18 Թող պատանձին աստիսոս շրթ անքները,  
Որոնք համարաւթեամբ և նախատինքով  
Ամբարտաւանութիւն կը խօսին արդարին դէմ։
- 19 Ուշափ մեծ է քու բարութիւնդ՝  
Զոր քեզմէ վախցողներուն համնոր պահեցիր,  
Ու քեզի յուսացողներուն համնոր լրիր  
Մարդոց որդիներուն առջեւ։
- 20 Զանոնք քու երեսվոդ ծածկոյթով պիտի ծածկես  
Մարդոց գաւառնանութիւններէն.  
Խորանի մէջ պիտի ծածկես զանոնք  
Լեզւներուն հակառակութենէն։
- 21 Օրհնեալ ըլլայ Տէրը,  
Վասն զի իր ողորմութիւնը զարմանալի ըրաւ ինձի  
Պարապաւոր քաղաքի մէջ։
- 22 Իմ շփոթութեան մէջ ըսի թէ  
Կարուեցայ ես քու աչքերուդ առջեւէն.  
Սակայն դուն իմ աղօթքիս ձոցնը լուեցիր  
Երբ քեզի աղաղակեցի։
- 23 Տէրը պիրեցէք, ալ անոր բոլոր սաւրըերը,  
Վասն զի Տէրը հաւասացեալները կը պահէ,  
Ու ամբարտաւանութիւն ընողներուն առատօրէն հա-  
տուցում կընէ։
- 24 Կարիճ եղէք ու ձեր սիրուը թող զօրանսյ,  
Դուք ամէնդ որ Տէրոջը կը յուսաք։

- ՍԱՂՄՈՍ ԼԲ  
Պաւելիթի երգը։
- 1 Երանի՛ անոր՝ որսւն յանցանքներուն թողութիւն  
եղաւ,  
Ու անոր մեղքերը ծածկուեցան։
- 2 Երանի՛ այն մարդուն՝ որ Տէրը անօրէնութիւն չու-  
պեր անոր,  
Ու անոր հոգիին մէջ նենգութիւն չկայ։
- 3 Երբ լուռ կեցայ, սականերս մաշեցան  
իմ ամէն օր աղաղակերավու։
- 4 Վասն զի ցորեկ ու գիշեր քու ձեռքդ իմ վրաս ծան-  
րոցաւ,  
Իմ թացութիւնս ամառաւան չորութեան դարձաւ,  
(Աէլաւ)  
5 Իմ մեղքս քեզի յայտնեցի,  
Ու իմ անօրէնութիւն չժածկեցի.  
Ըսի թէ Տէրոջը պիտի խստավանիմ՝ յանցանքներս.  
Ու գուն թողացիր իմ մեղքիս անօրէնութիւնը  
(Աէլաւ)  
6 Ասոր համար ամէն աստուածապաշտ աղօթք պիտի  
ընէ քեզի  
Քու գտնուելու ժամանակդ։  
Արդարեւ շատ ջուրերուն հեղեղներուն տտենը  
Անոր պիտի չմօտենան։
- 7 Դուն ես իմ ապաստանաբանս։  
Ենցութենէ զիս պիտի պահէն։

\*կամ, իմաստութեան սողմանը

- Պաւն զիս պիտի պատես ազատութեան երգերով։  
(Սէլուա)
- 8 Քեզի պիտի սորվեցնեմ, ու երթալու ճամբար  
պիտի ցուցնեմ քեզի։  
\*Բիշու պիտի խրատեմ», իմ աչքս քու վրադ պիտի  
ըլլոյդ։
- 9 Զիու պէս ու ջրիի պէս մի ըլլաք, որն միտք չունին,  
Ու իրենց սանձին ու պահութցին զարդովլ կապելու  
է, որպէս զի քեզի չմօտենան։
- 10 Ամբարշանին սանշանքները շատ պիտի ըլլան,  
Սակայն Տէրոյը յուսացողին չորս կողմէ սղորմու-  
թիւնը պիտի պատէ։
- 11 Ու արդարներ, Տէրոշմու ուրախ եղէք ու ցնծացէք,  
Ցնծութեամբ երգեցէք դուք ամէնդ՝ որ սրտով ու-  
ղիղ էք։

## ՍԱՂՄՈՍ ԼԳ

- 1 Ու արդարներ, Տէրոջմով ցնծացէք.  
Ուղիղներուն կը վայլէ օրհնութիւն երեւեւ։
- 2 Գովլեցէք Տէրը քնարովլ։  
Տասը լոր ունեցող տառիղով սաղման երգեցէք անոր։
- 3 Նոր երգ մը երգեցէք անոր,  
Վարպետութեամբ նոսիրանները զարկէք ցնծու-  
թեան ձայնով։
- 4 Վասն զի Տէրոյը խօսքը շխտակ է,  
Ու անոր բալը գործերը ճշնարարութեամբ են։
- 5 Անիկաս արդարութիւնը ու իրաւունքը կը սիրէ,  
Տէրոյը ողորմութիւնովլ երկիր լեցուն է։

\*Կամ, Խորհուրդ պիտի ընեմ՝ +Եղի հայոց

- 6 Տէրոյը խօսքովլ երկինք սանեղծուեցաւ,  
Ու իր բերնին հոգեփոլը՝ անոր բալը զօրքը  
7 Ծավան ջուրերը \*գեղի մը պէս՝ կը ժողովէ,  
Անդանդները շատեմարաններուն մէջ կը դնէ։
- 8 Բոլը երկիր թող Տէրոյը վախնաց,  
Ու անկէ գողոն աշխարչի բալը բնակիւները։
- 9 Վասն զի անիկա լսաւ, ու եղաւ,  
Ինք հրամացեց, ու հաստատուեցաւ։
- 10 Տէրը կը ցուռէ հեթանոսներուն խորհուրդները,  
Փուռէ կը համէ ժաղավարդներուն դիաստորութիւն-  
ները։
- 11 Տէրոյը խորհուրդը յաւիտեան կը մնայ,  
Ու անոր սրտին դիաստորութիւնները՝ աղքէ մինչև  
աղդ։
- 12 Երանի՛ այն աղքին՝ որուն Աստուածը Տէրն է,  
Ու այն ժողավարդին՝ զօր իրեն ժառանգութեան հա-  
մար ընալոց։
- 13 Տէր երկինքէն կը նայի,  
Բնոր մարդոց որդիները կը տեսնէ։
- 14 Իր բնակութեանը տեղէն  
Աշխարչի բալը բնակիւները կը դիտէ։
- 15 Անոնց սիրուերը հաւասարապէս ինք սահղձեց,  
Անոնց բոլը ըրածները կիմանոյ։
- 16 Թագաւոր մը զօրքի շատութիւնով չաղստիր։  
Ու ու զօրտուր մարդ մը ուժի շատութիւնով կը  
փրկուի։
- 17 Զին աղաստութեան համար պարապ բան է,  
Ու իր ուժին շատութիւնովլ չըրնար աղստեւ։

\*Կամ, սրպէս թէ տիկի մը մէջ

- 18 ԱՀա Տէրոջը աչքը իրմէ վախցողներուն  
Ու իր ողբրմութեանը յուսացողներուն վրայ է,  
19 Անոնց անձը մահուանէ փրկելու  
Եւ սովին ժամանակ զանոնք ապրեցնելու համար։  
20 Մեր անձը Տէրոջը կը սպառէ.  
Մեր օգնութիւնը ու մեր վահանը անիկա է։  
21 Վասն զի մեր սիրտերը անով կ'ուրախանան,  
Քանզի անոր սուրբ անուանը յուսացանք։  
22 Ով Տէր, քու ողբրմութիւնդ մեր վրայ ըլլայ,  
Ինչպէս քեզի կը յուսանք։

## ՍԱԼՄՈՍ 19

Սաւան Դաւթի, այն ատեն որ Արքիմենէքի առջև յիմար ձեւացաւ,  
ան աշ դուրս բրաւ զանիկա որ գնաց։

- 1 Ամէն ժամանակ Տէրը պիտի գովեմ։  
Անոր գովութիւնը միշտ իմ բերանս պիտի ըլլայ։  
2 Խմ անձու Տէրոջնով պիտի պարծի.  
Խոնարհները պիտի լսեն և ուրախ ըլլան։  
3 Խնձի հետ Տէրը մեծցուցէք,  
Ու մէկտեղ բարձրացնենք անոր անունը։  
4 Տէրը խնդրեցի, ու ինձի պատասխան տոււաւ,  
Եւ իմ ամէն երկիւղներէս զիս փրկեց։  
5 Անոր նոյեցան ու լցո տուին,  
Եւ անոնց երեսները չամչցան։  
6 Այս աղքասով աղաղակեց, աւ Տէրը լսեց անոր։  
Եւ զանիկա իր բոլոր նեղութիւններէն փրկեց։

\*Այսինքն, Անքուսի. տես աթագ. իս. 10, են.։

- 7 Տէրոջը հրեշտակը իր բանակը անկէ վախցողներուն  
չորս կողմէն կը գնէ,  
Ու զանոնք կ'ազատէ։  
8 Ճաշակեցէք ու տեսէք որ Տէրը բարի է.  
Երանի՛ այն մարդուն որ անոր կը յուսայ։  
9 Տէրոջն վախցէք, ով անոր սուրբերը,  
Վասն զի անկէ վախցողներուն բան մը պակաս չըլլար։  
10 Առիւծի կորիւնները չքաւորութիւն ու անօթութիւն  
կը կրեն,  
Սակայն Տէրը փնտուղներուն բարութիւն մը պակաս  
պիտի չըլլայ։  
11 Եկէք, որդիք, մոփկ ըրեք ինձի,  
Տէրոջը վախը ձեզի սորվեցնեմ։  
12 Ո՞վ է այն մարդը որ ապրիլ կ'ուղիւ,  
Ու շար օրեր կը սիրէ՝ բարութիւն տեսնելու համար։  
13 Քու լեզուդ չսրութենէ պահէ,  
Ու շրթունքներգ՝ նենգութիւն խօսելէ։  
14 Չարութենէ հեռացիր ու բարութիւն ըրէ,  
Խաղաղութիւն գնառէ ու անոր եռեւեն գնա։  
15 Տէրոջը աչքերը արդարներուն վրայ են,  
Ու անոր ակնանջները՝ անսնց աղաղակին։  
16 Տէրոջը երեսը չարագործներուն գէմ է,  
Անոնց յիշառակը երկը բնուջնջ ընելու համար։  
17 Արդարնեւ կ'աղաւակին, ու Տէրը կը լըւ,  
Ու իրենց բոլոր նեղութիւններէն կը փրկէ զանոնք։  
18 Տէրը մօտ է անսնց՝ որոնց սիրաք կոտրած է,  
Ու հոգիալ խոնարհածները կ'ապրեցնէ։  
19 Արդարին նեղութիւնները շատ են,  
Բայց Տէրը ամենէն կը փրկէ զանիկա։  
20 Անոր բոլոր սիրոնները կը պահէ,

- Անոնցմէ մէջը չկստրուիր:
- 21 Զարութիւնը ամբարիշտը պիտի մեռցնէ,  
Ու արդարը ասողները պիտի գտասապարտուին:
  - 22 Տէրը իր ծաւառներուն անձը կը փրկէ,  
Եւ իրեն յուսացներէն ընտա մէկը պիտի չդատա-  
պարտուի:

## ՍԱՂՄՈՍ ԼԵ

Ս-Հ-Ա Դաւթի:

- 1 Ավ Տէր, ինծի հետ հակառակողներուն հետ հա-  
կառակէ.
- 2 Ինծի հետ պատերազմներուն հետ պատերազմէ:
- 3 Ասպարը ու վահանը առ,  
Ու ելիր ինծի օգնութիւն ընելու:
- 4 Նուն նիզակը քաշէ, ու ամբո՞ն գոցէ զիս հալածող-  
ներուն գէմ:
- 5 Հու անձիս թէ՛ Քու փրկութիւնդ ես եմ:
- 6 Իմ անձո ինտուղները ամինան ու խոյտառակ ըլլան.  
Ետ գառնան ու ամինան  
Անոնք որ ինծի համար չարութիւն կը խորչին:
- 7 Հովին առջեւ եղած մղեղին պէս ըլլան անոնք,  
Եւ Տէրոջը հրեշտակը փախցնէ լուսու:
- 8 Անոնց ճամբանն խաւար ու սկրդեցնող ըլլայ,  
Եւ Տէրոջը հրեշտակը հալածէ լանոնք.
- 9 Վասն զի զաւը տեղը իրենց որոգոյթը փոսի մէջ ինծի  
համար ծածկեցին,
- 10 Թող անոր վրայ յանկած աւերում դայ,  
Եւ իր ծածկած որոգոյթը զինք բռնէ,

- Նոյն աւերման մէջ կինայ:
- 9 Ասկայն իր անձս Տէրոջմնալ պիտի ցնծայ,  
Անոր փրկութիւնովը աւրասի պիտի ըլլայ:
  - 10 Իմ բոլոր սովորներս պիտի ըսեն,  
Տէր, ով քեզի նման է,  
Որ աղքատը կ'ազատես անկէ որ կը գօրանայ անոր  
վրայ,
  - 11 Ու աղքատը և անանկը իր յափշտակողէն:  
Դժիացածներս կը հարցնէին ինծի:  
12 Աղէկութեան փսխարէն ինծի գէշութիւն ըլլին՝  
- Ու երկրի աղջերուն դուն պիտի աւաշնորդես: (Աէլաւ.)
- 5 Թող ժողովուրդները քեզ գովեն, ով Աստուած,  
Բոլոր ժողովուրդները քեզ գովեն:
- 6 Երկրի իր պառւզը պիտի տայ.
- Ու Աստուած, մեր Աստուածը, մեղ պիտի օրչնէ:
- 7 Աստուած մեղ պիտի օրչնէ,  
Ու երկրի ամէն ծայրերը անկէ պիտի վախան:

## ԱՅՂՄՈՍԱՅ ԿԵ

Գլխաւոր Երաժշտին. Դաւիթի Սաղմոս ու երգը:

- 1 Թող ելլէ Աստուած, անոր թշնամիները թող  
ցրուին,

- Ու զանիկա աստղները իր երեսէն թող փախչին:
- 2 Մուխին ցրուելուն պէս ցրուէ զանան.  
Ինչպէս մամը կրակին առջև կը հայի,  
Այսուհետեւ թող կորսուին ամբարիշտները Աստուածոյ  
երեսէն:
- 3 Բայց արդարները թող ուրախանան,  
Աստուածոյ առջև թող ցնծան,  
Եւ ուրախութիւնով զուարձանան:
- 4 Երգեցէք Աստուածոյ, սաղմոս երգեցէք անոր ան-  
ուաննը.
- Ճամփայ պատրաստեցէք անսպատճերուն մէջէն հեծ-  
նողին,  
Որուն անունը \*Եահ՛ է,  
Ու ցնծացէք անոր առջև:
- 5 Որբերուն հայրը ու որբեւորիներուն դատաւորը  
Աստուած է իր սուրբ բնակարանին մէջ:
- 6 Աստուած մինակ եղաղները տան մէջ կը բնակեցնէ,  
Կապուածները յաջողութեան կը հանէ.  
Բայց ապատումբները չը տեղ կը բնակին:
- 7 Ու Աստուած, քու ժողովուրդիդ առջեւէն դա-  
ցած ատենդ,
- Անսպատճէն անցած ատենդ, (Աէլաւ.)
- 8 Երկիր շարժեցու, երկինք ալ շառ կաթեցուց Աս-  
տուածոյ երեսէն,  
Ոինս ալ շառէցաւ Աստուածոյ, Խարոյէի Աստուածոյն,  
առջեւէն:
- 9 Ու Աստուած, քու ժառանգութեանդ առատօրէն  
անձրև առալով.

\*կահ, Եհովա, այսինքն, ՈՐ ԷՆ

- երբ յոդնած էր, դուն հաստատեցիր զանիկա:
- 10 Քու ժողվուրդդ անոր մէջ բնակեցաւ.
- Քու քալցրութիւնովդ աղքատին համար պատրաստեցիր, ով Աստուած:
- 11 Տէրը պատրամ տուաւ.
- Աւեախ տուողները մեծ բազմութիւն են,
- 12 Զօրքերուն թագաւորները կը փախչին.
- Կը փախչին, ու տան մէջ բնակող ինը աւարը կը բաժնէ:
- 13 Թէկ գոմերուն մէջտեղը պառկած ըլլաք,
- Աշանիի թեւերուն պէս պիտի ըլլաք արծաթով պատած,
- Ու անոր փետուրները դեղին տակիով:
- 14 Ամենակարսովին՝ այն Եւրին վրայ թագաւորները ցըրուած տանինը,
- Երեւ Սելմանի մէջի ձիւնին պէս Ճերմկցաւ,
- 15 Աստուծոյ լեռը Բասան լեռն է,
- Բազմագագաթ լեռը Բասան լեռն է:
- 16 Ով բազմագագաթ լեռներ, ինչո՞ւ նախանձով կը նոյիք.
- Ա-է-ս այն լեռն է՝ որուն մէջ Աստուած համեցաւ բնակիլ.
- Յիսաւի Տէրը հան պիտի բնակի յաւիտեան:
- 17 Աստուծոյ կառքերը երկու մնդոմ տասը հապար են,  
\*հազար հազարաց.
- Տէրը անոնց մէջ է, է առքը տեղն է Էրև Ախնայի մէջ:
- 18 Բարձր տեղը ելաք, գերութիւնը գերի ըրիր,
- Պարգևներ տուիր մարդոց համար;

- Ու ապստամբներուն համար ալ,
- Որպէս զի Տէր Աստուած անաց էլլ ընակի:
- 19 Տէրը օրչնեալ ըլլայ \*օրէ օր.
- Եթէ Քէւ բեռ մը գնէ մեր վրայ,
- Աստուած է մեր փրկիչը (Աէլաւ):
- 20 Աստուած մերի փրկութեան Աստուած է,
- Ու մահուանէ ազատուիլ Տէր Եհովայէ է:
- 21 Սակայն Աստուած պիտի փշէ իր թշնամիներուն գլուխը,
- Նաև իր անօրէնութիւններուն մէջ պալսողին գիւ սաւոր գագաթթիւ:
- 22 Տէրը ըստ, Զանանէ Բասանի ետ գարձնեմ.
- Ծովան անդունդներէն ետ գարձնեմ.
- 23 Այնակէս որ ասքդ արեան մէջ թաթիսուի,
- Շուներուգ լեզուն թշնամիներէն իր բաժինը առնէ:
- 24 Քու քալուածքներդ տեսան, ով Աստուած,
- իմ Աստուծոյ, իմ Թագաւորիս, քալուածքները սուրբ տեղին մէջ:
- 25 Առջեւէն երգեցողները գացին,
- Ետեւէն նուագածունները՝
- Թմբուկ զարնող կոյսերուն մէջտեղը:
- 26 Ժողովուրդներուն մէջ օրչնեցէք զԱստուած,
- Տէրը, ով Խորապէլի աղբիւրէն եղանչեր:
- 27 Այն աեղ է փաքր Բենիստինը, անոնց տիբապետողը,
- Ցուդայի իշխանները իրենց բազմութիւնով,
- Զաբաւզոնի իշխանները ու Նեփիւզովի իշխանները:
- 28 Քու Աստուածդ քու զօրսութիւնդ հաստատեց.

\*կամ, որ օրէ օր մեր վրայ բարեբարութեան բեռ կը դնէ

Զօրացուք, ով Աստուած, այն բանը զար մեղի համար  
ըլլեր:

- 29 Երուառաղջէմ եղող տաճարիդ համար  
Թագաւորները քեզի ընծաներ պիտի բերեն:  
30 Եղէդներու մէջ բնուիւզ գալանները, ու ցուլերուն  
ժողովքը  
Ժողովքոց զուարակներուն չետ սասաէ,  
Որպէս զի խոնարհն՝ արծաթի կտորներ բերելու,  
Պատուերազմ՝ սիրող ժողովուրդները ցոսուէ:  
31 Եգիպտոսէ աղնուականներ պիտի գան.  
Եթէսպիտա իր ձեռքերը շուտով Աստուծոյ պիտի  
երկննէ:  
32 Ով երկիր թագաւորութիւններ, երգեցէք Աստու-  
ծոյ,  
Սաղմոն ըսէք Տէրոջը, (Սէլա,)
- 33 Անո՞ որ ի յափանից երկնքներուն երկնից վրայ  
+կը նասի,  
Աչտ անիկա իր ձայնով զօրաւոր ձայն կու տասյ:  
34 Զօրութիւն տուէք Աստուծոյ.  
Անոր մեծվայելուութիւնը Խորայէլի վրայ է,  
Ու անոր զօրութիւնը ամպերուն մէջ է:  
35 Ահաւոր ես, ով Աստուած, քու սուրբ տեղերուդ-  
մէջ.

Խորայէլի Աստուածը

Խնդ կու տայ իր ժողովուրդին ոյժ ու կարողութիւն.  
Աստուած օրհնեալ ըլլու:

### ՍԱՂՄՈՍՍ ԿԹ.

- Գլաւոր Երաժշտին, Շօւանիմի վրայ. Սուշու Դաւթի.  
1 Ապրեցուը զիս, ով Աստուած,  
Վասն զի ջուրերը էմ անձիս հասան:  
2 Խողունկ ցեփի մէջ կ'ընկղմիմ,  
Ուր կոյնելու ունչկայ.  
Զուրերուն խորանկ տեղերը մոսայ,  
Ու յորձանքները զիս ընկղմեցին:  
3 Յոդնեցոյ ես կանչելէս, կոկորդս ցամեցցաւ,  
Աչքերս նուաղեցան իմ Աստուծոյս սպասելէն:  
4 Առանց պատճառի զիս ատողները գլխուս մատղերէն  
շատ են.  
Զիս փուճ տեղ կորսնցնող թշնամիներս զօրացան.  
Այն բանը զոր չէի յափշտակեր, այն տաեն վճռեցին  
5 Ով Աստուած, իմ յիմսորութիւնս դուն գիտես,  
Ու յանցանքներս քեզմէ ծածկուած չեն:  
6 Քեզի համբերազները իմ պատճառաւաս չամշնան,  
Ով Տէր, զօրաց Տէրը.  
Քեզ փնտուողները իմ պատճառաւաս ամօթով չըլլան,  
Ով Խորայէլի Աստուածը:  
7 Վասն զի քեզի համար նախատիմի համբերեցի,  
Ամօթով ծածկեց իմ երեսան  
8 Եղապոյններուս օտար՝  
Ու մօրս որդիներուն անժանօթ եղայ:  
9 Վասն զի քու տանդ նախանձը զիս կերաւ,  
Ու քեզ նախատիմներուն նախատիմները իմ վրաս  
ինկան:  
10 Իմ անձիս ծոմ պահէլովը լսացի,

- Ու այս ինծի նախատինք սեպուեցու։  
 11 Եւ իմ հանդերձն քուրձ ըլի,  
 Ու անոնց առակ եղայ։  
 12 Դուռը նասողները իմ վրայովա կը խօսին,  
 Ու արբեցովներուն խաղը եղայ։  
 13 Բայց ես իմ աղօթքս կ'ընեմ քեղի,  
 Ու Տէր, ընդունելի ժամանակին։  
 Ու Աստուած, քու մեծ ողսրմութիւնովդ,  
 Քու փրկութեանդ ճշմարտութիւնովը ինծի պատոա-  
 խան տուր։  
 14 Հանէ զիս ցեխէն, ու չընկղմիմ։  
 Զիս ասողներէն ու խորունկ ջուրերէն աղատուիմ։  
 15 Չուրերուն յորձանքը թող զիս չընկղմէ,  
 Ու անդունդը զիս չկլէ։  
 Ու \*ջրհորը իր բերանը վրաս չգոցէ։  
 16 Պատասխան տուր ինծի, ու Տէր,  
 Վասն զի քու ողսրմութիւնդ քաղցր է.  
 Քու առատ զթութեանդ համեմատ նայէ ինծի։  
 17 Ու երեսդ մի ծածկեր քու ծառայէդ,  
 Վասն զի են նեղալթեան մէջ եմ։  
 Շուտով պատասխան տուր ինծի։  
 18 Իմ անձիս մօտեցիր ու զանիկս փրկէ.  
 Իմ թշնամիներուս համեր զիս աղատէ։  
 19 Դուռն գիտես իմ նախատինքս  
 Եւ իմ ամօթս ու իմ խոյտառակութիւնս.  
 Քու առջեւդ են բոլը զիս նեղողները։  
 20 Նախատինքը սիրս կարեց ու հիւսնդ եղայ։  
 Վշտակից եղողի մը նայեցոյ, բայց չկար,

- Ու միիթարութիւն տուսղներուն՝ բայց չգատա-  
 21 Հապո կերակորքի տեղ թոյն տուին ինծի,  
 Ու ծարւած ասենս քացախ խմցուցին ինծի։  
 22 Անոնց սեղանը կրենց առջև որոդայթ,  
 Ու յաշղութեան տեղ վարմ ըլլայ։  
 23 Անոնց աչքերը մժանան որպէս զի չտեսնեն.  
 Ու անոնց մէջքերը միշտ դողացուր։  
 24 Քու սրտմութիւնդ անոնց վրայ թափէ,  
 Ու սասափկ բարկութիւնդ անոնց վրայ հասնի։  
 25 Անոնց բնակարանը առերակ ըլլայ։  
 Ու անոնց վրաններուն մէջ բնակող չգանուի։  
 26 Վասն զի վայն զըս գուն զարկիր, անոնք կը հալածեն,  
 Եւ քու վիրաւորածիդ ցաւին վրայով կը խօսին։  
 27 Անոնց անօրէնսութեանը վրայ անօրէնսութիւն դիր,  
 Եւ քու արդարութեանդ չհասնին։  
 28 Կենաց գիրգէն թող ջնջուին,  
 Ու արդարներուն հետ չդրսւին։  
 29 Բայց ես աղքատ ու վշտացած եմ։  
 Ու Աստուած, քու փրկութիւնդ թող զիս պաշտ-  
 պանէ։  
 30 Աստուծոյ անունը պիտի գովեմ երգով,  
 Ու պիտի բարձրացնեմ զմնիկա գոհութիւնով։  
 31 Ու ասիկս եղջերաւոր ու կճզակաւոր եղէն ու զուտ-  
 րակէն։  
 Աւելի ընդունելի պիտի ըլլայ Տէրո՞յը։  
 32 Հեղերը պիտի տեսնեն և ուբախանան.  
 Ու զիստուած փնտուղներ ձեր սիրտն ալ պիտի  
 ապրիւ։  
 33 Վասն զի Տէրը տնանկներուն կը լոէ,  
 Ու իր կապուտածները չսնարգերի

- 34 Թող գովեն զանիկա երկինք ու երկիր,  
Ծով ու բնլոր անոր մէջ շարժողները:  
35 Վասն զի Աստուած Սիօնը պիտի փրկէ,  
Ու Ցուդսի քաղաքները պիտի շինէ:  
Եւ հոն պիտի բնակին ու ժառանգեն զանիկա,  
36 Եւ իր ժառաներուն սերունդը պիտի ժառանգէ զա-  
նիկա,  
Ու իր անունը սիրողները անոր մէջ պիտի բնակին:

## ՍԱՂՄՈՍ Հ

Գլամոր երաժշտին, Սույնո Դաւթի, յիշատակի համար:

- 1 Ով Աստուած, զիս փրկելու հանք ըրեւ,
- 2 Թող ամշնան ու խայտառակ ըլլան  
Իմ անձս փնտռողները,  
Ետ դառնան ու ամօթով ըլլան  
Ինծի չարիք ու զողները:
- 3 Թող \*ամշնալով ետ դառնան  
Անձնք որ ինձի վա՛շ գմ'շ կ'ըսեն:
- 4 Ամել քեղ փնտռողները  
Քեղմով թող ցնծան և ուրախանան,  
Եւ քու փրկութիւնդ սիրողները  
Ամէն ժամանակ թող ըսեն, Աստուած մեծանայ:
- 5 Բայց ես աղքատ ու տնանկ եմ.  
Ով Աստուած, շուտով հասիր ինծի,  
Իմ օգնականս ու փրկես դուն ես,  
Ով Տէր, մի ուշանար:

\*Լամ, իրենց ամօթին պատճառաւ.

## ՍԱՂՄՈՍ ՀԱ

- 1 Ով Տէր, քեզի յաւացայ, Զամնամը յաւիտեան:
  - 2 Քու արդարութիւնավդ զիս ապրեցուր ու աղաւել զիս,  
Ականջդ ծուէ ինծի ու փրկէ զիս:
  - 3 Ինծի ապաւինութեան վէմ եղիր,  
Որպէս զի միշտ հան երթամ.  
Դուն հրաման առւեր զիս փրկելու,  
Վասն զի իմ վէմն ու բերդս դուն ես:
  - 4 Ով իմ Աստուածս, ամիսարշանն ձեռքէն,  
Անօրէնին ու բանաւորին ձեռքէն, զիս փրկէ:
  - 5 Վասն զի իմ ամինկալութիւնս դուն ես, ով Տէր  
Եհովա.
- Մանկութենէս ի վեր իմ յայս քա՞ն էս,
- 6 Ես քեզի հասանանուեցայ արգանդէն,  
Սօրս որովայնէն իմ պաշտպան դուն ես,  
Իմ գովանութիւնս միշտ քու վրադ է:
  - 7 Զարմանալի բանին մը պէս երայ շատերուն,  
Բայց իմ զօրաւոր ապաւէնս դուն ես:
  - 8 Ծերանն քու գովաբանութիւնավդ լցուի,  
Ամէն օր քու փառաբանութիւնավդ:
  - 9 Ծերութեան ատենս զիս մը ձգեր,  
Ուժիս պակսած ատենը զիս մը թողաւր:
  - 10 Վասն զի թշնամիներս ինծի համար կը խօսին,  
Ու իմ անձս պաշտպանները մէկտեղ խորհուրդ կ'ընեն,
  - 11 Հսելով, Աստուած թողոց զանիկա,  
Հալածեցէք ու ըսնեցէք զանիկա,  
Վասն զի աղասող մը չկայ:
  - 12 Ով Աստուած, ինծմէ մի հեռանար.

- Ամ իմ Աստուածս, ինձի օգնելու արտարցիր:
- 13 Թողլ ամշնան ու կրտսելին իմ՝ անձիս հակառակորդ-ները.
- Նախատինքսլ ու ամօթալ թող ծածկուին ինձի չա-  
րութիւն ուզողները:
- 14 Բայց ես ամէն ատեն պիտի յուսամ,  
եւ քու ամէն գովարանութիւններուդ վրայ պիտի  
աւելցնեմ:
- 15 Բերանս պիտի պատմէ քու արդարութիւնդ,  
Ամէն օր քու փրկութիւնդ.
- Վասն զի եւ անաց համբանկը չեմ գիտեր:
- 16 Պիտի քալեմ Տէր Եհովայի զրութիւնովը.  
Քու արդարութիւնդ, միայն քուկինդ, պիտի յիշեմ:
- 17 Ով Աստուած, մանկութենէս ի վեր սորմեցուցիր  
ինձի.
- Ու մինչեւ հիմո քու հրաշալի գործերդ պատմեցին
- 18 Ու հիմո մինչեւ ծերութեան ու ալեւորութեան ա-  
տենս
- Զիս մի ձգեր, ով Աստուած,  
Մինչեւ որ պատմէմ՝ քու \*կարողութիւնդ հալս աղ-  
դին,
- Ես քու զրութիւնդ այն ամենուն սրոնք պիտի գանու
- 19 Քու արդարութիւնդ ալ շատ բարձր է, ով Աստ-  
ուած,
- Որ մեծամեծ բաներ ըրիր,  
Քեզի պէս ո՞վ կայ, ով Աստուած:
- 20 Դաւն որ շատ ու ծանր նեղութիւններ ցուցուցիր  
ինձի,

- Նորէն զիս պիտի կենդանացնես,  
Ու երկիր անդանդներէն նորէն զիս պիտի հանես:
- 21 Իմ մեծութիւնս պիտի շանցնես,  
Ու դաւնալով զիս պիտի մակեթարես:
- 22 Ուստի ես ալ պիտի գովեմ՝ քեզ տաւկովլ  
Քու ճշմարտութեանդ համար, ով իմ Աստուածս,  
Սողման պիտի երգեմ՝ քեզի քնարովլ,  
Ով Խոսպէի Սուրբքը:
- 23 Քեզի սաղման երգած ատենս իմ՝ շրթունքներո պիտի  
ցնծան,
- Ու իմ հոգիո՝ զըր գուն փրկեցիր:
- 24 Իմ լեզուս ալ ամէն օր քու արդարութիւնդ՝ պիտի  
խօսի,  
Վասն զի ինձի չարիք ուզողները ամչցան ու խոյտա-  
ռակ եղան:

## ՍԱԼՄՈՍ ՀԲ

\*Սողմանի համար:

- 1 Ով Աստուած, քու դատաստաններդ թագաւո-  
րին տուր,  
Ու արդարութիւնը՝ թագաւորին որդւոյն:
- 2 Անիկա արդարութիւնով պիտի դատէ քու ժողո-  
վարդդ,  
Ու աղքատներդ՝ իրաւունքովլ:
- 3 Կեռները խաղաղութիւն պիտի ըստցնեն ժողովուր-  
դին,  
Ու բլուրներն ալ՝ արդարութիւնովլ:

\*Կամ, Սողմանի Սողմոս

- 4 Փողովարդին աղքատոներուն իրաւունք պիտի լնէ,  
Տնանկին զաւուները պիտի աղաստէ,  
Ու բռնաւորը պիտի ջարդէ;
- 5 Քեզմէ պիտի վախնան քանի որ արեգակը ու լուսինը  
կը մնան,  
Աղդէ մինչև աղդ։
- 6 Հնձուած խոտի վրոց էլա՞ անձրեւի պէս պիտի իջնէ,  
Տարափներու պէ՞ս՝ ո՞սնէ երկիրը կը թրջնէ։
- 7 Անոր օրերուն մէջ արդարը պիտի ծաղկի,  
Ու շատ խաղողութիւն պիտի ըլլոց,  
Մինչև որ աւ լուսին ըլլոց։
- 8 Ու ճավէն մինչև ծովը պիտի տիրէ անիկա,  
Ու գետէն մինչև երկի ժայրերը։
- 9 Անոր առջև անսպատին բնակիչները ծունկ պիտի  
կրկնեն,  
Ու անոր թշնամիները փոշի պիտի լդեն։
- 10 Թարախի ու կղզներուն թագաւորները ընծայ պիտի  
մասուցանեն։
- Կարայի ու Խարայի թագաւորները պարզե պիտի  
լերեն։
- 11 Ու բարոր թագաւորները անոր երկրպագութիւն պիտի  
լնեն։
- Բոլոր ազգերը անոր պիտի ծառայեն։
- 12 Վասն զի աղքատը պիտի փրկէ աղաղակելու ատենը,  
Խեղճն ալ, ու զանիկա ալ որ օդնութիւն չունի։
- 13 Պիտի խղճայ տղքատին ու տնանկին,  
Եւ անանկներուն անձերը պիտի աղաստէ։
- 14 Հարստահարութենէ ու բռնութենէ պիտի փրկէ ա-  
նոնց անձը,  
Եւ անսնց արիւնը պատուական պիտի ըլլոց անոր տուջեւ։

- 15 Ու պիտի տպրի, և Շաբացի սկիեն անոր պիտի տրուի.  
Ու ամէն տաեն աղջմք պիտի մասուցուի անոր համար.  
Ամէն օր պիտի օրչնեն զանկաւ։
- 16 Յորենի աւատառութիւն պիտի ըլլոց երկրի մէջ՝  
կեռներուն գլուխը.  
Անոր պատուղ կիբանանի պէս պիտի շարժի.  
Ու գետնի խտին պէս պիտի ծաղկին \*քաղաքացիները։
- 17 Անոր անտանը յաւիտեան պիտի մնայ.  
Քանի որ արեգակը էւ ճայ, անոր անունն ալ պիտի  
մնայ.  
Ու ժարդէն անուղ պիտի օրչնուին.  
Ամէն ազգերը երանութիւն պիտի տան անոր։
- 18 Օրչնեալ ըլլոց Տէր Աստուած, Խարայէլի Աստ-  
ուածը։  
Միայն ինքն է հրաշքներ լնաղը։
- 19 Ու օրչնեալ ըլլոց յաւիտեան անոր փառտուր տառւնը,  
Ու բոլոր երկիր թող լուսի տնոր փառքովը Ամէն ու  
ամէն։
- 20 Յեսոէի որդւոյն Դաւիթի աղօթքները լնցան։

## ՍԱԼ.ՄՈՍՍ ՀԳ.

Սաղմոս Աստիայ։

- 1 Յիրաւի. Աստուած բարի է Խարայէլի,  
Այսինքն սրտով մաքուր եղաներուն։
- 2 Բայց քիչ մնաց որ իմ սուբերս պիտի ծուէին,  
Ու մաղ մնայ որ իմ քայլերս գայլթակղէին։
- 3 Վասն զի նախանձեցայ հպարտներուն,

\*Եբր. քաղաքէն

- Եթէ ամբողիշտներուն յաջողութիւնը տեսայ.  
 4 Քանզի իրենց մահուան ժամանակն ալ ցաւեր չունին.  
 Մարմիննին ալ պարաբռ է:  
 5 Անոնք մարդոց նեղութեանը մէջ չեն,  
 Եւ ուրիշ մարդոց չետ չեն տանջուիրու  
 6 Անոր համար վզնցիք պէս ամբարտաւանութիւնը դա-  
 նոնք կը չըջապատէ.  
 Բանութիւնը հանդերձի պէս զաննիք կը ծածկէ:  
 7 Անոնց աչքերը պարապառութենէն դուրս կ'ելլեն.  
 Անոնք սրաի խորհուրդներէն անդին կ'անցնին:  
 8 Ծաղը կ'ընեն ու չսրութիւնով կը խօսին բանութեան  
 համար,  
 Հպարտաւթիւնով կը խօսին:  
 9 Բերուննին երկինքի դէմ կը դնեն,  
 Ու իրենց լեզուն երկրի մէջ կը պարսոի:  
 10 (Անոր համար իր ժողովութը հսու պիտի դառնոյ,  
 Ու առատութիւնով ջսու պիտի քամուի անոնց)  
 11 Ու կ'ըսեն, Աստուած ի՞նչպէս գիտէ.  
 Ու Բարձրելցյն քայլ գիտաւթիւն կա՞յ:  
 12 Ահա անոնք են ամբարիշտները,  
 Որ միշտ յաջողութիւն ունին, ու հարստաւթիւն կ'ա-  
 ւելցնեն:  
 13 Ցիրաւիք զուր տեղը իմ սիրտս մաքրեցի,  
 Ու իմ ձեռքերս անմեղութիւնով լուացի.  
 14 Որովհետեւ ամէն օր կը տառնջուիմ,  
 Ու ամէն առատու կը խրատուիմ:  
 15 Եթէ ըսէի թէ ես պյապէս խօսիմ,  
 Ահա քու սրդիներուդ աղդին նենդութիւն ըրած  
 պիտի ըլլայի:  
 16 Երբ խորհեցայ ասիկա իմնալու,

- Դժուար եկաւ իմ աչքերուս.  
 17 Մինչև որ Աստուծոյ արեալանը մնայ,  
 Ու անոնց վերջը իմացայ,  
 18 Իրաւ որ գուն զանսնիք սահելու տեղերը գրեր ես,  
 Կործանման մէջ իջեցուր զանսնիք,  
 19 Ի՞նչպէս յանկարծակի աւելունուիքի մէջ ինկան,  
 Հատան ու վախերալ կորսուեցան:  
 20 Ինչպէս երալ մը յարդուա արթնալէն ետքը,  
 Ու Տէր, \*քաղաքին մէջ՝ անոնց պատկերը այսորէ  
 պիտի անսրգէս:  
 21 Բայց իմ սիրտս ցաւեցաւ,  
 Ու իմ երկամունքներէս խոցուեցոյ:  
 22 Ու ես յեմոր էի ու չէի խմանար,  
 Քու առջեւդ անաստոններու պիտի եի:  
 23 Սակայն ես միշտ քեզի հետ եմ,  
 Դուն իմ աջ ձեռքէս կը բանես:  
 24 Դուն պիտի առաջնորդես ինծի քու խորհրդովի,  
 Ու վերջը փառ.քով զիս պիտի ընդունիս:  
 25 Ո՞վ ունիմ ես երկինքի մէջ.  
 Երկրի վրայ ալ քեզմէ ուրիշը չեմ ուղերւ  
 26 Իս' մարմինս ու սիրտս կը մաշին,  
 Բայց Աստուած իմ սրաիս զօրսութիւնը ու իմ բաժինս  
 է յափաւեան:  
 27 Վասն զի ահս անոնք որ քեզմէ կը հեռանան, կը  
 կորսուին.  
 Դուն կը սասակեցնես ամէնը որ շնութիւն կ'ընեն  
 քեզմէ յուրէւլչէ:  
 28 Բայց Աստուծոյ մօտենալս բարի է ինծի.

\*Կամ, արթնալով. Սալմ. հլ. 65.

Ցոյս դըեր եմ Տէր Եհավայի վրայ,  
Որպէս զի քու բոլոր գործերդ պատմեմ:

## ՍՈՂՄՈՍ ՀԴ

Երդ Ակատիայ:

1 Ու Աստուած, ինչո՞ւ Գու բոլորովին մերժեցիր,  
Ու բարկութիւնն կը միայ քու արօտիդ ոչխարներուն  
վրայ:

2 Ցիշէ քու ժողովուրդդ զր սկզբէն ասացիր ես,  
Քու ժառանգութեանդ վիճակը զր փրկիր ես,  
Ու այս Սիօն լեռը ուր բնակիր ես

3 Բարձրացաւը քու քայլերդ դէպի բոլորովին աւրուած-  
ները,  
Ու առը տեղին մէջ թշնամիին ըրած բոլոր գէշ գոր-  
ծերը:

4 Քու թշնամիներդ կը պատան քու ժողովքիդ մէջ.  
Իրենց նշանները նշանի ուն կը դնեն:

5 Անիկա անտառի ծառերուն վրայ  
Կացիններ վերցնողի մը պէս գիտցուեցաւ.

6 Ու հիմա անոր քանդակագործ զարդերը,  
Ամէնը մէկէն, կացիններով ու մնութերով կը կոտըր-  
տեն:

7 Կոտիպ այրեցին քու սրբարանդ.  
Մինչեւ գետինը կործանեցին քու անուանդ բնակա-  
րանը:

8 Իրենց սրտերուն մէջ ըսին թէ կորսնցնենք ասանք  
ամէնը մէկտեղ.  
Երկրին մէջ Աստուծոյ բոլոր ժողովարանները այ-  
րեցին:

9 Մեր նշանները չենք տեսներ.

Ալ մարդորէ չկայ,

Ու մեր քով մէկն ալ չկայ,

Որ գիտնայ թէ առէմ մինչեւ երբ պէտէ ուեւէ:

10 Ու Աստուած, մինչեւ ե՞րբ նախատինք պիտի ընէ  
նեղիը.

Թշնամին մինչեւ յաւիտեան քու անունդ պիտի ա-  
նարգէ:

11 Ինչո՞ւ ետ կը քաշես քու ձեռքդ ու աչ ձեռքդ.  
Զանիս ծոցէդ հան ու կորսնցուը զննոն:

12 Բայց սկզբէն իմ թագաւոր Աստուած է,  
Որ քրկութիւններ կ'ընէ երկի մէջ:

13 Դուն քու զրութիւննավդ ծովը պատառեցիր,  
Վշապներուն գլուխները ջսորերուն մէջ փշեցիր:

14 Դուն ջարդեցիր Լեւիտիմանի գլուխները,  
Զանիկա կերակւր ըլլապուտ տուիր անապատին մէջի  
ժողովուրդին:

15 Դուն ձեղքեցիր աղբիւրը ու վտակը,  
Դուն չորսուցիր մշտնենաւոր գետերը:

16 Քուկդ է ցարեկը, և քուկդ է գեշերը.  
Լոյսը ու արեւը գուն պատրաստեցիր:

17 Դուն հաստատեցիր երկի ամէն սահմանները,  
Ամուռը ու ձմեռը գուն ստեղծեցիր:

18 Ցիշէ ասիկա՝ որ թշնամին նախատինք տուաւ Տէ-  
րոջը,

Ու յիմար ժողովուրդը քու անունդ անարգէց:

19 Մի մատներ գաղանին քու աստրակիդ անձը.

Մի մոռնար յաւիտեան քու աղքատոներուդ՝ \*կեանքը:

\*կոմ, ժողովը

- 20 Նայէ ուս ուխտիդ, վասն զի երկրի խաւար տեղերը  
Բւնսութեան լընակարաններով լցուած են:
- 21 Թուղ նեղճը ետ չդաւնաց ամօթալ.  
Թուղ ադքաւալ ու անանկը օրհնեն քու անունդ:
- 22 Ելիր, ով Աստուած, քու դաստ պաշտպանէ.  
Ցիշէ այս նախատինկը՝ զոր անզգամը ամէն օր քեզի  
կընէ:
- 23 Մի մաւնար քու թշնամիներոււդ. Ճայնը,  
Քեզի դէմ ստք ելուղներուն խուսվութիւնը ամէն ժա-  
մանակ կը բարձրանայ:

## ՍԱՂՄՈՍ ՀՅ

Դպաւառ երաժշախին. Ալթաշէթ, Աստի Սաղմար ու երգու:

- 1 Կը գովինք քեզ, ով Աստուած,  
Կը գովինք, և քու անունդ մօտ է.  
Քու հրաշքներդ կը պատմուին:
- 2 Երբ սրուշեալ ժամանակ ունենամ՞  
Ուղիղ դաստատան պիտի տեսնեմ:
- 3 Երկիր ու անոր բուլը բնակիչները մուշեցան,  
Անոր սիւները ես կը հաստատեմ: (Աէլաւ)
- 4 Ըսի հպարաներուն թէ Հպարաութիւն մի ընէք,  
Ու ամբարիշտաներուն՝ թէ Եղջեւը մի վերցնէք:  
5 Զեր եղջեւները վեր մի վերցնէք.  
Ամբարաւան պարանցալ մի խօսիք:
- 6 Վասն զի բարձրանալ ոչ արեւելքէն է  
Եւ ոչ արեւմաւտքէն, ոչ ալ անսպատէն,
- 7 Հապա դաստաւրը Աստուած է.
- Մէկը կը ցածցնէ, ու միւրը կը բարձրացնէ:

- 8 Վասն զի Տէրոջը ձեռքը բաժակ կոյ, ու գինին կար-  
միր է.
- Անկիս խաւանուածքով լեցուն է, ու անկէ կը թափէ.  
Եւ իրաւ երկրի բուլը ամբարիշտաները  
Անոր միուրները քամելով պիտի խմեն:
- 9 Բայց ես յաւիտեան պիտի պատմեմ.  
Յակորի Աստուածըն ստղմոն պիտի երգեմ:
- 10 Ու ամբարիշտաներուն բուլը եղջեւները պիտի փշրեմ,  
Արդարին եղջեւները պիտի բարձրանան:

## ՍԱՂՄՈՍ ՀՅ

Գլխաւոր երաժշախին, նկնօթի վրայ. Աստի Սաղմար ու երգը:

- 1 Աստուած Յուգոյի մէջ ճանցուած է.  
Անոր անունը Խարայէլի մէջ մեծ է:  
2 Ու անոր խորանը Սաղէմի մէջ է,  
Եւ անոր բնակարանը Սիօնի մէջ է:  
3 Այն տեղը ջարդեց աղեղին նետերը  
Վահանը, առըր ու պատերազմն (Աէլաւ)  
4 Դուն լուսափոյլ ես,  
Յափշտակութեռն լեռներէն աւելի գերազանց ես:  
5 Սրոտով զօրաւորները յափշտակուեցան,  
Գուներնին քնացան.  
Ու բուլը զօրել մարդիկը ձեռքերնին չգտան:  
6 Ով Յակորի Աստուածը, քու յանդիմաննելէդ  
կաւաքը ու ձին անզգայ պառկեցան:  
7 Դուն, ով Տէր, դուն ահաւար ես,  
Եւ ով կընոյ կոյնին քու առջեւդ՝ քու բորկու-  
թեանդ առենլը:  
8 Դուն երկինքէն լսել տուիր դատաստանը.

- Երկիր վախցաւ ու լռեց,  
 9 Երբ Աստուած գտասասան ընելու ելու,  
     Որպէս զի երկրի բոլոր \*չեղերը փրկէ: (Սէլաւ)  
 10 իրաւցընէ մարդուն բարկութիւնը քեզ պիտի գովէ:  
     Ու մասցած բարկութիւնը գուն պիտի զապես:  
 11 Ուստ ըրէք ու կատարեցէր ձեր Տէր Աստուծոյն.  
     Անոր բարորակը եղաղներուն ամէնը  
     Թող ընծաներ բերեն ԱՀաւորին:  
 12 Ինք իշխաններուն հոգին պիտի կարէ.  
     ԱՀաւոր է երկրի թագաւորներուն:

## ՍՍՂՄՈՍ ՀԷ

- Գլաւուոր երաժշափն, իդիթունի վրայ. Ասափի Սաղմար:  
 1 Իմ՝ ձայնս Աստուծոյ է, ու ես կ'աղաղակեմ.  
     Իմ՝ ձայնս Աստուծոյ է, ու ան ինծի պիտի լսէ:  
 2 Իմ նեղութեանս օրը Տէրը փնտուցի.  
     Գիշերը տարածուած էր իմ ձեռքս ու չէր թուլար.  
     Իմ՝ անձ միմիմարսւել չէր ուղեր:  
 3 ԶԼԱՍՏՈՒԱԾ յիշեցի ու անհանգիստ եղայ.  
     Խորհեցայ ու իմ՝ հոգիս մարեցաւ: (Սէլաւ)  
 4 Իմ՝ աչքերս արթուն պահեցիր.  
     Խոռվեցայ ու չկրցայ խօսիլ:  
 5 Միաքս ըերի առաջուան օրերը,  
     Հին ժամանակներուն տարիները:  
 6 Գիշերուան մէջ կը յիշեմ իմ երգու.  
     Իմ՝ պատիս հետ կը խօսիմ.
- Ու իմ՝ հոգիս ալ քննութիւն կընէ:

\*կամ, խեղջերը

- 7 Սրդեզ Տէրը յաւիսեան պիտի մերժէ<sup>o</sup>,  
     Ու ալ բնաւ պիտի չչաճի<sup>o</sup>:  
 8 Միթէ անոր սղորմնթիւնը բոլորավին պակսեցա՞ւ,  
     Ու էր խաստմնեւոք վերջացա՞ւ ազգէ մինչեւ ազգ:  
 9 Միթէ Աստուծ գժութիւն ընելլ մնոցա՞ւ,  
     Միթէ բարկութիւնով արգիլ<sup>o</sup>ց ևր սղորմնթիւնը:  
     (Սէլաւ)
- 10 Ուստի ըսի, Այս է իմ՝ ակարութիւնս,  
     \*Բարձրելցն աշ ձեռքին փոփոխութիւնը<sup>o</sup>:  
 11 Տէրոջը գործերը պիտի յեշեմ.  
     Յիշաւի քու առաջուան հրաշքներդ պիտի յեշեմ:  
 12 Բոլը գործերուգ վրայ պիտի խորհիմ.  
     Ու քու ըստածներուգ վրայ պիտի մտածեմ:  
 13 Ոլ Աստուծ, քու ճամբար սրբութեան մէջ է.  
     Աստուծոյ պիտի մեծ Աստուծ: ով կայ:  
 14 Հրաշքներ ընտղ Աստուծը գուն ես.  
     Քու զրութիւնդ ժողովուրդներուն մէջ ցուցուցիր:  
 15 Քառ բազուկովդ փրկեցիր քու ժողովուրդդ:  
     Ցակորի ու Յովսէկի սրդիները: (Սէլաւ)  
 16 Զուրերը քեզ տեսան, ալ Աստուծ,  
     Զուրերը քեզ տեսան ու գողացին.  
     Անդունդներն ալ սարասփեցան:  
 17 Անզերը ջուր թափեցին.  
     Երկինքները ձայն հանեցին,  
     Նետերուգ ալ գոցին:  
 18 Քու սղորմներիդ ձայնը +երկինքէն էր.

\*կամ, Աստոյն Բարձրելցն աշ ձեռքին տարիները պէ-  
     ու յէշեմ  
     †կամ, մըրիկի մէջ

- Փայլսկները լցու տուին աշխարհի.  
Երկիր սասանեցաւ ու գողոց:  
19 Քու ճանապարհդ ծովուն մէջ է,  
Եւ քու ճամբար մեծ ջուրերուն մէջ է.  
Ու քու շատիղներդ չյն գիտացնիր:  
20 Հօտի պէս քու ժողովուրդիդ տաւաջնորդեցիր  
Մովսէսի ու Ահարոնի ձեռքով:

## ՍԱՂՄՈՍ ՀԸ

Նրգ Ասափայ:

- 1 Ու իմ ժողովուրդս, մաիկ ըրեք իմ \*օրէնքս,  
Խոնարհեցուցէք ձեր ականջը իմ՝ բերնիս խօսքերուն:  
2 Առակով պիտի բանամ՝ իմ՝ բերանս,  
Ու հին ժամանակի խրթնաբանութիւնները պիտի  
խօսիմ:  
3 Զորոնք լսեցինք ու գիտայնք,  
Եւ մեր հայրերը մեղի պատմեցին:  
4 Մենք պիտի չզահենք անոնց որդիներէն.  
Ետքի եկամ աղքին պիտի պատմենք  
Տէրոջը գովութիւնները ու անոր զորութիւնը  
Եւ անոր ըրած հրաշքները:  
5 Վասն զի վկայութիւն հաստատեց Յակոբի մէջ,  
Ու օրէնք դրաւ Խարայէլի մէջ,  
Զորոնք պատմուիրեց մեր հայրերուն,  
Որպէս զի առվիցնեն իրենց որդիներուն.  
6 Որպէս զի գալու ծնանելու աղաքը, առնետ իմա-  
նան,

- Ու ելլէն իրենց որդիներուն պատմեն.  
7 Անոնք ալ իրենց յայս Աստուծոյ վրայ դնելով  
Զմուննան Աստուծոյ գործերը,  
Հապս անոր պատուիրանկները պահէն.  
8 Ու իրենց հայրերուն պէս  
Կամանկոր ու ապստամբ աղդ մը չըլան,  
Այսպէս աղդ մը որ իրենց միրար չեն շիտկած,  
Ու իրենց հոգին հաւասարիմ՝ չէ Աստուծոյ:  
9 Եփրեմի որդիները արնետ սպառապինեալ աղեղնա-  
ւորներ էին,  
Պատերազմին օրը ետ դարձան,  
10 Աստուծոյ ու խոտը չպահեցին,  
Ու անոր օրէնքին համեմատ չուզեցին քալել.  
11 Ու մասցան անոր գործերը,  
Եւ անոր հրաշքները զորոնք իրենց ցուցուցեր էր:  
12 Անոնց հայրերուն առջև հրաշքներ ըրաւ,  
Եգիպտասի երկրն, Տայանիսի գաւառն, մէջ:  
13 Ծովը պատուեց ու վանոնք անցուց,  
Եւ ջուրերն ալ գէզի պէս կանգնեցուց:  
14 Ու ցորեկը տմզով առաջնորդեց անոնց,  
Եւ բալոր գիշերը կոսկի լուսուլ:  
15 Վէմերը պատուեց անսպատին մէջ,  
Ու խմցուց անաց իրը թէ մեծ անդունդէ մը:  
16 Եւ առուներ հանեց վլամին,  
Ու ջուրերը գետերու պէս բղիեցուց:  
17 Բոյց անոնք նորէն մեղքերնին առելցուցին անոր  
գէմ,  
Ու բարկացուցին Բարձրեալը անսպատին մէջ.  
18 Եւ իրենց սիրաերուն մէջ զԱստուծ փորձեցին,  
Կերակուր ուղելով իրենց անձերուն համար.

\*կամ, վարժութիւննա

- 19 Եւ Աստուծոյ դէմ խօսեցան ու ըսին,  
Միթէ կարո՞ղ է Աստուծ  
Անսպասին մէջ սեղան պատրաստել.  
20 ԱՇ վէմին զարկաւ, ու չուրերը դուրս բղիեցին,  
Ու առուները վաղեցին,  
Արդեօք հաց ալ կրնա՞յ տալ.  
Արդեօք միս կը պատրաստէ<sup>o</sup> իր ժողովուրդին հա-  
մար.  
21 Ուստի Տէրը լսեց ու բարկացաւ,  
Եւ կրակ բորբսքեցաւ Յակոբի մէջ,  
Ու նաև բարկութիւն ելաւ Խարսչէի վրայ.  
22 Վասն զի Աստուծոյ հչաւատացին,  
Ու յայտնին անոր փրկութեամբ վրայ չդըին.  
23 Թէպէս ինք վերէն հրամոն ըրեր էր ամպերուն,  
Ու երկինքի դռները բացեր էր,  
24 Եւ կերակուրի համար անոնց վրայ մանանայ տեղա-  
ցեր էր,  
Ու երկինքի ցորենը առւեր էր անոնց,  
25 \*Մարդիկ հերշակներուն հացը կերան.  
Կշանալու չափ պաշար զրկեց անոնց,  
26 Երկինքի մէջ արեւելեան հովը համեց,  
Եւ իր զօրութիւնով հարաւացին հովը բերաւ.  
27 Եւ անոնց վրայ փոշիի պէս միս տեղաց,  
Ու ծովու աւազին չափ թեւաւոր թռչուններ,  
28 Եւ անոնց բանակին մէջ,  
Անոնց վրաններուն չորս կողմը, իջեցուց,  
29 Ու կերան և աղեկ կշռացան.

\*Կամ, Անոնց ամէն մէկը աղմուականներուն հացը կե-  
րան

- Ու իրենց ցանկութիւնը իրենց տուաւ.  
30 Իրենց ցանկութիւնն զարք չմնացին.  
Եւ քանի որ իրենց կերակութիւնը բերանն էր,  
31 Աստուծոյ բարկութիւնը անոնց վրայ բորբսքեցաւ,  
Ու սպաննեց անոնց պարարտներէն,  
Ու գեաինը զարկաւ Խարսչէլի ընտիրները,  
32 Այս բարձր բաներուն վրայ նորէն մեղանչեցին,  
Ու չհաւասարացին անոր հրաշքներուն,  
33 Եւ ունացինութեան մէջ սպառեց անոնց օրերը,  
Եւ ահի մէջ՝ անոնց տարիները:  
34 Երբ կը սպաննէր զանոնք, զինք կը ինդրէին.  
Ու ես կը դառնային, և զԱստուծ կանուխ կը փընտ-  
ռէին:  
35 Ու կը յիշէին որ Աստուծ իրենց Վէմն էր,  
Եւ Բարձրեալ Աստուծը իրենց Փրկին էր:  
36 Սակայն իրենց բերնովը կեղծաւորութիւն Կ'ընէին  
անոր,  
Ու իրենց լեցուավը սուտ կը խօսէին անոր.  
37 Եւ իրենց սիրտը ուղիղ չէր անոր առջեւ,  
Ու հաւատարիմ չէին անոր ուփանին մէջ:  
38 Բայց ինք ողբանած ըլլալով՝ անոնց անօրէնութիւնը  
կը քաւեր,  
Ու չէր կրօնցներ պահանգ.  
Եւ շատ անգամ կը դարձնէր իր բարկութիւնը,  
Ու չէր բորբսքեցներ իր բարձր սրամութիւնը,  
39 Վասն զի կը յիշէր թէ անոնք մարմին են,  
Հովի մը պէս՝ որ կ'երթայ ու ես չդառնար:  
40 Գոտի՛ անգամ զանիկա սրբոցաւցին անսպասին  
մէջ,  
Ու բարկացուցին զանիկա անջուր տեղին մէջ,

- 41 Եւ դարձան՝ զԱստուած փորձեցին,  
 Ու Խարսչէի Սուբբը նեղացուցին։
- 42 Զիշեցին անոր ձեռքք,  
 Ու այն օրը՝ որ զիրենք թշնամիէն փրկեց։
- 43 Եւ թէ ի՞նչպէս իր նշանները ըստաւ Եղիպատօսի մէջ,  
 Ու իր հրաշքները Տայանիսի դաշտին մէջ։
- 44 Ու արիւն դարձուց անոնց գետերը  
 Եւ անոնց առաւնները, որ չկրցան խմել։
- 45 Շոնառնենքներ զրկեց անոնց վրայ, սրմէք կերտոն զա-  
 նոնք,  
 Ու գորտեր սրմէք ապականեցին զանոնք։
- 46 Ու անոնց բերքը գրուիծին տուտու,  
 Եւ անոնց վաստակը՝ մարտիին։
- 47 Անոնց որթերը փճացուց կարկուտավ,  
 Ու անոնց ժանառաթզենները խոշր կարկուտավ։
- 48 Եւ անոնց անսառնները կարկուտին մատոնեց,  
 Ու անոնց հօտերը կայծակին։
- 49 Իր սաստիկ բարկութիւնը զրկեց անոնց վրայ,  
 Արտմառաթիւն ու բարկութիւն ու նեղութիւն,  
 \*Զար հրեշտակները զրկելով։
- 50 Իր բարկութեանը ճամբայ բացաւ,  
 Անոնց անձը մահուանէ չխնուցեց,  
 Հապաւ անոնց գիւտնքը ժանառախափի մատոնեց։
- 51 Ու ամէն տնդրանիկը սպաննեց Եղիպատօսի մէջ,  
 Եւ ժոռջիններները՝ Քամի վրաններուն մէջ։
- 52 Ու իր ժաղովուրդը ոչխարներու պէս հանեց,

\*Կամ, Զարիկներու

†Կամ, անսառնները. Ել. թ. 3, 6:

‡Եբ. զօրութեան սկիզբը

- Ու զանոնք հօտի պէս վարեց անապատին մէջ։
- 53 Եւ անոնց ապահնովութեամբ առաջնորդեց, ու շվամի-  
 ցան.  
 Իսկ անոնց թշնամինները ծովը ծածկեց։
- 54 Ու զանոնք ապարաւ իր սրբութեան սահմանը,  
 Այն լեռը՝ զըր իր աշ ձեռքքը սասցեր էր.
- 55 Ու անոնց առջեւէն աղգեր վանաեց,  
 Եւ չափով ժառանգութիւն բաժնեց անոնց,  
 Ու Խարսչէի ցեղերը անոնց վրաններուն մէջ լընտկե-  
 ցուց։
- 56 Բայց անոնք փորձեցին ու սրդողցուցին Բարձրեալ  
 Աստուածը,
- Ու չպահեցին անոր վկայութիւնները.
- 57 Եւ իրենց հայրերուն պէս ետ դարձան ու նենդութիւն  
 ըրին.
- Խարերայ աղեղի պէս խսորեցան։
- 58 Վասն զի զանիկա սրդողցուցին իրենց բարձր տեղե-  
 րովը,
- Ու նախանձի շարժեցին զանիկա իրենց կուռքերովը։
- 59 Աստուած լսեց ու բարկացաւ,  
 Եւ շառ անարգեց Խարսչէլը.
- 60 Ու Սելսի խորանը մերժեց,  
 Այն վրանը՝ զըր մարդոց մէջ կանգներ էր.
- 61 Եւ \*իր զօրութիւնը գերութեան մատոնեց,  
 Ու իր փառքը՝ թշնամիններուն ձեռքք.
- 62 Եւ իր ժաղովուրդը առը մատոնեց,  
 Ու իր ժառանգութեանը վրայ բարկացաւ։
- 63 Անոր երթառարդները կրակը կերտաւ։

\*Կամ, անոր

- Ու անոր \*աղջիկները սուդ չըրփն՝ :
- 64 Անոր քահանաները սրով ինկան,  
Ու անոր որբեւապիները չացին:
- 65 Բայց Տէրը արթնցաւ որպէս թէ քանէ՝  
Գինիւէ սթափած զօրաւոր մարդու մը պէս,
- 66 Ու իր թշնամիները ետեւնուն զարկաւ.  
Յաւիտենական նախատինք տուաւ անոնց:
- 67 Եւ Յալսէփի վրանը մերժեց,  
Ու Եփրեմի ցեղը շնարեց,
- 68 Հապա Յուդայի ցեղը ընարեց,  
Ու Ալոն լեռը զար սիրեց.
- 69 Եւ իր սրբարանը շինեց բարձր բարձր պէս,  
Երկիւ պէս զըս յաւիտեն հասատեց:
- 70 Ու իր Դաւիթ Ժաւառն ընարեց,  
Եւ զանիկս ոչխարի փարախներէն առաւ.
- 71 Ծիծ առող ու իւրաներուն ետեւէն բերաւ զանիկս  
Որպէս զի իր Յակով ժողովուրդը  
Ու իր Խորսոյէ Ժաւառն գումարէ:
- 72 Անիկա ալ հավատեց զանոնք իր սրտին անմեղութիւնը,  
Ու իր ձեռքերուն յաջողակութիւնովը առաջնորդեց  
անոնց:

## ՍՈՒԼՄՈՍ ՀՅ

Սաղմոս Ասափայ:

- 1 Ով Աստուած, հիմանաները քու Ժաւառդու-  
թեանդ մէջ մօտան,

\*կամ, աղջիկներուն համար սուդ ընով չկար

- Քու սուրբ տաճարդ պղծեցին,  
Երսւասալմէր աւերակներու գարձուցին,  
2 Քու ծառաներուդ գիւրը  
Երկինքի թռչուններուն կերակար տուին,  
Քու սուրբերուդ մարմինը երկրի գալաքններուն,  
3 Անոնց արիւնը չուրի պէս թափեցին Երսւասաղէմի բո-  
լըրտիքը,  
Ու մէկը չկար որ զանանդ թաղէր:  
4 Մեր գրացիներուն նախատինք եղանք,  
Ծաղը ու կաստէլ մեր բոլորափք եղաններուն:  
5 Մինչև ե՞րբ, ալ Տէր. միշտ պիտի բարկանա՞ս.  
Քու նախանձդ կրակի պէս պիտի բորբռի՞  
6 Թափէ քու բարկութիւնդ ոյն աղդերուն վրայ՝  
Որոնք քեզ չեն ճանչնար,  
Ու այն թագաւորաւթիւններուն վրայ՝  
Որոնք քու անունդ չեն կանչեր:  
7 Վասն զի Յակոբը կերան,  
Ու անոր բնակութիւնը աւերակ գարձուցին:  
8 Մի յիշեր մեզի գէմ առաջնուան անօրէնութիւն-  
ները,  
Թողլ շուտով հանին մեզի քու զղրմութիւններդ,  
Վասն զի խիստ թշուառապանք,  
9 Քու անուանդ փառքին համար  
Օքնէ մեզի, ալ մեր փրկութեան Աստուածը,  
Եւ քու անուանդ համար փրկէ մեզ,  
Ու մեր մեղքերը քաւէ:  
10 Ինչո՞ւ ըսեն հեթանաները թէ Ո՞ւր է անոնց Աստ-  
ուածը,  
Թողլ յայտնուի հեթանաներուն մէջ մեր աչքերուն  
առաջն

- Քու ծաւաներուդ թափուած արիւնին վրէժը:
- 11 Կապուածին հաւաչանքը քու առջեւդ թող ելէ:  
Քու զօրութեանդ մեծութիւնով՝  
Մահուան մոտանուածները ապրեցուր.
- 12 Ու եօթնապատիկ հասուցում ըրէ մեր դբացիներուն  
իրենց ծոցին մէջ  
Այն իրենց նախասնիքին քոիորէն, որով քեղ անար-  
գեցին, ով Տէր:
- 13 Բոյց մնեք, քու ժողովուրդդ ու քու արօտիդ ոչ  
խարները,  
Յաւիտեան քեղ պիտի գովենք,  
Ու քու փառքդ պիտի պատմենք աղդէ մինչև աղդ:

## ՍԱՂՄՈՍ 2

- Գլաւոր երաժշտին, հօանիմէտութի վրայ. Ասափի Սալմոսը,
- 1 Ականջ զիր, ով նարսցէի չափեւը,  
Որ Յովուրի հօտի պէս կ'առաջնորդես.  
Դուռն որ քերարիէից կրայ կը նատիս, պայծառացցիր:
- 2 Եփեմի ու Յենիսամինի և Մանսէի առջեւ  
Արթնցուր քու զօրութիւնդ,  
Ու եկուր մեղ ֆրկելու:
- 3 Ով Ասուած, մեղ գարձուր,  
Եւ քու երեսդ փայլեցուր, ու պիտի ֆրկունք:
- 4 Ով Տէր, զօրաց Ասուած,  
Մինչև ե՞ր կը բարկանսա քու ժողովուրդիդ աղօթ-  
քին դէմ:
- 5 Արտասութի հաց կը կերցնես տնոնց,  
Ու մեծ չափով արտասութ կը խմցնես անոնց:
- 6 Մեղ կոփեի պատճառ կընես մեր դբացիներուն,

- Ու մեր թշնամիները հւած ծաղր կ'ընեն իրենց մէջ:
- 7 Ով զօրաց Ասուած, մեղ գարձուր,  
Եւ քու երեսդ փայլեցուր, ու պիտի ֆրկունք:
- 8 Եփիպասութ որթ մը փոփագբեցիր,  
Հեթանոսները վանակեցիր ու զանիկա անկեցիր:
- 9 Անոր առջեւէն ու պատրաստեցիր,  
Ու անոր արմատները հասաւաեցիր.  
Եւ անիկա երկիրը լեցուց:
- 10 Եւոները ծածկուեցան անոր հավոնիսլը,  
Ու անոր ճեղլերը Ասուածոյ եղեւիններուն ուն եղան:
- 11 Իր ճեղլերը երկնցոց մինչև ծովը,  
Ու իր բազուցները մինչև Գեալը:
- 12 Խնչու ֆլյուցիր անոր ցանկելը,  
Որ ճամբարյէն բալոր անցնանչերը զանիկա փրցնեն:
- 13 Անտառին խոլը ապականեց զանիկա,  
Ու գաշտի գաղանները կերան զանիկա:
- 14 Ով զօրաց Ասուած, կ'աղջաչեմ, դարձիր.  
Նոյէ երկինքին ու աես,  
Ու սոցելու եղիր այս որթին:
- 15 Եւ այս տունկին զոր քու աջ ձեռքովդ անկեցիր,  
Ու որդիին՝ զօր քեզի համար հասաւաեցիր:
- 16 Կրակուլ պյորուած ու կարուած է.  
Քու երեսիր սաստելէն կը կորնչին:
- 17 Թող քու ձեռքդ քու աջ ձեռքովդ մարդուն վրայըլլայ,  
Ու մարդու որդիին վրայ՝ զօր քեզի համար հասաւ-  
աեցիր:
- 18 Մինք ալ ետ պիտի չդառնանք քեզմէ.  
Կենդանացուր մեղ, ու քու անոնց պիտի կանչենք:
- 19 Ով Տէր, զօրաց Ասուած, մեղ գարձուր,  
Եւ քու երեսդ փայլեցուր, ու պիտի ֆրկունք:

## ՍՈՂՄՈՍ ԶԲ.

- Գլմաւոր երաժշտին, կիթթիթի վրայ. Ասափի Սուշտուց՝
- 1 Օնծացէք Աստուծոյ տաջե, որ մեր գօրութիւնն է,  
Ուրախութեամբ աղաղակեցէք Յակոբի Աստուծոյն:
  - 2 Սալմոն առէք ու թմբուկը բերէք,  
Նու աննշչ քնարը՝ տաւիզին հետո
  - 3 Փող հնչեցուցէք ամսու զիմուն,  
\*Նաև լուսնի լըմնն ատենը՝ մեր անին օրը.
  - 4 Վասն զի ասիկա Խորացէի՛ կանոն մըն է,  
Յակոբի Աստուծոյն հրամանն է:
  - 5 Ինք վկայութիւն դրաւ տափկա Յալվէփի մէջ,  
Եղիպատի երկրին վրայ ելած տանենք.  
Ուր լեզու մը լսեցի զր չէի զիտեր:
  - 6 Անոր թիկունքը հեռացուցի բւեւէն:  
Անոր ձեռքերը հանգչեցան կողովէն:
  - 7 Նեղութեան մէջ կանչեցիր, ու քեզ փրկեցի.  
Պատասխան տուի քեղի որսամանն ծածկոցին մէջէն.  
Փորձեցի քեզ Մերիպայի ջուրին քով. (Աէլա)
  - 8 Լուէ, ուր իսր ժողովուրդու, ու վկայեմ քեզի.  
Ու Խորացէլ, եթէ ինծի մոփկ ընես,
  - 9 Օտար աստուած ըլլայ քու մէջտ,  
Ու օտար աստուծոյ երկրպագութիւն լընես:
  - 10 Ես եմ քու Տէր Աստուածդ,  
Որ հանեցի քեզ Եգիպտասի երկրէն.  
Լայն բաց քու բերանդ,  
Ու զանիկա ես պիտի լեցնեմ:

\*Կամ, Որոշուած Ժամանակին

- 11 Բոլց իմ ժողովուրդու մոփկ չըստաւ իմ ձայնս,  
Ու Խորացէլ զիս շուզեց:
- 12 Ուստի զանոնք իրենց սրտին կամակորութեանը թուցիցի,  
Ուրպէս փի իրենց խորհուրդներուն համեմատ քալեն  
13 Երանի՛ թէ իմ ժողովուրդու ինծի մոփկ ընէր,  
Ու Խորացէլ իմ ճամբաներուս մէջ քալէր.
- 14 Շուտավ պիտի խնարծէցնէի՛ անոնց թշնամիները,  
Ու ձեռքս պիտի դարձնէի անոնց նեղիներուն վրայ:
- 15 Տէրը ասազնիրը \*խոնարհութիւն պիտի ընէին իրեն,  
Ու անոնց ժամանակը յաւիտեան պիտի ըլլար:
- 16 Ան պիտի կերակրէր զանոնք պարարա ցրթնավ.  
Ու վէմն Հայոց մեղով քեզ պիտի կշտացնէի:

## ՍՈՂՄՈՍ ԶԲ.

Սաղմոս Ասափայ:

- 1 Աստուած կոյնած է Աստուծոյ ժողովքին մէջ,  
+Աստուածներուն մէջ գտատատան կը տեսնէ:
- 2 Մինչէ ե՞րբ անիլսաւութեամի պիտի գտակը,  
Ու ամեարիշաներուն աշտաւութիւն պիտի ընէր:  
(Աէլա)
- 3 Դատասանն ըրէք աղքատին ու որբին.  
Խեղճն ու չքաւորին իրաւունք ըրէք:
- 4 Փրկեցէք աղքատը ու անանկը,  
Ամեարիշաներուն ձեռքէն ազատեցէք զանանդ:
- 5 Զեն իմանար ու միաք չեն առներ,

\*Եթէ, պիտի սոէլին

+Կամ, Դատասաններուն, Ել. իս. 6; իբ. 28:

## ԳԻՐՔ ՍԱՂՄՈՍՍՅ

- Խաւարի մէջ կը պարտին.  
Երկրի բալոր սիւները շարժեցան:  
6 Ես ըստ թէ Դուռք աստուածներ էք,  
Ու դուռք ամէնդ Բարձրելցյն որդիներն էք.  
7 Բայց մարդոց պէս պիտի մեռնիք,  
Ու իշխաններէն մէկուն պէս պիտի լինոք:  
8 Երբ, ով Աստուած, դատէ երկերը,  
Վասն զի բալոր աղգերը դուն պիտի ժառանգեաւ

## ՍԱՂՄՈՍ ԶԳ

Ասափի երգը ու Սաղմոսը

- 1 Ով Աստուած, լուռ մի կենար.  
Անձան մի ըլլար, ու հանգարտ մի կենար, ով Աստ-  
ուած:  
2 Վասն զի տհա քու թշնամիներդ կը դուռան,  
Ու քեզ ասողները գլուխ կը վերցնեն.  
3 Խորամննկութեան հնարք կը դանեն քու ժողովուր-  
դիւ գէմ:  
Ու խորչուրդ կ'ընեն քու պահպանածներուդ գէմ:  
4 Կ'ըսեն թէ Եկէ, կորսնցնենիք զանոնք որպէս զի աղգ  
ջուան,  
Ու ամ չյիշուի Խորսյէլի անունը:

- 5 Վասն զի միաբան պատով խորչուրդ ըրին,  
Ու քեզի գէմ դաշնակցութիւն ըրին  
6 Երդմիկ վրանները ու Խամոյէլացիք,  
Մոլար ու Հագարացիք,  
7 Գերազ ու Ամոն և Ամագէկ,  
Փղշտացիք՝ Տիւրսի բնակիչներուն հետո  
8 Նաև Ասուր անոնց հետ միաբանեցաւ.

## ԳԻՐՔ ՍԱՂՄՈՍՍՅ

- Պովտի որդիներուն ձեռնտու եղան: (Սէլաւ)  
9 Լըրէ անոնց ինչպէս Մադիամի,  
ինչպէս Սիսարայի ու Յաբինի ըստ կիսոն հեղեղատին  
քով.  
10 Անոնք Ենդովիրի մէջ աստուկեցան,  
Ազրի ու եղան երկրի վրաս:  
11 Անոնց իշխանները Օրէրի ու Զէրի պէս,  
Ու անոնց բալոր երեւելիները Զերէէրի ու Սաղմանայի  
պէս ըրէ:  
12 Որոնք ըսին թէ Աստուծոյ բնակարանները  
Մենք ժառանգէնք մեզի համար:  
13 Ով իմ Աստուածս, անոնք \*մշեղի պէս,  
Համի առջև եղող շիւղի պէս ըրէ:  
14 Ինչպէս կրակը անտառը կ'սպիրէ,  
Ու բոյց լեռները կը բունկցնէ:  
15 Այնպէս հալածէ զանոնք քու մըրիկովդ:  
Ու խուվութեան մէջ ձգէ զանոնք քու փոթորիկովդ:  
16 Լեցուր անոնց երեսները անարգանքով:  
Որպէս զի քու անունդ խնդրեն, ով Տէր:  
17 Թօղ ամինան ու խուվին յաւիտեան,  
Եւ ամօթալից ըլլան ու կրտսեին:  
18 Որպէս զի գիտան թէ մրոյն դուն, որուն անունը  
Եհովան է,  
Բարձրեալ ես բալոր երկրի վրայ:

## ՍԱՂՄՈՍ ԶԳ

Գլխաւոր երաժշտակին, կիթթիթի վրայ. Կորխի որդիներուն Սաղմոսը,

- 1 Խնչպէս սիրելի են քու բնակարաններդ,

\*կամ, անիւի

- Ով զօրաց Տէր:
- 2 Իմ անձս կը փափաքի ու նաև կը մարի  
Տէրոյթ սրաչներուն համար,  
Իմ միբառ ու մարմին ցնծութեամբ կ'աղաղակեն  
Կենդունի Աստուծոյն:
- 3 Ճնճղուկն ալ տուն գտաւ,  
Ու ծիծեռնիկը իրեն բյոն՝ իր ծագերը դնելու համար,  
Քու սեղաններուդ քով, ով զօրաց Տէր,  
Իմ Թագաւորս ու Աստուծաւ
- 4 Երանի՛ աննոց որ քու առանդ մէջ կը բնակին.  
Աննիք անդադար քեզ պիտի օրչնեն: (Աէլաւ)
- 5 Երանի՛ այն մարդոց սրոնց զօրութիւնը քեզմէ է,  
Ու իրմէց սրմին մէջ բանու ճամբաները կան:  
6 Արտասուաց հովիտէն անցնելով աղբեւրի պէս կ'ը-  
նեն զանիկա.  
Առաջին անձեռւն ալ \*օրչնութիւնով պիտի ծածկէ  
շանէիս:
- 7 Աննիք զօրութենէ զօրութիւն կ'երթան,  
Մբաւ որ Ախօնի մէջ Աստուծոյ առջև երեւնան:
- 8 Ով Տէր, զօրաց Աստուծած, լսէ իմ աղօթքս,  
Ականջ դիր, ով Յակոբի Աստուծը (Աէլաւ)
- 9 Ով մեր վահանը Աստուծած, տես,  
Ու քու օծեամբետ երեսը նոյէ:
- 10 Վասն զի քու սրաչներուդ մէջ  
Մէկ օրը հազարէն առջէկ է.  
Աւելի ընտրեցի իմ Աստուծոյս տանը շէմին վրայ  
կենալ,  
Քան թէ ամբարշտաց վրաններուն մէջ բնակիլ:

\*կամ, աւազանները կը լեցնէ

- 11 Քանդի Տէր Աստուծած արև ու վահան է.  
Տէրը չնորհք ու փառք պիտի տայ,  
Բարութիւն մը պիտի չպակսեցնէ  
Ուշղութեամի քալողներէն:
- 12 Ով զօրաց Տէր,  
Երանելի է քեզի յաւսացող մարդը:
- ### ԱՍԼՄՈՍ ԶԵ
- Գլխաւոր երաժշտին. Կորիկի որդիներուն Սաղմոսը
- 1 Ով Տէր, գուն հաւնեցար քու երկրիդ,  
Յակոբի գերութիւնը գարձուցիր.
- 2 Քու ժողովուրդիդ անօրէնսւթիւնը ներեցիր,  
Աննոց բալոր մեղքերը ծածկեցիր: (Աէլաւ)
- 3 Հետացուցիր քու բոլոր սրամնութիւնդ,  
Ետ գարձար քու սաստիկ բարկութենէդ:
- 4 \*Մեզ գարձաւը, ով մեր փրկութեան Աստուծածը,  
Եւ քու բարկութիւնդ որ մեր վրայ է գագրեցուր:
- 5 Միթէ յաւստեան պիտի բարկանա՞ն մեղի.  
Քու բարկութիւնդ ապէտ մինչև ապէտ պիտի երկնցնե՞ն:  
6 Միթէ ետ պիտի չդաստանա՞ն ու մեզ կենդանացնես,  
Որպէս զի քու ժողովուրդիդ քեզմնի ուրախ ըլլոյ:  
7 Ցուցուր մեզի, ով Տէր, քու ողբրմնութիւնդ,  
Եւ քու փրկութիւնդ մեզի տուր:
- 8 Պիտի լսեմ լինչ որ կը խօսի Տէր Աստուծ,  
Վասն զի խաղաղութիւն պիտի խօսի իր ժողովուրդին  
ու իր ուռբերուն,  
Ու յիմորութեան չդասնան անոնք:

\*կամ, Մեզի գարձիր

## ԳԻՐՔ ՍԱՂՄՈՍԱՅ

- 9 Արդարեւ իր փրկութիւնը մօտ է իրմէ վախցողներուն,  
Որպէս զի մեր երկրին մէջ փառք բնակին  
10 Ողորմութիւնը ու ճշմարտութիւնը իրարու պատա-  
հեցան,  
Արդարութիւնը ու խաղաղութիւնը էրու համբու-  
րեցին:
- 11 Ճշմարտութիւնը երկրէ պիտի բուռնի,  
Ու արդարութիւնը երկնքէ վար պիտի նային  
12 Նաև Տէրը բարութիւն պիտի տայ:  
Ու մեր երկերը իր պատուղը պիտի տայ:  
13 Արդարութիւնը անոր առջեւէն պիտի երթայ:  
Ու \*իր գնացքները ճամփու՝ պիտի դնէ:

## ՍԱՂՄՈՍ 29.

Աղօթք Դաւթի:

- 1 Պէտ Տէր, իսնարչեցուք քու ակսնջդ.  
Պատասխան տուր ինծի, վասն զի աղքատու տնանկ եմ:  
2 Պահէ իմ անձս, վասն զի ես սուրբ եմ.  
Պէտ իմ Աստուածս, քեզի յուսացող ծառադ դուն  
փրկէ:  
3 Ողորմէ ինծի, ով Տէր,  
Վասն զի քեզի կը կանչեմ տմէն օր:  
4 Ուրախացուք քու ծառայիդ անձը,  
Վասն զի գէպի քեզ կը վերցնեմ իմ անձս, ով Տէր:  
5 Վասն զի դուն, ով Տէր, բարի ու ներսղ ես.  
Եւ խասո ողորմած՝ սյն ամէնուն որոնք քեզի կը  
կանչեն:

\*կամ, մբ իր քոյլերուն ճամփուն մէջ

## ԳԻՐՔ ՍԱՂՄՈՍԱՅ

- 6 Ականջ գեր իմ աղօթքիս, ով Տէր,  
Ու մաիկ ըստ իմ աղաչանքներուս ձայնը  
7 Նեղութեանս օրը քեզի Կ'աղաղակեմ,  
Վասն զի դուն ինծի կը պատասխանես  
8 Աստուածներուն մէջ քեզի նման մէկը չկայ, ով  
Տէր,  
Եւ քու գործերուդ պէս չկայ:  
9 Բայլը ազգերը, զորնկ դուն ստեղծեցիր, պիտի գան  
Ու երկրագութիւնն ընեն քու առջեւդ, ով Տէր,  
Եւ քու անուանդ փառք պիտի տան:  
10 Վասն զի դուն մեծ ու հրաշքներ գործող ես,  
Աստուած միայն դուն ես  
11 Ով Տէր, սորվեցուք ինծի քու ճամբադ,  
Որպէս զի քու ճշմարտութեանդ մէջ քալեմ.  
\*Միացուք իմ սիրոս, որպէս զի քու անունեդ վախ-  
նայ:  
12 Իմ բոլոր պատվա քեզ պիտի գովեմ, ով Տէր, իմ  
Աստուածս,  
Ու յաւիտեան պիտի փառաւորեմ քու անունդ:  
13 Վասն զի քու ողորմութիւնդ մեծ եղաւ իմ վրա.  
Ու դուն փեկեցիր իմ անձս խորուն զ գորկեն:  
14 Ով Աստուած, ամբարտաւանները ինծի դէմ ելուն,  
Ու բանաւորներուն ժաղավքը իմ անձս փնտուեցին,  
Եւ քեզ երենց առջեւ չդրին:  
15 Բայց դուն, ով Տէր, գթած ու ողորմած Աստուած ես,  
Երկայնամիտ ու ողորմութիւնով և ճշմարտութիւ-  
նով առաւա ես:  
16 Նսոյէ ինծի ու ողորմէ ինծի.

\*կամ, իմ սիրոս պիտի ուրախանայ

Քու զօրութեւնդ ասւր քու ծառապիդ,

Ու քու աղսկինիդ որդին փրկէ:

17 Բարութեւն նշան մը ըրէ ինձի,

Որպէս զի զիս ասսզները տեսնեն ու ամչնան.

Վասն զի գուն, ով Տէր, ինձի օգնեցիր ու զիս միի-  
թարեցիր:

## ՍԱՂՄՈՍՈՒ ԶԵ

Կողմի որդիներուն Սաղմոսը ու երգը:

1 Անոր հիմերը սուրբ լեռներուն վրայ են:

2 Տէրը Սիօնի դուները

Յակոբի բալոր բնակարաններէն տեղի կը սիրէ:

3 Փառուսոր բաներ կը պատմուին քեզի համար,

Ով Աստուծոյ քաղաքը: (Սէլսու)

4 \*Իահաքը ու Բաբելոնը պիտի յիշեմ զիս ժամացող-  
ներուն մէջ.

Աչա Փղացացւոց երկիրը ու Տիւրոս Քուշի հետ.

Ասոնք ու Հոն ճնաւ:

5 Ու Ախոնի համար պիտի ըստի թէ:

Այս մարդը ու այն մարդը հոն ճնաւ,

Եւ Բաբելոնը ինք պիտի հաստատէ զանիկա:

6 Տէրը ազգերը գրած ժամանակը պիտի ըսէ:

Թէ Ասիկա հոն ճնաւ: (Սէլսու)

7 Ու երգեցողները, նոյնպէս ու ժամնահարները ոէրէ  
ըսէն,

Իմ բոլոր աղբեւրներս քեզմէ են:

\*Ոյսինքն, Եգիպտոսու

Քամ, Ճանչցողներաւ պէս

Քամ, պար բոնողները

## ՍԱՂՄՈՍՈՒ ԶԵ

Կորիս որդիներուն երգը ու Ասդրաը. Գլխաւոր երաժշտին,  
Մահալաթ-էւանօթի վրայ. Եման Եղահացիի երգը:

1 Ով Տէր, իմ փրկութեան Աստուածը,  
Յորեկը կ'աղաղակեմ՝ ու գիշերը քու առջեւդ թող ելէ.

2 Իմ աղօթքս քու առջեւդ թող ելէ.

Խնձորչեցսը քու աղօթք իմ՝ աղաղակիս:

3 Վասն զի իմ անձ չարկիներով լեցուեցաւ,  
Ու իմ կեռնքը գերեզմանին մօտեցաւ:

4 Գուբր իջնողներուն չետ սեպուեցայ.  
Ույժ չունեցող մարդու մը պէս եղայ:

5 Մեռելներաւ մէջ ինկած էր  
Գերեզմանի մէջ պատկող մեռցուածներուն պէս,  
Զորոնք ա՛լ չես յեշեր:

Ու քու ձեռքէդ մերժուած են:

6 Դուն զիս ամէնէն խորունկ գուբրին մէջ դրիր,  
Խաւարսպին անդունդներուն մէջ:

7 Քու սրտմաւթիւնդ ժանրացաւ իմ՝ վրաս,  
Եւ քու բալոր ալեքներովդ պէս չարչարեցիր: (Սէլսու)

8 Իմ ճանչուանդներ ինձմէ հեռացուցիր,  
Զիս գարշելի ըրիր անոնց առջեւ.

Գոցուեցայ ու գուլս չեմ ելլեր:

9 Տառապանքէն աչքեր վատեցան.  
Ամէն օր քեզի աղաղակեցի, ով Տէր,  
Զեռքերս քեզի երկնցուցի:

10 Միթէ մեռելներո՞ւն հրաշք պիտի ընես.  
Միթէ մեռածները պիտի ելեն ու քեզ գովեն:

(Սէլսու)

- 11 Միթէ կը պատմուի՞ քու ողբրմութիւնդ գերեզման նկն մէջ,
- 10 - քու Ճշմարտութիւնդ՝ կորսատեան մէջ :
- 12 Միթէ կը ճանչցուի՞ն քու հրաշքներդ խաւարին մէջ,
- 10 - քու արդտուութիւնդ՝ մասացման երկրին մէջ :
- 13 Բայց ես, ով Տէր, քեզի աղաղակեցի,
- 10 իմ՝ աղօթքս առաւաւանց քու առջեւդ պիտի ելլէ:
- 14 Ով Տէր, ինչո՞ւ իմ՝ անձս կը մերժես,
- 10 - քու երեսդ կը ծածկես լիծմէ:
- 15 Ես իւեղձ եմ՝ ու մանկութենէսի վեր մեռնելու վրաց եմ: Քու ահերդ քաշեցի ու խռովեցայ.
- 16 Քու սրամութիւնդ իմ՝ կրաս իջաւ,
- 10 ես քու զարհուրմանքներդ զիս կրամնցուցին:
- 17 Ամէն օր ջուրի պէս զիս պատեցին,
- Մէկտեղ չորս կողմն առին:
- 18 Հեռացուցիր ինծմէ սիրելին ու բարեկամը,
- իմ՝ ճանչուարներս խաւարի մեջ են:

## ՍԱԼՄՈՍ ԶԹ

Եթան Եղահացին երգը:

- 1 Տէրոջը սղորմութիւնները յաւիտեան պիտի երգեմ: Քու հաւասարմութիւնդ իմ՝ բերնավս աղգէ աղգ պիտի պատմեմ:
- 2 Վասն զի ըսի թէ Ողբրմութիւնը յաւիտեան պիտի շնուռւ.
- Երկինքի մէջ պիտի հասասաես քու հաւասարմութիւնդ:
- 3 Ես իմ՝ ընտրեալիս հետ ուխտ ըրի,
- իմ՝ Դաւիթ ծառայիս երգում ըրի, չեւլէ:

- 4 Քու սերունդդ յաւիտեան պիտի հասատատեմ՝ Եւ աղգէ աղգ պիտի շնուռը քու աթօսուդ (Աւլու)
- 5 Երկինք ալ կը փառաւարուէ քու հրաշքներդ, ով Տէր, Եւ քու հաւասարմութիւնդ՝ սուրբերուն ժողովքին մէջ:
- 6 Վասն զի ով կոյ երկինքի մէջ Տէրոջը հաւասար.
- Ով \*Հզօրաց սրդիներուն մէջ ով կը նմանի Տէրոջը:
- 7 Աստուած իխատ զարհուրելի է սուրբերուն ժողովքին մէջ,
- Եւ ահաւար է ամէն իր բոլորակը եղաղներուն:
- 8 Ով Տէր, զօրաց Աստուած, ով գէ քեզի պէս Հզօր Տէր. Եւ քու հաւասարմութիւնդ քու բոլորակիբդ է:
- 9 Դուն կը ափես ծովան հպարտամաթեանը վրայ.
- Երբ անոր սրկները կը բարձրանան, դուն կը հանդ գարսեցնես զննոնք:
- 10 Դուն Ճնշեցիր Ինահաբը խոցուածի պէս.
- Քու զօրութեանդ բազուկովը ցրուեցիր քու թշնամներդ:
- 11 Բուկդ է երկինք ու քուկդ է երկիր.
- Դուն հիմնեցիր աշխարհը ու անոր լիութիւնը:
- 12 Հիւսիսը ու Հարաւը գուն ստեղծեցիր.
- Թաքօր ու Հերմին քու անունավդ կը ցնծան:
- 13 Դուն զօրաւար բազուկ ունիս.
- Քու ձեռքդ ուժով է, քու աջ ձեռքդ բարձրացած է:
- 14 Արդարութիւնը ու իրաւունքը քու աթօսուիդ հիմն են, Աղորմութիւնը ու Ճշմարտութիւնը քու երեսիդ առջեւէն կ'երթան:

\*Կամ, աստուածոց

- 15 Երանի՛ սյն ժողովլուրդին որ գիտեն՝ \*աղբարարու-  
թեան գողերուն՝ ձայնը,  
Ու Տէք, անոնք քու երեսիդ լուսովք պիտի քայլեն,  
16 Քու անունովդ ամէն օր պիտի ցնծան,  
Ու քու արդարութիւնովդ պիտի բարձրանան;  
17 Վասն զի դուն ես անոնց զօրութեանը փառքը,  
Եւ քու հաճութիւնովդ պիտի բարձրանայ մեր եղ-  
ջերը;  
18 Վասն զի մեր վահանը Տէրոջն է,  
Ու մեր թագաւորը Խարայէլի Սուրբինն է:  
19 Այն ժամանակ տեսիլքովլ խօսեցար քու սուրբիդ  
հետ,  
Ու ըսիդ, Օգնութիւն դրի զօրաւորին վրայ,  
Ժողովուրդին ընարուածը բարձրացուցի,  
20 Իմ ժամանակաւ Դաւիթը դառայ,  
Իմ սուրբ իւրզիս օծեցի զանիկա,  
21 Որու հետ իմ ձեռքս պիտի հաստատուի,  
Ու իմ բազուկու պիտի զօրացնէ զանիկա,  
22 Թշնամին պիտի չչարասահարէ զանիկա,  
Ու անօրէնութեան որդին պիտի չչարչարէ զանիկա,  
23 Եւ անոր թշնամիները իր առջեւէն պիտի կարեմ,  
Ու զանիկա ստուզները պիտի զանիկա,  
24 Եւ իմ հաւատարմութիւնս ու ողորմութիւնս անոր  
հետ պիտի ըլլայ.  
Ու անոր եղջերը իմ անունովս պիտի բարձրանայ;  
25 Անոր ձեռքը ծավուն մէջ պիտի դնեմ,  
Ու անոր աջ ձեռքը գետերուն մէջ;  
26 Անիկա ինծի պիտի կանչէ թէ Դուն ես իմ Հոյրս,

\*Կամ, ցնծութեան. Թու. իգ. 21:

- իմ Աստուածոս ու իմ փրկութեանս վէմը:  
27 Ու ես զանիկա անդրանիկ պիտի ընեմ՝  
Երկրի թագուարներէն աւելի բարձր:  
28 Իմ ողորմութիւնս յաւիտեան պիտի պահէմ՝ անոր  
համար,  
Ու իմ ուխտոս անոր հետ հաւատարիմ պիտի ըլլայ:  
29 Եւ անոր սերուանդը յաւիտեան,  
Ու անոր աթոռը երկինքի օրերուն չափ պիտի ընեմ:  
30 Եթէ անոր որդիները իմ օրէնքս թաղուն,  
Ու իմ իրաւունքներով չքալեն,  
31 Եթէ իմ կանոններս անարգեն,  
Ու իմ պատուիրանքներս չպահէն,  
32 Ես աւ գաւազանով պիտի պատժեմ՝ անոնց յան-  
ցանքը,  
Ու հարուածներով անոնց անօրէնութիւնը:  
33 Բոյց իմ ողորմութիւնս պիտի չկարեմ անէ,  
Ու իմ հաւատարմութիւնս սուտ պիտի չչանեմ:  
34 Իմ ուխտոս պիտի չանարգեմ,  
Ու շրթունքներէս ելածը պիտի չփոխեմ:  
35 Անգամ մը երգում՝ ըրի իմ որբութիւնովս,  
Որ սուտ պիտի չանեմ:  
36 Անոր սերուանդը յաւիտեան պիտի մնայ,  
Ու անոր աթոռը առջեւս՝ արեգակին չափ.  
37 Լունին պէս յաւիտեան պիտի հաստատու,  
Ու երկինքի մէջ հաւատարիմ՝ վկայի ու։ (Աէլլու)  
38 Բոյց դուն երեսէ ձգեցիր ու անարգեցիր,  
Քու օծեալիդ բարկացար,  
39 Քու ծաւալիդ ուխտը մերժեցիր,  
Անոր թագը գետնին հաւատար պղծեցիր,  
40 Անոր բոլոր պարիսպները փլցուցիր,

- Անոր բերդերը աւերակ ըրիր։  
 41 Բալոր ճամբայէն անցնողները կողոպտեցին զանիկա,  
 Նորատինք եղաւ իր գրացիներուն։  
 42 Անոր ներիշներուն աջ ձեռքքը բարձրացուցիր,  
 Անոր բոլոր թշնամիները ուրսովացուցիր։  
 43 Անոր սուրբին բերանն ալ գարձուցիր,  
 Ու զինք պատերազմի մէջ չկայնեցուցիր։  
 44 Անոր փառքքը գարբեցուցիր,  
 Ու անոր աթուը գետինը զարկիր։  
 45 Անոր երիսասարդութեան օրերը կարճեցուցիր.  
 Զանիկա ամծութ ձածկեցիր։ (Սէլու)  
 46 Մինչև ե՞րբ, ով Տէր, քու անձդ միշտ պիտի պոտէ՞ս,  
 Քու սրտմութիւնդ կրակի պէս պիտի բարբարէ՞։  
 47 Յիշէ իմ կենաքիս ինչ ըլլալը.  
 Ինչ ունայնութեան համար սաւեղծեցիր մարդոց բո-  
 լոր սրդիները։  
 48 Ո՞վ է այն մարդը ու ապրի ու մահ չականէ,  
 Ե- իր անձը դժոխքին ձեռքէն փրկէ։ (Սէլու)  
 49 Ով Տէր, ո՞ւր են քու աւատագուան ողբամութիւններդ,  
 Զարձաւ երդում ըրիր Դաւեիթի քու հաւատարմու-  
 թիւնովդ։  
 50 Ով Տէր, յիշէ քու ծառաներուդ նորատինքը,  
 Զարձ իմ ծոցիս մէջ կը կրեմ բալոր մեծ ազգերէն.  
 51 Որով քու թշնամիներդ ոնորգեցին, ով Տէր,  
 Որով քու օծեալիր քայլերը անարգեցին։  
 52 Օրհնեալ ըլլաց Տէրը յաւիտեան։  
 Ամէն ու ամէն։

- ՍԱՂՄՈՍ Դ.
- Ասուծոյ մարդուն Մովեսի աղօթքը։
- 1 Ով Տէր, գուն մեղի ապաւէն եղար ազգէ մինչեւ  
 ազգ։  
 2 Լեռներուն ծնանելէն առաջ  
 Ու երկիր և աշխարհի ստեղծուելէն առաջ՝  
 Յաւիտնից մինչև յաւիտեան գուն ես Աստուած։  
 3 Գուն մարդը փշի կը գարձնես,  
 Ու կ'ըսես, Ես գարձէք, մարդոց որդիներ։  
 4 Վասն զի հազար տարբին քու առջեւդ երէկուան օրին  
 պէս է որ անցաւ,  
 Կամ գիշերուան պահու մը պէս։  
 5 Կ'ընկցմես զանոնք, երազի պէս կ'ըլլան։  
 Աւտուանց կանանչացած խստի պէս կ'ըլլան։  
 6 Աւտուանց կը ծաղկի ու կը կանանչանայ,  
 Երիկունը կը կարուի ու կը չորնայ։  
 7 Վասն զի քու բարկութենէդ կը մաշինք,  
 Եւ քու սրտմութենէդ կը խսովինք։  
 8 Մեր անօրէնութիւնները քու առջեւդ,  
 Ու մեր ծածուկ Գրգչէն քու երեսիդ լուսին մէջ դրիր։  
 9 Վասն զի մեր ըստը օրերը քու բարկութիւնովդ  
 կ'անցնին։  
 Մեր տարիները ցնորդի մը պէս կ'անցնենք։  
 10 Մեր տարիներուն օրերը եօթանատուն տարի են.  
 Ու եթէ զօրութիւնով ութսուն տարի ըլլան,  
 Տակաւին անոնց փառքը աշխատանք ու ցաւ է։  
 Վասն զի անոնք շուտավակ կ'անցնին, ու մենք կը թռչինք։  
 11 Ո՞վ գիտէ քու բարկութեանդ զօրութիւնը,

- Եւ քու սրտմառութիւնդ՝ քու վախիդ համեմատ  
 12 Այսպէս սորվեցուր մեզի մեր օրերը համիել,  
 Որ սրտի իմաստութիւն ստանանկք  
 13 Դարձիր, ով Տէր, մինչեւ Ե՞րբ.  
 Ու գթութիւն ըրէ քու ծառաներուդ:  
 14 Կշացուր մեզ կանուխ քու ողբանութիւնովդ,  
 Որպէս զի ցնծանկ և ուրախ ըլլանք մեր բոլոր օրերուն  
 մէջ:
- 15 Ուրախացուր մեզ այս օրերուն չափովը ու արտմե-  
 ցուցիր.  
 Ան տարբիներուն լոժովէ ու չարիք տեսանկք:  
 16 Թող երեւնայ քու գործդ քու ծառաներուդ,  
 Եւ քու փառքդ անսնց որդիներուն  
 17 Ու մեր Տէր Աստուծոյն վայելչութիւնը մեր վասց  
 ըլլայ.  
 Եւ ձեռքերնուս գործը հաստատէ մեր վասց.  
 Մէր ձեռքերուն գործը հաստատէ:

## ՍՈՂՄՈՍ Ղ.Ա.

- 1 **Բ**արձրելցն ծածկացն տակ ընակողը  
 Ամենակարողին հովանաւորութեանը տակ պիտի  
 հանգչին  
 2 Տէրոջը համար պիտի լսեմ թէ իմ ապաւէնս ու իմ  
 ամրացս է.  
 իմ Աստուծո՛ սրու կը յուսամ:  
 3 Արդարեւ ան պիտի փրկէ քեզ սրսորդին որսդոյթէն,  
 Ապականիչ ժանառամհէն  
 4 Քեզ իր փետուրներովը պիտի ծածկէ,  
 Ու իր թեւերուն տակ պիտի ապաստանիս,

- Անոր Ճշմարտութիւնը վաշտան մը ու ասպար մը պիտի  
 ըլլայ տէն:  
 5 Պիտի չվախնաս գիշերուան զարհութանքէն,  
 Ու ցորեկը թռողող նետէն,  
 6 Ու աւ մնաթ տեղը պտըրաղ ժանտամահէն,  
 Ու կոսորումն ատեն սաստակեցնող հարուածէն:  
 7 Հազար հոգի քու քովից,  
 Ու տասը հազար քու աջ կողմէդ պիտի իյնան,  
 Բայց քեզի հարաւած է պիտի չմօտենայ:  
 8 Միոյն քու աչքերավդ պիտի նայիս,  
 Ու ամերիշտներուն հատուցումը պիտի տեսնես:  
 9 Որայշեան գուն Տէրը, իմ Ապաւէնս,  
 Բարձրեալը, քեզի ապաստանարան ըլլիր,  
 10 Քեզի չարիք պիտի չասնի,  
 Եւ քու բնակարանիդ հարուած մը պիտի չմօտենայ:  
 11 Վասն զի իր հրեշտակներուն պիտի ապազրէ քեզի  
 համար,  
 Որ քու բոլոր ճամբաներուդ մէջ քեզ պահէն:  
 12 Աննիք ձեռքերնուն վրայ պիտի վերցնեն քեզ,  
 Որ ըլլայ թէ սոքդ քարի զարնես:  
 13 Առիւծի ու իմի վրայ պիտի քալես.  
 Առիւծի կորիւնը ու վիշապը պիտի կոխկուտես:  
 14 Որայշեան ինձի կը ցանկայ,  
 Անոր համար ես պիտի փրկեմ զանիկա.  
 Անոր ամբաւթիւն պիտի ըլլամ,  
 Վասն զի անիկա իմ անունս գիտցաւ:  
 15 Ինձի պիտի կանչէ, ու ես անոր պատասխան պիտի  
 տամ.  
 Նեղութեան մէջ անոր հետ պիտի ըլլամ.  
 Պիտի ապրեցնեմ ու փաւաւորեմ զանիկա,

16 Երկոյն օրերով պիտի կշացնեմ զսնիկա,  
Ու իմ փրկութիւնս անոր պիտի ցուցնեմ:

## ՍԱՂՄՈՍ ՂԲ

Նաբաթ օրուան համար Սաղմոս ու երդ:

- 1 **Բ**արի է գոյանալ Տէրոջմէն,  
Ու սազման լսել քու անուանդ, ով Բարձրեալ.
- 2 **Ա**ռասուանց քու ողբմանթիւնդ,  
Ու գեշերները քու հաւատարմանթիւնդ պատմել.
- 3 **Տ**ապը լսոր ունեցող նուագարանալ ու տաւիզով  
Եւ քնարի ձայնով.
- 4 **Վ**ասն զի գուն, ով Տէր, քու գործովդ զիս ուրախա-  
ցուցիր.

Քու ձեռքերուդ գործերով պիտի ցնծամ:

- 5 **Ո**վ Տէր, ինչ մեծ են քու գործերդ.

Հաստ խորոնկ են քու խորհուրդները,

- 6 **Ա**նմիտ մարդք ասիկա չլմանար,

Ու յիմարը չհակնար:

- 7 **Ա**մրարիշաներուն խոսի պէս բաւսնիը

Ու բալոր անօրէնութիւն գործողներուն ծաղկիլը

Երենց յաւետենական կրուսատին է ռանէ:

- 8 **Բ**այց գուն, ով Տէր, յաւետեն բարձր ես:

9 **Վ**ասն զի աշա քու թշնամիներդ, ով Տէր,

Վասն զի աշա քու թշնամիներդ պիտի կրոսուին,

- 10 **Բ**այց իմ եղջեւը միեղջերուինին պէս պիտի բարձ-

րացնես.

Ես նոր իւզով օժուեցայ.

- 11 **Ե**ւ իմ աչքերս թշնամիներու իօրուարէ պիտի տեսնեն.

## ԳԻՐՔ ՍԱՂՄՈՍԱՅ

- 12 **Ա**րդարաբ արմաւենիի պէս պիտի ծաղկի,  
Լիբանանի եղեւինի պէս պիտի մեծնայ:
- 13 **Տ**էւոյը ատմն մէջ անկուտածները  
Մէր Ասսուածոյն սրաշներուն մէջ պիտի ծաղկին.
- 14 **Ծ**երութեան ատեն ալ պտուղ պիտի տան,  
Պարաբատ ու կոնանչ պիտի մնան,
- 15 **Ո**սպէս զի պատմեն թէ Տէրը ուղիղ է,  
Անիկս իմ Վէմն է, ու անիբաւութիւն չկաց անոր  
քով:

## ՍԱՂՄՈՍ ՂԴ

- 1 **Տ**էրը կը թագաւորէ, մեծափուռութիւն հագած է.  
Տէրը զօրութիւն հագած ու գօտեւորած է.  
Աշխարհ ալ հաստատուած է սրպէս զի ըստանի:  
2 Քու աթուուդ հին ժամանակէն հաստատ է.  
Ի յուլիսենից ես գուն:  
3 Ով Տէր, գետերը բարձրացուցին,  
Գետերը բարձրացուցին իրենց ձայնը,  
Գետերը կը բարձրացնեն իրենց շառաչիւնը:  
4 Հաստ ջուրերուն ձայնէն ու ծովուն զօրաւոր ալիք-  
ներէն  
Աւելի զօրաւոր է Տէրը բարձրութեան մէջ:  
5 Քու վկայութիւններդ շատ հաւատարիմ են.  
Ով Տէր, սրբութիւնը քու տանդ կը վայլէ \*յաւիտեան:

\*Երբ, երկար օրեր

## ՍԱՂՄՈՍ ՂԴ

- 1 Ով Տէր, զիշքինդըութեանց Աստուած,  
Ով զիշքինդըութեանց Աստուած, յայտնուէ,
- 2 Ելիր, ով երկիր Դատաւառը,  
Ամբարտաւաններուն հասուցում ըրէ:
- 3 Ով Տէր, մինչև Ե՞րբ ամերիշաները,  
Մինչև Ե՞րբ ամերիշաները պարծենան.
- 4 Գուղովութեամբ բարսաւելով խօսին,  
Ու բոլոր անօրէնութիւն գործողները պարծենան:
- 5 Ով Տէր, անոնք քու ժողովսւրդդ կը հարսաւհարեն,  
Ու քու ժառանդութիւնդ կը չարչարեն.
- 6 Որբեւարին ու պանդուխար կը պահնեն,  
Եւ որբերը կը մեռցնեն.
- 7 Ու Կ'անեն, Տէրը չաեներ,  
Եւ Յակոբի Աստուածը շիմոնարι
- 8 Խմացէք, ով ժողովսւրդին անմիտները,  
Ու գուռք, ով յիմարներ, Ե՞րբ միտք պիտի առնեք:
- 9 Միթէ ականջը տնկողը չը լսեր,  
Կամ թէ աչքը ստեղծողը չը տեռներ:
- 10 Միթէ ազգերը իրասուղը չը յանդիմներ.  
Միթէ մարդու դիտութիւն սորվեցնողը և՝ Շիրէ:
- 11 Տէրը մարդոց խորհուրդները գիտէ  
Որ ունացնութիւն են:
- 12 Երանի՛ այն մարդուն զոր դուն կը խրատես, ով  
Տէր,  
Եւ քու օրէնքէդ անոր կը սորվեցնես,  
13 Օրոշէս զի չարսութեան օրերուն մէջ զանիկա հանդ-  
չեցնես,  
Մինչև որ ամբարշտին համար հոր փորսուի

- 14 Վասն զի Տէրը իր ժողովսւրդը երեսէ պիտի չձգէ,  
Ու իր ժառանդութիւնը պիտի չմերժէ.
- 15 Հապա դատասատանը իրաւունքի պիտի դառնայ,  
Ու ամէն սրամը ուղիղները անոր ետեւէն պիտի եր-  
թան:
- 16 Ո՞վ ինձի համար չարերու դէմ՝ պիտի ելէ,  
Ո՞վ ինձի համար անօրէնութիւն գործողներուն դէմ՝  
պիտի կայնի:
- 17 Եթէ Տէրը ինձի օգնական չպլար,  
Քիչ պիտի մնար որ իմ անձն լւութեան ուրիշ ընսկէր:
- 18 Երբ կ'լսէի թէ իմ ոսքս կը սասանի,  
Ով Տէր, քու ողորմնութիւննդ զիս կը հաստատէր:
- 19 Իմ ներփակիս հոգերու շատցած ատենը՝  
Քու միթքարութիւններդ իմ անձն կ'ուրախացնէին:
- 20 Միթէ քեզի հետ հազրդակցութիւն ունի՝ անօ-  
րէնութեան աթռուը,  
Որ \*օրէնքին դէմ՝ չարիք կը պատրաստէ:
- 21 Արդարին անձին դէմ՝ կը ժողվուին,  
Ու անմեղ արիւնը կը դատապարան:
- 22 Բայց Տէրը իմ ամրութիւնն է,  
Ու իմ Աստուածս՝ իմ ապաւինութեան վէճը.
- 23 Եւ անոնց անօրէնութիւններն իրենց վրայ պիտի դարձնէ,  
Ու զանոնք իրենց չարսութիւննով պիտի ջնջէ.  
Մեր Տէր Աստուածը պիտի ջնջէ զանոնք:

## ՍԱՂՄՈՍ ՂԵ

- 1 **Եկէք յնձութիւն լնենք Տէրովը առջև,**  
**Աղաղակենք մեր փրկութեան Վէմին,**
- Կամ, իւ սոհմանու օրէնքովիլը

- 2 Գոհութիւնավ անոր երեսին առջև գտնկ  
Սաղմոններով աղաղակինք անոր:
- 3 Վասն զի Տէրը մեծ Աստուած է,  
Ու բոլոր աստուածներուն վրայ մեծ Թագաւոր է:
- 4 Անոր ձեռքին մէջ են երկրի խորոնկ տեղերը,  
Ու Հեռներուն \*բարձրութիւնները անորն են:
- 5 Իրն է ծովը, ու ինք լինեց զանիկա,  
Եւ իր ձեռքերը ստեղծեցին ցանաքը:
- 6 Եկեք երկրպատութիւն ընենք ու ծովինք,  
Ծունկ կրկնենք մեղ ստեղծող Տէրոջը առջև,
- 7 Վասն զի ան է մեր Աստուածը,  
Ու մենք անոր արօտին ժողովուրդը և անոր ձեռքին  
ոչարներն ենք.

- Այսօր եթէ անոր ձայնին պիտի լսէք,  
8 Զեր սիրտերը մի խստացնէք ինչպէս Մերիպայր մէջ՝  
Անսպատին մէջ փորձութեան օրուանը պէս,  
9 Ուր ձեր հայրերը զիս փորձեցին,  
Քննեցին զիս ու իմ գործերս անսան,  
10 Քառասուն տարի զլուեցայ այս աղդէն,  
Ու ըսի, Անսնք սրտով մնարած ժողովուրդ մին են,  
իմ ճամբաններս չժանցուն:  
11 Ուստի իմ բարկութեանս մէջ երդում ըրի,  
թէ անսնք իմ հանգիստ պիտի չմտնեն:

## ՍԱԼՄՈՍ 2.9

- 1 Ասր երգ երգեցէք Տէրոջը.  
Ու բոլոր երկիր, երգեցէք Տէրոջը:  
2 Երգեցէք Տէրոջը, օքչնեցէք անոր անունը.

\*կամ, զօրսութիւնները .

- Օրէ օր անոր փրկութիւնը քարոզեցէք:  
3 Անոր փառքը ազգերուն մէջ պատմեցէք,  
Ու անոր հրաշքները՝ բոլոր ժողովուրդներուն մէջ.  
4 Քանիզի Տէրը մեծ է ու խիստ գովելի.  
Անիկա բալը աստուածներուն վրայ ահաւոր է:  
5 Վասն զի ազգերուն բոլոր աստուածները \*կուռ-  
քեր են.
- Բայց Ե՞սովա երկինքը ստեղծեց:  
6 Փառք ու վայելչութիւն կոյ անոր առջև,  
Զօրութիւն ու գեղեցկաւթիւն՝ անոր սրբարանին մէջ:  
7 Տէրոջը տուեք, ով ժողովրդոց ասհմերը,  
Տէրոջը տուեք փառք ու զօրսութիւն:  
8 Տէրոջը տուեք իր տնաւոնը փառքը.  
Ընծոյ առէք ու անոր սրահներուն մէջ մոնէք.  
9 +Յարը հանգէսով՝ Տէրոջը երկրպատութիւն ըրէք.  
Վախցէք անոր երսէն, ով բոլոր երկիր:  
10 Հեթ անսաններուն մէջ ըսէք թէ Տէրը կը թագաւորէ.  
Աշխարհ ալ հաստատուած է սրպէս զի չսասանի.  
Անիկա պիտի գատէ ժողովուրդները ուղղութիւնով:  
11 Երկնք թող ուրախանոյ ու երկիր ցնծոյ.  
Ծովը իր լիութիւնով թող գոսայ.  
12 Դաշտը ու բոլոր անոր մէջ եղողները թող ուրախանոն.  
Այս տաեն անսաններ բոլոր ծառերը թող ցնծոն:  
13 Տէրոջը առջև, վասն զի կու գոյ,  
Վասն զի կու գոյ երկիրը գտանելու.  
Պիտի գտանէ աշխարհը արդարութիւնով,  
Ու ժողովուրդները՝ իր ճշմարտութիւնով.

\*կամ, ունայնութիւններ

+կամ, Սրբութեան զարդարանկով

## ՍԱՂՄՈՍ ԴԵ

- 1 Տէրը կըթագաւորէ, երկիր թող ցնծայ,
- 2 Հասո Կղզիներ թող ուրախամանան,
- 3 Անոր բոլորակիքը ամկ ու մասախուղ կայ,
- 4 Արդարութիւնը ու իրաւունքը անոր աթոռին հիմերն են,
- 5 Անոր առջեւէն կրակ կ'երթայ,
- 6 Ու անոր բալորակիքը եղած թշնամիները կ'այրէ:
- 7 Անոր փայլակները աշխարհը կըլուսաւորեն.
- 8 Երկիր կըտեսնէ ու կը դոդայ:
- 9 Լեռները մամի պէս կը հալին Եհովսչի երեսէն,
- 10 Բոլոր երկիր Տէրոջը երեսէն:
- 11 Երկինք կը պասմէ անոր արդարութիւնը,
- 12 Ու բոլոր ժողովուրդները կը տեսնեն անոր փառքը:
- 13 Թող ամշնան այն ամէնք որոնք կուռքերուն կը ծառայեն,
- 14 Որոնք ունայնութիւններով կը պարծենան.
- 15 Ու բոլոր աստուածներ, անոր երկրպագութիւն ըրէք:
- 16 Ավօն լուեց և ուրախացաւ,
- 17 Յուդայի ազիները ցնծացին
- 18 Բու իրաւունքներուդ համար, ու Տէր:
- 19 Վասն զի գուն, ու Տէր, Բարձրեալ ես բոլոր երկրի վրայ.
- 20 Շատ բարձրացար բոլոր աստուածներուն վրայ,
- 21 Ու Տէրը սիրողներ, չարութիւնը ատեցէք.
- 22 Անիկա իր առերքերուն անձերը կը պահէն,
- 23 Արմարիշաներուն ձեռքէն կը փրկէ զանոնք,
- 24 Արդարին համար լցո ցանուեցաւ,
- 25 Եւ սրասով ուղիղներուն համար՝ ուրախութիւն:

12 Տէրոջմով ուրախացէք, ու արդարներ,  
Ու անոր սրբութիւնը յիշելով շնորհակալ եղէք:

## ՍԱՂՄՈՍ ԴԵ

Սաղմու

- 1 Կոր երգ երգեցէք Տէրոջը,  
Վասն զի հրաշքներ ըրաւ.  
Իր աջ ձեռքը ու իր սուրբ բազուկը  
Իրեն \*փրկութիւն առւաւ:
- 2 Տէրը ցուցուց իր փրկութիւնը,  
Ազգերուն առջև յայսնեց իր արդարութիւնը:
- 3 Ցիշց իր ողբարութիւնը ու իր հաւասարմանութիւնը  
Խայոյէլի ասնը համար.  
Երկրի ամէն ձայրերը  
Մեր Աստուծոյն փրկութիւնը տեսան:
- 4 Ցնծացէք Տէրոջը առջև, ալ բոլոր երկիր.  
Ուրախութեան ձայնով աղաղակեցէք ու սաղմոս  
լուէք:
- 5 Սաղմոս երգեցէք Տէրոջը քնարով,  
Քնարով ու սաղմասի ձայնով.
- 6 Փողերով ու շեփորի ձայնով  
Աղաղակեցէք Տէր Թագաւորին առջև:
- 7 Թող գուսու ծովը ու անոր լիութիւնը,  
Աշխարհ ու անոր բնակիչները:
- 8 Գիտերը թող ծափ զարնեն,  
Ու լեռները մէկակը թող ցնծան:
- 9 Տէրոջը առջև, վասն զի կու գոյ երկիրը դատելու.

\*կոմ, յակիթութիւն

Անիկա պիտի դատէ աշխարհը արդարութիւնով,  
Ու ժողովուրդները՝ ուղղութիւնով։

## ՍԱՂՄՈՍ ՂԹ

- 1 **Տէրը կը թագաւորէ,** ժողովուրդները թող սար-  
սափին։  
Անկ քերովք էներուն վրոյ կը նստի, երկիր թող շարժի։
- 2 **Տէրը մեծ է Սիօնի մէջ,**  
Ու բարձրացած է բոլոր ժողովուրդներուն վրոյ։
- 3 **Թող գովեն քու մեծ ու ահաւոր անունդ.**  
Անիկա սուրբ է։
- 4 **Եւ թագաւորին զօրութիւնը իրաւունք կը սիրէ.**  
Ուղղութիւն հաստատեցիր,  
Խրաւունք ու արդարութիւն ըրի Յակովի մէջ։
- 5 **Բարձրացուցէք Տէրը, մեր Աստուածը,**  
Ու երկրագութիւն ըրէք անոր ստքերուն պատառաւն-  
դանին։  
Անիկա սուրբ է։
- 6 **Մովսէս ու Այարոն անոր քահանաներուն մէջ,**  
Եւ Սամուել անոր անունը կանչողներուն մէջ  
**Տէրոջը կ'աղաղակէին,**  
Ու անիկա պատասխան կու տար անոնց։
- 7 **Ամայի սիւնին մէջէն կը խօսէր անոնց հետ,**  
Անոնք կը պահէին անոնց վկայութիւնները,  
Ու ոյն հրամանը ըստ իրենց տուաւ։
- 8 **Ով Տէր, մեր Աստուածը, դուն կը լսէիր անոնց.**  
Դուն անոնց ներող Աստուած էիր,

\*Կա՛մ, դուն, ով իրաւասէր զօրաւոր թագաւոր

Թէպէա վրէժինգիր եղար անոնց գործերուն։  
9 **Բարձրացուցէք Տէրը, մեր Աստուածը,**  
Ու երկրագութիւն ըստ անոր սուրբ լեռանը վրայ։  
Վասն զի Տէրը, մեր Աստուածը, սուրբ է։

## ՍԱՂՄՈՍ Ճ

Գոհութեան Սաղմոս

- 1 **Աղաղակեցէք Տէրոջը, ով բոլոր երկիր,**
- 2 **Ծառայիցէք Տէրոջը աւրախութեամբ,**  
Անոր ասացե եկէք ցնծութեամբ։
- 3 **Ճանցէք որ Եսովս է Աստուած.**  
Անիկա սաեղծեց մեղ, ու \*ով թէ մենք։  
**Մենք անոր ժողովաւրդը ու անոր արօախն ոչխարներն  
ենք։**
- 4 **Մտէք անոր գուները գոհիսութեամբ,**  
Ու անոր սրահները՝ օրհնութեամբ։  
Գոհացէք անկէ ու օրհնեցէք անոր անունը։
- 5 **Վասն զի Տէրը բարի է.**  
Անոր սղսրմանութիւնը յաւիտեան է,  
Ու անոր հաւասարմանութիւնը ալդէ մինչեւ աղդ։

## ՍԱՂՄՈՍ ՃԱ

Սուշու Դաւթիւ

- 1 **Ողբմութիւն ու իրաւունք պիտի երգեմ.**  
Ով Տէր, քեզի սաղմոս պիտի ըսեմ։
- 2 **Խմասաւութիւնով պիտի քալեմ կատարելութեան  
ճամբուն մէջ.**

\*Կա՛մ, մենք անորն ենք

Ե՞րբ ինձի պիտի գտա.

Իմ տան մէջ սրտիս կատարելութիւնովը պիտի վար-  
ուիմ:

3 Աչքերուս առջև չար բան մը պիտի չդնեմ,

Մոլորածներուն դորձ կ'ատեմ,

Թողլ անիկա ինձի չփակչի:

4 Ծուռ սիրաը թող զատուի ինձմէ,

Զարը պիտի չՃանչնամ:

5 Ան որ ծածուկ կը խօսի իր ընկերին դէմ, պիտի ջնջեմ,

Ան որ աչքերով բարձր է ու սրտով ամեարտաւան,  
Անոր պիտի չՃանչերեմ:

6 Իմ աչքերս երկը հաւատարիթերուն վրոյ պիտի  
պլան,

Որպէս զի ինձի հետ բնակին.

Կատարելութեան ճամբուն մէջ քալողը

Ինձի ծառապյութիւն պիտի ընէ:

7 Նմնգաւարը պիտի չընակի իմ տան մէջ.

Սուտ խօսողը աչքերուս առջև պիտի չհաստատուի:

8 Առատուանց կանուխ պիտի ջնջեմ երկըին բոլը ամ-  
բարիշաները,

Որպէս զի Տէրոջը քաղաքէն բոլը անօրէնութիւն  
դորձողները կորոնցնեմ:

## ՍԱՂՄՈՍ ՃԲ

Վշտալին աղօթքը՝ երբ սէրու կը մարի ու իր գանգատը  
Տէրոջը առջև կը թափէ:

1 Ու Տէր, լու իմ աղօթքս,

Ու իմ աղաղակս թող քեզի համին

2 Քու երեսդ մի ծածկեր ինձմէ իմ նեղաւթեան օրը.

Խոհորչեցուր ինձի քու ականջդ.

Շուտով պատասխան տուր ինձի այն օրը որ ժէն  
կանչեմ:

3 Վասն զի իմ օրերս մուխի պէս փճացան,  
Եւ իմ սկզբներս խախի պէս սրեցան:

4 Արբա զալոնուեցաւ ու խսոր պէս չպցաւ,  
Այնպէս որ իմ հաց ուտելու մնացայ:

5 Հաւաշանքիս ձայննեն

Ոսկորներս մարմինիս փական:

6 Անսպատին մէջի հաւալրւսին նմանեցայ,  
Աւերակներուն բուին պէս եղայ:

7 Անգուն մասցի, ու նման եղայ  
Տանկերն վայ մինուկ եղաղ Ճնճղուկին:

8 Ամէն օր իմ թշնամիներս զիս կը նախատեն,  
Իմ վրաս սասաթիկ բարկացողները ինձի դէմ երգում  
կ'ընեն:

9 Վասն զի միմիքը հացի պէս կերայ,  
Ու խմելիքս արցունքուն խառնեցի

10 Քու բորկութեանդ ու սրտմութեանդ համար,  
Վասն զի զիս վեցցուցիր ու նետեցիր:

11 Իմ օրերս երկնցած սուռերի պէս եղան,  
Ու ես խսոր պէս չորցայ:

12 Բոյց գուն, ու Տէր, յաւիտեան կը կենաս,  
Եւ քու յիշատակդ ազգէ մինչեւ ազգ:

13 Գուն պիտի ելլես ու Արօնի սղօրմիս,

Վասն զի ժամանակ է անոր սղօրմելու,

Քանիդ օրոշաւած ժումանակը հասաւ:

14 Վասն զի քու ծաւաններդ անոր բարերուն կը հաւանին,  
Ու անոր հողին կը գթան:

15 Եւ հեթանօնները պիտի վախնան Տէրոջը անունեն,

- Ու երկրի բալոր թագաւորները՝ քու փառքեց:
- 16 Վասն զի Տէրը պիտի շինէ Արօնը,  
Եր փառքով պիտի երեւայ:
- 17 Տնանիներուն աղօթքը մարկ պիտի ընէ,  
Ու անոնց աղօթքը պիտի չոնարդէ:
- 18 Այս պիտի գրաւի գալու աղզին համար,  
Ու սաեղծուելու ժաղովաւրդը Տէրոջը գոհութիւն  
պիտի ասյ:
- 19 Վասն զի իր պրբութեանը բարձրութենէն հայեցաւ,  
Տէրը երկնիքէ երկրի վրայ նայեցաւ.
- 20 Որպէս զի կապուածին հառաւանքը լուէ,  
Ու մահու որդիները արձակէ:
- 21 Որպէս զի Արօնի մէջ Տէրոջը անունը պատմեն,  
Ու անոր գովութիւնը՝ Երաւառիմի մէջ,
- 22 Երբ ժողովուրդները մէկանու ժողովուին,  
Ու թագաւորութիւնները՝ Տէրոջը ծառայելու հա-  
մար:
- 23 Անիկա զրութիւնս ակարացուց ճամբան մէջ,  
Ու իմ օրերս կարճցուց:
- 24 Ես բի, ով իմ Աստուածու,  
Իմ օրերուս կէսին մէջ զիս մի վեցներ.  
Քու տարիներդ աղդէ մինչեւ աղդ են:
- 25 Ակիզիէն երկրի հիմերը դրիբ,  
Ու երկինք քու ձեռքերուդ գործն է:
- 26 Անոնք պիտի կորսուին, բայց գուն պիտի կենաս,  
Ու անոնց ամենը լաթի պէս պիտի մաշխն  
Հանգերձի պէս պիտի փոխես զմնոնք,  
Ու պիտի փոխուին:
- 27 Բայց գուն նյոն նիքն ես,  
Եւ քու տարիներդ պիտի չլերջանան:

- 28 Քու ծաւասներուդ որդիները պիտի բնակին,  
Ու անոնց սերունդը հասասա պիտի մնայ քու առջեւդ:
- ՍԱՂՄՈՍ ՃԴ
- Ս-Ղ-Մ-Ն Գառթի:
- 1 Պէտ իմ անձու, օրչնէ Տէրը,  
Ու այն ամէննը որ իմ ներփակիս է՝ անոր սուրբ անունը
- 2 Պէտ իմ անձու, օրչնէ Տէրը,  
Եւ անոր ըսլոր բարերարութիւնները մի մունար.
- 3 Որ կը քաւէ ըսլոր անօրէնութիւններդ,  
Ո- կը բժշկէ քու ըսլոր հիւանդութիւններդ,
- 4 Որ կը փոկէ քու կեսնգրդ ապականութենէն,  
Ե- կը պասկէ քեզ ողբրմութիւնով ու գթութիւնով.
- 5 Որ կը լեցնէ քու ծերութիւնդ բարութիւնով,  
Ո- քու մանկութիւնդ արձիւին պէս կը նարոգաւի
- 6 Տէրը տրդարութիւններ ու իրաւունքներ կ'ընէ  
Բայց զիկուածներուն.
- 7 Անիկա իր ճամբանները Մովկէսի ճամնցուց,  
Ո- իր գործերը՝ Խսդոյէլի որդիներուն:
- 8 Բարեգութ ու ողորմած է Տէրը,  
Երկարյանամիս ու աւատ՝ ողորմութիւնով:
- 9 Անիկա մինչև վերջը չհակաւակիր,  
Եւ յաւիտեան ով չպահեր:
- 10 Անիկա մեր մեղքերուն համեմատ չըստ մեղի,  
Ու մեր անօրէնութիւններուն համեմատ հասաւցում  
ըրաւ մեղի:
- 11 Հապա որչափ որ երկինք երկրէ լարձր է,  
Այնանք իր ողբրմութիւնը իրմէ վախցողներուն վրայ  
գօրաւոր է:

- 12 Որչափ որ արեւելքը արեւմուտքէն հեռու է,  
Այսպէտ հեռացուց մեզմէ մեր յանցանքները:
- 13 Խաչպէտ հայր մը կը դիմայ Եթ որդիներուն վրայ,  
Ասպէտ Տէրը կը դիմայ իրմէ վախցողներուն վրայ:
- 14 Վասն զի ան գիտէ մեր կազմուածքը,  
Կը յիշէ որ մենք հող ենք:
- 15 Մարդուն օրերը խասի պէս են.  
Խաչպէտ գաշտի ծաղիկը, այնպէտ կը ծաղիկի:
- 16 Վասն զի հավատնոր վրայէն կ'անցնի ու ան կ'սչչմասյ,  
Եւ ալ անոր տեղը չճանչնար զանիկա:
- 17 Բայց Տէրոջը ողպամութիւնը յաւիսեանս յաւիսենից  
իրմէ վախցողներուն վրայ է,  
Ու անոր արդարութիւնը՝ որդւոց որդիներու վրայ.
- 18 Անհոց քայ Ե՛ որոնք կը պահեն անոր ու խար,  
Եւ կը յիշեն անոր պատաւիրանքները ու կը կատարեն:
- 19 Տէրը իր ամժուը երկնիքի մէջ հաստատեց.  
Ու անոր թագաւորութիւնը ամէնտն վրայ կը ամիրէ:
- 20 Օրհնեցէք Տէրը, ով անոր հրեշտակները, որ ուժով  
զըրաւոր էք,  
Որ անոր խօսքին ձայնը լսելով՝ իր հրամանը կը կատարէք:
- 21 Օրհնեցէք Տէրը, ով անոր բոլոր զօրքերը,  
Անոր կարքը կատարող պաշտօնեաները:
- 22 Օրհնեցէք Տէրը, ով անոր բոլոր դրժերը,  
Անոր տէրութեանը ամէն տեղերուն մէջ.  
Օրհնէ Տէրը, ով իմ անձու:

- ՍԱՂՄՈՍՍՅ ՃԴ
- 1 Օրհնէ Տէրը, ով իմ անձու.  
Ով Տէր, իմ Աստուածու, գուն խիստ մեծ ես.  
Փառք ու վայելչութիւն հագած ես.
- 2 Լոյսը հանգերձի պէս կը հագնիս,  
Երկնքը վախուզը պէս կը ասրածես:  
3 Անիկա իր վերնատուները չուրերուն վրայ կը շինէ,  
Ամերը իրեն կառը կ'ընէ,  
Հովին թեւերուն վրայ կը պարտի:  
4 Եր հրեշտակները հոգիներ կ'ընէ,  
Ու իր պաշտօնեաները՝ կրակի բոց:  
5 Անիկա հաստատեց երկերը իր հիմերուն վրայ,  
Որպէտ զի յաւիսեանս յաւիսենից չխսխախ:  
6 Զանիկա անդունգով ծածկեցիր իբր թէ հանգերձով.  
Զուրերը լեռներուն վրայ կայնեցան,  
7 Քու սաստելչդ փախան.  
Քու որսումննիք ծայնէն արտորապով փախան.  
8 Լեռներուն վրայ եւան ու հավեաներուն մէջ իջան,  
Այն տեղը զոր գուն հաստատեցիր անմաց համար:  
9 Սահման գրիր որպէտ զի չանցնին,  
Ու նորէն երկիրը չծածկէն:  
10 Զորերուն մէջ աղբերներ կը զրկէ.  
Զորերը լեռներուն մէջէն կ'երթան:
- 11 Անոնք բոլոր դաշտի գաղտններուն կը խմցնեն.  
Ու վայրի էշերը իրենց ծարաւութիւնը կ'անցնեն:  
12 Անհոց քաղը երկնիքի թռչունները կը լնակին,  
Ոստերուն մէջէն ձայն կու տան:  
13 Անիկա իր վերնատուններէն լեռները կը ջրէ.  
Քու գործերուգ պատուզէն երկիր կը կշտանաց:

- 14 Անիկա անսառուններուն համար խոս կը բուացնէ,  
Ու մարդուն ծառապյութեան համար՝ բայս,  
Որպէս զի կերակուր չոնէ երկրէ,  
15 Ու գինի՛ ու կ'աւրախացնէ մարդուն սիրաբ,  
Եւ՝ իւղ՝ որ անոր երեսը կը փայլեցնէ,  
Ու հաց՝ ու կը հաստատէ մարդուն սիրաբ  
16 Տերոջը ծառերը կուշտ են,  
Կիսաննի եղեւինները՝ զարոնք բնիք ոնկեց:  
17 Հոն թռչունները բյոներնին կը շնին,  
Ու արսազիլն լնակարանը մայրերուն վիայ է:  
18 Բարձր լըռուները այծեամներուն ապաւէն են,  
Ու վէմերը՝ ճագարներուն:  
19 Ժամանակներու համար լուսինք առեղջեց.  
Արեգակը իր մարզ մոննելը կը ճանչնայ:  
20 Խուռարը կը դնես ու գիշեր կ'ըլլայ,  
Որուն մէջ անտառին բալը գաղանները կը պուրուն:  
21 Առիւծներուն կորիւնները կը մոնչեն յափշտակու-  
թեան համար,  
Ու Աստուծմէ իրենց կերակուրը կը խնդրեն.  
22 Արեգակին ծագելուն պէս կը ժողվուն,  
Եւ իրենց որջերուն մէջ կը պառկին:  
23 Մարդ մինչև իրիկուն իր գործին  
Ու իր ծառապյութեանը կ'երթայ:  
24 Ու Տէր, ո՞չափ շատ են քու գործերդ,  
Անոնց բարոր ինասառութիւնով ըրիր.  
Երկր լցուած է քու տակեղ ածներովդ:  
25 Այս ծովը մեծ ու լայն է,

\*Եբ. իւղէն, չոյ, իւղէն ուելի  
†կոյ, ստացուածքներովդ

- Հոն անթիւ սողացողներ,  
Պղմովկ ու մեծ կենդանիներ, կան:  
26 Հոն նաւերը կը քալեն,  
Ու կերակաթան՝ զար անոնց մէջ խաղաղու համար  
սաեղջեցիր:  
27 Ասոնց ամէնը քեզի կը սպասեն,  
Որպէս զի իրենց կերակարը ժամանակին տաս  
28 Դուռն անոնց կու տաս ու անոնք կը ժողվեն,  
Զեռքը կը բանաս ու բարսութիւնով կը կշամանն:  
29 Եբք քու երեսդ կը ծածկեր՝ կը խոռովին.  
Եբք անոնց հոգին կ'աւնես՝ կը մեռնին  
Եւ իրենց հոգը կը դառնան:  
30 Հոգիր կը զակես ու անոնք կը սաեղծուին,  
Ու երկիր երեսը կը նորոգես:  
31 Տէրոջը փառքը յաւեխեան ըլլայ.  
Տէրը եր գործերուն վիայ ուրախանայ:  
32 Երկրի վրայ կը նոսի ու ոյն կը գողոյ.  
Լեռներուն կը դպչի և անոնք կը միան:  
33 Տէրոջը պիտի երգեմ՝ իմ՝ կեանքիս մէջ.  
Ասումոս պիտի բանմ՝ իմ՝ Աստուծյոյ՝ քանի որ ո՞չ եմ:  
34 Անոր վրայով իմ՝ մտածութիւնս քաղցը պիտի ըլլայ.  
Ես Տէրոջմալ պիտի ուրախանամ:  
35 Մեղաւորները աշխարհէ թող պակին,  
Ու ամբարիշանները ոչնչանն:  
Օրչնէ Տէրը, ով իմ՝ անձս ։ Ալէլուիս

\*Այսիւգու, Տէրը օրչնեցէք

## ՍԱԿՄՈՍ ձԵ

- 1 **Պահացէք Տէրոջմէն,** անոր անունը կանչեցէք,  
Անոր գործերը ժողովութէներուն մէջ պատմեցէք:
- 2 **Խրգուցէք անոր,** սաշման ըսէք անոր,  
Պատմեցէք անոր բոլոր հրաշքները:
- 3 **Անոր սուրբ անունովը պարծենցէք.**  
Տէրը ինդքսաներուն սիրաը թաղ ուրախ ըլլոյ:
- 4 **Տէրը ու անոր զօրութիւնը ինդքսանեցէք,**  
Ամէն ժամանակ անոր երեսը փնտաեցէք:
- 5 **Յիշեցէք անոր ըրած հրաշքները,**  
Անոր նշանները ու բերնին դատաստանները:
- 6 **Ու անոր ծաւային Արքահամի սերունդը,**  
Ու Յակոբի որդիներ, անոր ընտրեալները:
- 7 **Եհովանին է մեր Աստուածը.**  
Անոր դատաստանները բոլոր երկրի մէջ են:
- 8 **Անիկա իր ուխուը յաւիտեան կը յիշէ,**  
Ու իր պատմուիրած խօսքը՝ մինչև հաջոր ալդ:
- 9 **Այս ուժուց զօր Արքահամի հետ ըրաւ,**  
Ու իր երաւումը զօր Խաչակի ըստու:
- 10 **Յակոբի ալ հաստատեց զանիկա՝ օրէնք մը ըլլալու,**  
Ու Խարոյէլի էքը յաւիտեանական ուխու մը,
- 11 **Հսելով, Քեզի պիտի տամ Քանոննու երկիրը,**  
Զեր ժառանգութէնան վիճակը.
- 12 **Երբ անոնք սակաւաթիւ էին,**  
Քիշուոր ու պանդուխա՝ անոր մէջ,
- 13 **Ու մէկ ազգէ ուրեշ աղջի գացին,**  
Մէկ թագաւորութենէ ուրիշ ժողովուրդի,
- 14 **Անիկա մէկուն թող չտուաւ որ զաննիք նեղէ.**  
Թագաւորներ ալ յանդիմննեց անոնց հանուր,

- 15 **Ըսէւէլ, իմ օծեալներուս մի գողիք,**  
Ու իմ մարդարկներուս չարութիւն մի ընէք:
- 16 **Ու ազգ կանչեց երկրին վրայ.**  
Հացին լողոր զօրութիւնը կոտրեց:
- 17 **Անոնց առջեւէն մարդ զրկեց,**  
Յավէփի՝ « ծառապութեան ծախուեցաւ:
- 18 **Անոր սուրբը կապանքով նեղեցին,**  
Անոր անձը երկաթի մէջ զրաւեցաւ:
- 19 **Մինչեւ այն ժամանակ որ անոր խօսքը եկաւ,**  
Տէրոջը խօսքը փորձեց զանիկա:
- 20 **Թագաւորը զրկեց ու արձակեց զանիկա,**  
Ժողովուրդներուն իշխանն ազատեց զանիկա:
- 21 **Իր տանը վրայ տէր կեցաց զանիկա,**  
Եւ իր բոլոր ունեցածին վրայ իշխաղ.
- 22 **Որպէս զի անոր իշխանները իր ուզածին պէս կապէ,**  
Ու անոր ծերերը իշխանան ընէ:
- 23 **Եւ Խորոյէլ Եգիպտոս եկաւ,**  
Ու Յակոբ պանդուխա եղաւ Քամի երկրին մէջ:
- 24 **Եւ Տէրը իր ժողովուրդը իմաս շատցուց,**  
Ու զանննիք իրենց թշնամիներէն աւելի զօրուար ըրաւ:
- 25 **Անոնց սիրոը \*գարձաւց, որպէս զի իր ժողովուրդը**  
ատեն,
- 26 **Ու իր ծառանիկրուն նենդութիւն ընեն:**  
Իր ժառանգ Սովուզը զրկեց,
- 27 **Եւ իր ընարած Ահարոնը,**  
Որոնք անոնց մէջ իր նշանները ըրին,
- 28 **Խուար զրկեց ու խուարեցուց.**

\*կամ, գարձաւ

- Եւ անոր խօսքին դէմ՝ չկեցան։  
 29 Անոնց ջուրերը արիւնի գարձուց,  
 Ու անոնց ծովիերը սպաննեց։  
 30 Անոնց երկիրը առասորէն գորտեր գուշս բերաւ՝  
 Միւլ անոնց թագաւորներուն ներքին սեհնեակներուն  
 մէջ։  
 31 Հսաւ, ու շտնաճանճը և մուները  
 Անոնց լոլոր սահմաններուն մէջ եկան։  
 32 Անձրեւի տեղ կարկուտ տոււաւ անոնց,  
 Ու կրակի բոցի՝ անոնց երկին մէջ։  
 33 Անոնց որի երը ու թզենիները զորկաւ,  
 Եւ անոնց սահմաններուն ծառերը կառրտեց։  
 34 Հսաւ, ու եկաւ մարտիքը,  
 Եւ ջրեւակը՝ առանց համբանքի։  
 35 Ու անոնց երկին մէջի բոլոր խոտը կերան,  
 Եւ անոնց արեւերուն պատուղը կերան։  
 36 Անոնց երկին մէջի բոլոր անդրանիկները  
 Ու անոնց բոլոր զօրութեանն սկիզբը զարկաւ։  
 37 Եւ զաննիք սկիսիլ ու արծաթով հոնեց։  
 Ու անոնց ցեղերուն մէջ տկար մարդ չկար։  
 38 Եգիպտոս ու քափացու անոնց գուշս ելլեւուն,  
 Վասն զի անոնց աշը իրենց վրայ լնկած էր։  
 39 Յորեւէ հովտնի ըլլալու համար ամպը,  
 Ու գիշերը լցո սարու համար կրակը տարածեց։  
 40 Խնդրեցին, ու լրամանքիներ բերաւ,  
 Ու երկնեփի հացով կշացացուց զմննք։  
 41 Վէմը պատուեց, ու ջուրերը վազեցին.  
 Գետի ուն քաղեցին չըր տեղերուն մէջ։  
 42 Վասն զի իր սուրբ խօսքը յիշեց,  
 Զոր իր Աբրահամ՝ ծառապին հետ ըրեւ էր։

- 43 Ու ժողովուրդը ցնծութիւնավ հանեց,  
 Եւ իր ընտրածները՝ ուրախութիւնավ։  
 44 Ու հեթանոսներուն երկիրները անոնց տոււաւ,  
 Եւ ժողովուրդներուն վաստակները ժառանգեցին  
 անոնք։  
 45 Որպէս զի անոր պատուիրանքները պահէն,  
 Ու անոր օրէնքները կատարեն, Ալէլուկաւ։
- ## ՍԱՂՄՈՍ ձԶ
- 1 **Ալէլուկաւ:** Գոհացեք Տէրոջմէն, վասն զի բարի է,  
 Պան զի անոր ողորմութիւնը յաւախեան է։  
 2 Ո՞վ պիսի պատմէ Տէրոջը մեծ գործերը,  
 Ո՞վ պիսի իմանցնէ անոր ամէն գովասթիւնը։  
 3 Երանի՛ անոնց որ իրաւունքը կը պահէն,  
 Ու ամէն ժամանակ արդարութիւն կ'ընեն։  
 4 Ցիշէ զիս, ու Տէր, քու ժողովուրդիդ կ'ըս անեցած  
 հաճութեանդ համեմատ,  
 Խնձի սյցելութիւն ըրէ քու փրկութիւնսկդ։  
 5 Արաքս զի քու ընտրեալներուց բարութիւնը տեսնեմ՝,  
 Քու աղգիդ ուրախութիւնավը ուրախանամ՝,  
 Քու ժառանգութիւնավը պարծենամ։  
 6 Մենք մեր հոյրերուն հետ մեղանչեցինք.  
 Անորէնսւթիւն ըրինք, ամերաշուտութիւն գործեցինք։  
 7 Մեր հոյրերը Եգիպտոսի մէջ չիմացան քու հրաշք-  
 ներդ,  
 Զիշեցին քու ողորմութեանդ շաստութիւնը,  
 Հասաւ ապատութեցան ծովուն քով,  
 Կարմիր ծովուն քով։  
 8 Բոյց զաննիք իր անուանը համար փրկեց,

- Որպէս զի իր մեծ զօրութիւնը ճանչցնէ:
- 9 Եւ կարմիր ծովուն աստաեց, ու ցամքեցաւ.
- Ու անդունդներուն մէջն քալել առաւաւ անոնց, իբր  
թէ անապատին մէջն:
- 10 Եւ զանոնկ փրկեց աստղին ձեռքէն,
- Ու ազատեց զանոնկ թշնամին ձեռքէն:
- 11 Եւ ջուրերը անոնց թշնամիները ծածկեցին.  
Անոնցմէ մէ՛կը չմնաց:
- 12 Այս առեն հաւատացին անոր խոռին,  
Եւ անոր օր հնութիւն երգեցին:
- 13 Հուտավի մասցան անոր գործերը,  
Ու անոր խրամին չսպասեցին:
- 14 Եւ անապատին մէջ խիստ ցանկացան,  
Ու զԱստուած փորձեցին անջուր տեղին մէջ:
- 15 Եւ անոնց առաւաւ իրենց ուզածը,  
Թէպէտև վասուժութիւն զրկեց անոնց անձերուն  
վրայ:
- 16 Եւ Մովսէսի նախանձեցան բանակին մէջ,  
Ու Տէրոջը սուրբին, Ահարոնի:
- 17 Երկիր բացուեցաւ ու կլեց Դաթանը,  
Ու Արթորնի ժողովը ծածկեց:
- 18 Եւ կըսկ բորբոքեցաւ անոնց ժողովին մէջ,  
Բոյց սյրեց ամեարելչաները:
- 19 Որթ շինեցին Քարերի մէջ,  
Ու երկրպագութիւն ըրին ձուլածոյ պատկերին:
- 20 Եւ իրենց Փառքը  
խռակեր արջատի նմանութեանը փոխեցին:
- 21 Մոսցան իրենց փրկէ Աստուածը  
Որ մեծամեծ գործեր ըրաւ Եգիպտոսի մէջ,

22 Ու հրաշքներ՝ Քամի երկրին մէջ,

- Եւ ահաւոր բաներ՝ Կարմիր ծովան մէջ:
- 23 Ուսափ լսաւ որ զանոնկ կորմնցնէ,  
Եթէ անոր ընտրեալլ Մովսէս  
\*Մէջութեղը անոր առջեւ կայսած շըլլար,  
Անոր բարկութիւնը եւ գարձնելու համար, որպէս զի  
շատակեցնէ:
- 24 Նաև այս ցանկալի երկիրը անարգեցին,  
Ու անոր խօսքին չհաւատացին:
- 25 Եւ իրենց փառներուն մէջ արտնչեցին,  
Տէրոջը ձայնը շատեցին:
- 26 Ուսափ անոնց համոր †երգում ըրաւ՝  
Որ զանոնկ անապատին մէջ ձգէ,  
27 Եւ անոնց սերունդը ազգերու մէջ ձգէ,  
Ու զանոնկ երկիրներու մէջ ցրուէ:  
28 Եւ անոնկ Բելիկեգովի յարեցան,  
Ու մեռածներուն զահերը կերան,  
29 Եւ իրենց գործերովը Տէրը բարկացուցին.  
Ու անոնց վրայ ժանամանչ հասաւ,  
30 Ետքը Փենէչէս ելաւ ու դատաստան ըրաւ,  
Եւ ժանամանչը դադրեցաւ:  
31 Ու այս բանը անոր արդարութիւն սեպուեցաւ  
Աղդէ մինչև ազդ յաւիտեան:  
32 Նաև բարկացուցին զԱսէս՝ Մերիպոյի ջարերուն  
վրայ,  
Ու անոնց համար Մովսէսի գէշ եղաւ,  
33 Վասն զի դատանացուցին անոր հօգին,  
Ան ալ ամիսոր հոգաբար խօսեցաւ իր շրմանկներովը:

\*Եբր. Խըամատին մէջ. Եղեկ. Ժդ. 5; իր. 30;  
†Եբր. ձեռքը վերցուց. Ել. լ. 8; բ Օր. լր. 40;

- 34 Հեղանցուցին այն ազգերը  
Որ Տէրը լսել էր անսնց.
- 35 Հապա հեթանօներուն հետ խառնաւեցան,  
Ու անսնց գործերը սորվեցան.
- 36 Եւ անսնց կուռքերուն ծառայեցին,  
Ու անսնք իրենց որսապյթ եղան:
- 37 Եւ իրենց աղաքները ու աղջիկները  
Դեւերուն զահեցին.
- 38 Ու անմեղ արիւն թափեցին,  
Իրենց աղաքներուն ու աղջիկներուն արիւնը,  
Զարսնք զահեցին Քանանու կուռքերուն.
- 39 Եւ իրենց գործերովը պղծուեցաւ արիւնվաւ
- 40 Ու իրենց ըրտներովը պոռնկութիւնը ըրին:  
40 Ուստի Տէրոյը բարկութիւնը բարբարեցաւ իր ժողովորդին վրայ,
- Ու զալսեցաւ իր ժառանգութենէն:
- 41 Եւ զանոնք հեթանօներուն ձեռքը մատնեց,  
Ու զանոնք ատողները ամիրեցին անսնց վրայ:
- 42 Եւ անսնց թշնամիները նեղեցին զանոնք,  
Ու անսնց ձեռքին տալ խոնարհեցան:
- 43 Շատ անդամ փրկեց զանոնք.  
Բայց անսնք իրենց խորհուրդներովը դառնացուցին  
զԱնիս:
- Ու նուաստացոնիրենց անօրէնութիւններուն համար:
- 44 Սակայն անիկանայիցաւ անսնց նեղութեանը,  
Երբ անսնց աղապակը լսեց.
- 45 Ու անսնց համար իր ուխաը յիշեց,  
Եւ իր մեծ ողորմութեանը համեմատ զղացաւ,
- 46 Ու անսնց ըոլը գերեվարներուն առջև

- Գիշութիւն գտնել առւաւ անսնց:
- 47 Փրկէ մեղ, ավ Տէր, մեր Աստուածը,  
Ու ժողովէ մեղ հեթանօներուն մէջէն,  
Որպէս զի քու սուբը անսուանդ գոհութիւն մասուցանենք,
- Ու քու օրհնութիւնով պարծենանք:
- 48 Օրհնեալ ըլլայ Տէրը, Խորպէլի Աստուածը,  
Յաւիտեան յաւիտենից:
- Ու ըոլը ժողովուրդը թաղ լսէ, Ամէն Ալէլսւիա
- ՍԱՂՄՈՍ ՃԵ
- 1 Պահացէք Տէրոջմէն, վասն զի բարի է,  
Վասն զի անոր ողորմութիւնը յաւիտեան է:
- 2 Թող այսպէս լսեն Տէրաջը փրկածները,  
Զորնք փրկեց թշնամին ձեռքէն,
- 3 Ու ժողովէց զանոնք երկիններէն,  
Արեւելքէն ու արեւմատքէն, հիւսիսէն ու +ծովէն:
- 4 Անսնք մնալուցան անապատին մէջ, անջուր ճամբու մէջ.
- Բնակելու քաղաքու չգտան:
- 5 Անօթի ու ծարաւ ըլլալով՝  
Հոգինին իրենց ներսիցին կը մարէր:
- 6 Ու Տէրոջը աղապակեցին իրենց նեղութեանը մէջ,  
Եւ անիկա փրկեց զանոնք իրենց տառապանքներէն.
- 7 Ու անսնց ուղիղ ճամփու մէջ տառնընդորդեց,  
Որպէս զի բնակելու քաղաք երթ ան:
- 8 Թող գոհանան Տէրոջմէն իր ողորմութեանը համար,  
Ու մորդոց որդիներուն իր ըլլած հրաշքներուն համար:

\*կամ, հարաւէն

- 9 Վասն զի անիկա ծարւած հոգին կը յագեցնէ,  
Ու անօթեցածը բարութիւնով կը լեցնէ;  
10 Անսկ խառարի ու մահուան շուքի մէջ կը նստէն,  
Տառապանքով ու երկաթով կապաւած էն.  
11 Վասն զի Ասոււծայ խօսերուն հակառակ կեցան,  
Ու Բարձրելոյն խորհուրդը անարդեցն.  
12 Ուստի անիկա աւ նեղութիւնով խոնարչեցուց անոնց  
սիրու.  
Խնկան ու օգնական մէջ չկարէ  
13 Եւ Տէրոջը աղաղակեցին իրենց նեղութեանը մէջ,  
Ու զանոնք փրկեց իրենց տառապանքներէն:  
14 Զանոնք խառարէն ու մահուան շուքէն հանեց,  
Ու անոնց կապանքները կապրուց  
15 Թող գոհանան Տէրոջմէն իր ողբարութեանը համար,  
Ու մարդոց որդիներուն իր ըրած հրաշքներուն համար.  
16 Վասն զի պղնձէ գռները փշրեց,  
Ու երկաթէ նեղերը կոսրեց  
17 Յիմարները իրենց չար ճամփուն համար  
Ու իրենց անօրէնութիւններուն համար նեղութիւն  
կը կրեն.  
18 Անոնց անձը ամէն կերակուրէ կը զզուի,  
Ու մինչեւ մահուան գռներուն կը մօսենան:  
19 Եւ Տէրոջը Կ'աղաղակեն իրենց նեղութեանը մէջ,  
Ու կը փրկէ զանոնք իրենց տառապանքներէն:  
20 Եր խօսքը կը զրիւ ու կը լրցէկէ զոնոնք,  
Ու Կ'աղաղակ զանոնք իրենց տառապանքներէն:  
21 Թող գոհանան Տէրոջմէն իր ողբարութեանը համար,  
Ու մարդոց որդիներուն իր ըրած հրաշքներուն համար.  
22 Եւ գոհութեան պատարագներ մատուցանէն,  
Ու անոր գործերը ցնծութեամիւ պատմեն

- 23 Նաւերով ծովը իջողները  
Ու մէծ ջուրերու մէջ գործ գործալները  
24 Անսկ Տէրոջը գործերը  
Ու անոր հրաշքները կը տեսնեն անդունդին մէջ:  
25 Վասն զի ան կըսէ ու միջկալից հովը կը հանէ,  
Ու անոր ալիքները կը բարձրացնէ:  
26 Երկինք Կ'ելլեն, ու անդունդը կ'իջնեն,  
Անոնց անձերը նեղութենէ կը հալին.  
27 Գինով մարդու պէս կը դպրդան ու կ'երերոն,  
Եւ անոնց բարձր իմաստութիւնը կը համար.  
28 Այն ասեն Տէրոջը Կ'աղաղակեն իրենց նեղութեանը  
մէջ,  
Ու կը փրկէ զանոնք իրենց տառապանքներէն:  
29 Մըրիկը հանդարասութեան կը գործնէ,  
Ու ալիքները կը դադարին:  
30 Երենք աղ Կ'ուրսախանան որ գադարեցան,  
Եւ կ'ասաջնորդէ անոնց իրենց ուղած նստահան-  
գիստը:  
31 Թող գոհանան Տէրոջմէն իր ողբարութեանը համար,  
Ու մարդոց որդիներուն իր ըրած հրաշքներուն համար.  
32 Եւ թող սարձրացնեն զոնիկա ժողովուրդին ժողով-  
քին մէջ,  
Ու ծերերուն ատեսնին մէջ գովին զանիկա:  
33 Գետերը անսպասի կը դարձնէ,  
Ու ջուրերուն զնաքները չոր երկրի,  
34 Ու պաղաքեր երկիրը աղի երկրի  
Անոր բնակիչներուն չարութեանը համար  
35 Անսպասալ ջուրերու լիճի կը փոխէ,  
Ու չոր երկիրը ջուրերու զնացքի,  
36 Եւ անօթիները հոն կը բնակեցնէ,

- Որպէս զի բնակելու քաղաք հաստատեն,  
 37 Ու արտեր ցտնեն և այգինել տնկեն,  
 Որպէս զի արմակի պառող բերեն;  
 38 Զանոնք կ'օրչնէ, և անոնք խիստ կը բազմանան,  
 Ու տնանց անստանները չպակսեցներ:  
 39 Նորէն կը պակսին ու կը ցածնան  
 Բունութենէ, Նեղութենէ ու արտամութենէ;  
 40 Անսրդանք կը թափէ իշխաններուն վոյց,  
 Ու զմանք ճամբայ չտնեցող անսպասի մէջ կը մոռ  
 լորեցնէ:  
 41 Բայց աղքատոր խեղճութենէ կը բարձրացնէ:  
 Եւ անո՞ւ տոչմերը ոչխալներու հօսի պէս կ'ընէ:  
 42 Ուղղուները պիտի տեսնեն և ուրախանան.  
 Ու ամէն անօրէնսութիւն իր բերանը պիտի դոցէ:  
 43 Ո՞լ է իմաստուն՝ որ այս բաները պահէ.  
 Անիկա Տէրոջը ողջութենները պիտի հասկնոյ:

## ՍԱՂՄՈՍ ՃԲ

Դասիթի երգը ու Սաղմոսը

- 1 **Պ**ա՞մ սիրոս պատրաստ է, ով Աստուած.  
 Պիտի երգեմու սազմոս պիտի բամ իմ փառքովս ալ:  
 2 **Ա**րթնցիր, ով ատակդ ու քնար.  
 Ես կանուխ պիտի արթնուամ:  
 3 **Ո**վ Տէր, ժողովութներուն մէջ քեզ պիտի դովեմ,  
 Ու սազմոս պիտի երգեմ քեզի ազգերուն մէջ:  
 4 **Վ**ասն զի քու ողջութենդ մեծ է ու երկնքէ վեր,  
 Եւ քու ճշմարտութիւնդ մինչեւ ամպերը:  
 5 **Ե**րկնքի վրայ բարձրացիր, ով Աստուած,  
 Ու քու փառքի բարձր երկիր վրայ ըլլոյ:

- 6 Որպէս զի քու սիրելիներդ փրկուին՝  
 Աջ ձեռքափուր ապկեցուր ու պատասխան տուր ինծի:  
 7 Աստուած՝ իբ սրբութիւնով՝ խօսեցաւ,  
 Ես պիտի ցնծամ՝ Ալւքէմը պիտի բաժնեմ՝,  
 Ու Սոկքովթի հովազ պիտի չափեմ:  
 8 Իմն է Գաղաքագ ու իմն է Մանաւէ.  
 Եւ Եփեմ՝ զիսուս զօրութիւնն է,  
 Ցուգա իմ օրէնդիբս է.  
 9 Մողար իմը լուացուելու ամսն է,  
 Եղովին վրայ պիտի ձգեմ իմ մաւճակս.  
 Փղացիներուն վրայ ձոյնով պիտի ցնծամ:  
 10 Ո՞վ պիտի տանի վիս պարապաւոր քաղաքը.  
 Ո՞վ պիտի տաւաջնորդէ ինծի մինչեւ Եղովմ:  
 11 Զէ՞ որ գուն, ով Աստուած, որ երեսէ ձգեցիր մեզ,  
 Ու մեր զօրքերուն հետ չելար, ով Աստուած:  
 12 Նեղութեան մէջն մեզի օգնութիւնն տուր,  
 Վասն զի փուռ է մարդուն փրկութիւնը:  
 13 Աստուածով քաջութիւն պիտի ընկնք.  
 Ու ան պիտի կոմէ մեր թշնամիները:

## ՍԱՂՄՈՍ ՃԹ

Դիմաւոր երաժշախն. Սաղմոս Դասիթի.

- 1 **Ո**վ իմ՝ օրէնութեանն Աստուածը, լուռ մի կենար.  
 2 **Վ**ասն զի ամբարշախն բերանը  
 Ու նենգաւորին բերանը բացուեցաւ իմ վրա.  
 Խնձի գէմ աւաւ լեզուալ խօսեցան:  
 3 **Ա**տելութեան խօսքերով զիս պատեցին,

\*Կամ, իր սրբարանին մէջ

- Եւ ինծի հետ անկրառ աեղլ կուռեցան:
- 4 Իմ՝ սիրյան փոխարէն հակառակութիւն ըլին ինծի,  
Բայց ես ազօժք ի ձնեւ:
- 5 Կառ բարին տեղ չար հասուցին,  
Ու իմ՝ սիրյան տեղ՝ ատելութիւն:
- 6 Անոր վրայ ամերիշտ մը վերակացու դիր,  
Եւ՝ \*Սասանայ թող կայնի անոր աջ կողմը:
- 7 Երբ գասառի՝ յանցաւոր ելլէ,  
Ու անոր ազօժքը մեղք ըլլայ:
- 8 Անոր օրերը պակին,  
Եւ՝ անոր պաշտոնը աւրիշը առնէ:
- 9 Անոր սրդիները որբ ըլլան,  
Ու անոր կին՝ որբեւարի
- 10 Եւ անոր սրդիները թափառական ըլլան ու մուլան,  
Եւ իրենց աւերասիներէն ելլէլ հայ փնառեն:
- 11 Փոխ տուռղը առնէ անոր բոլոր ունեցածը,  
Ու օտարները յափշատակէն անոր վաստկածը:
- 12 Բնուած մէ՛կը գթութիւն շլնէ անոր,  
Ու մէ՛կը չաղորմի անոր որբերուն:
- 13 Անոր զաւաները կորուստի մաստնուին,  
Անոնց անունը գալու աղջին մէջ ջնջուի:
- 14 Անոր հոյրերուն անօրէնութիւնը Տէրոջը առջև միշտ,  
Ուի,
- Եւ անոր մօրը մեղքը չչնջուի:
- 15 Անոնք ամեն ժամանակ Տէրոջը առջև ըլլան,  
Որովէս զի անոնց յիշատակը երկրէ վերցնէ:
- 16 Վասն զի անիկան սղորմութիւնն ընելլ չյիշեց,  
Հապան խեղճը ու աղքատը հալածեց:

\*Կամ, հակառակորդը

- Որպէս զի սիրտը կապածը սպաննէ:
- 17 Կամ անէծքը սիրեց, ու թող անոր վրայ գայ.  
Եւ օր շնութիւնը չուզեց, ու թող անկէ հեռու ըլլայ:
- 18 Անէծքը իր հանգերձին պէս հագաւ,  
Եւ անիկան ջարդի պէս անոր փորին մէջ մտնէ,  
Ու ձէթի պէս՝ անոր սակրներուն մէջ:
- 19 Հագնելու հանգերձի պէս  
Ու միշտ մէջքը կազելու գօտիի պէս ըլլայ անոր:
- 20 Ինծի հակառակ կեցաղներուն  
Ու իմ՝ անձիս համար չար խօսողներուն վարձքը այս  
ըլլայ Տէրոջմէն:
- 21 Բայց գուն, ոլ Տէր Եշտվա, \*օգնէ ինծի՝ քառ ան-  
ուանդ համար.
- Փրկէ զիս քառ սղորմութեանդ բարի ըլլալուն համար:
- 22 Վասն զի ես խեղճ ու աղքատ եմ,  
Ու իմ՝ սիրտն ներսիդին խոցուած է:
- 23 Ես երկնացը սոսուերի պէս անցայ,  
Մարախի պէս թօթգլուեցայ:
- 24 Ծունկերու ծոմազահութենէ տկարացան,  
Ու մորմինս է պարարտութենէն մուշցաւ:
- 25 Ու ես անոնց նախատինք եղոյ,  
Երբ զի կը տեսնեն՝ գլուխնին կը շարժեն
- 26 Օգնէ ինծի, ոլ Տէր, իմ՝ Աստուածու.  
Փրկէ զիս քառ սղորմութեանդ համեմատ:
- 27 Ու գիտնու թէ քու ձեռքդ այս է,  
Եւ՝ գունը ըլիր ասիկա, ոլ Տէր:
- 28 Թող աննոր անիծեն, բայց գուն օրհնէ,  
Երբ ինչի ու ելլեն, թող ամչնան,

\*Եբ. ինծի հետ գործէ

- Բայց քու ծառադր թող ուրսի ըլլայ:
- 29 Խմ թշնամիներս թող նախասինք հագնին,  
Ուրենց ամօթը պատմում ճանի պէս իրենց վրայ առնեն
- 30 Եսա պիտի գոհանամ Տէրոջմէն իմ բերնով,  
Ու շատերուն մէջ պիտի օրհնեմ՝ զանիկա
- 31 Վասն զի ինք աղքատին աջ կողմէ կը կայնի,  
Օրպէս զի անոր անձը դասապարտողներէն փրկէ:

## ՍԱՂՄՈՍՍ ձժ

Սաղմոս Դառթի:

- 1 Տէրը իմ Տէրոջն ըստեւ, Կատէ իմ աջ կողմն,  
Մինչև քու թշնամիներդ սագերսւդ պատուանդան  
ընեմ:
- 2 Տէրը քու զօրսովթեանդ գառաղմնը Սիօնէ պիտի զիկէ.  
Քու թշնամիներուդ մէշաեղը գուն տիրէ:
- 3 Ժողովուրդդ քու զօրսովթեանդ օրը  
Յօդարակամ պիտի ըլլայ սրբութեան զարդարանք-  
ներալ.
- Քու \* երիտասարդներդ արշալուսին արգանադի ցողէն՝  
Աւելէ պիտի ըլլան քեզի:
- 4 Տէրը երգում՝ ըրաւ ու պիտի չղղջայ,
- Դաւն յաւիտեան Մելքիսեդեկի կարգին պէս քահա-  
նայ ես:
- 5 Տէրը քու աջ կողմդէ է,  
Անիկա իր բարկութեան օրը թագտուրներ պիտի  
Հարդէ:

\*Եբք. երիտասարդութեանդ ցողը արշալուսին ար-  
գանգէն

- 6 Անիկա հեթանոսներուն մէջ գատաստան պիտի ընէ,  
Մեռելներով պիտի լեցնէ,  
Շատ երկիրներու վրայ գլուխ եղաները պիտի ջարդէ:
- 7 Ճամանուն մէջ գերուէն պիտի խմէ.  
Անոր համար գլուխ պիտի վերցնէ:

## ՍԱՂՄՈՍՍ ձժԱ.

- 1 Ալէլուիսաւ Բոլը գոտոյի Տէրը պիտի գովեմ  
Ուզիլներուն ժողովքին ու ժողովուրդին մէջ:  
2 Տէրոջը գործերը մեծ են,  
Զանոնք սիրողներուն բոլորէն կը քննուին:
- 3 Անոր գործը փառաւաւու ու վայելուչ է,  
Եւ անոր արդարութիւնը յաւիտեան կը մնայ:
- 4 Ցիշել տուաւ իր հրաշքները,  
Տէրը ողբամած ու գթած է:
- 5 Կերակուր տուաւ իրմէ վախցողներուն,  
Իր ուխոը յաւիտեան կը յիշէ:
- 6 Իր գործերուն զօրութիւնը ցաւցուց իր ժողովուր-  
դին,  
Անօնց տալով ազգերուն ժառանգութիւնը:
- 7 Անոր ձեռքերուն գործերը ճշմարտութիւն ու իրա-  
ւուք են,  
Անոր բոլը պատուիրոնքները հաւասարիմ են,  
8 Յաւիտեանս յաւիտենից հասամառած են,  
Ճշմարտութեամբ և ուղղութեամբ եղած են:  
9 Փրկութիւն զրկեց իր ժողովուրդին,  
Իր ուխոը յաւիտեան պատուիրեց,  
Սուրբ ու ահաւոր է անոր անունը:
- 10 Իմաստութեան սկիզբը Տէրոջը վախն է

Բարի խոհեմութիւն ունին այն ամէնը սրոնք զանանք  
կը լնեն.

Անոր օրհնութիւնը յաւիտեան կը մնայ:

### ՍՈՂՄՈՍ ՃԺԹ

- 1 Ալէլուիս: Երանի՛ այն մարդուն որ Տէրոջմէն կը  
վախնայ,
- 2 Ու անոր պատուիրանքներուն շատ կը չառնի.  
Անոր սերունդը զօրաւար պիտի ըլլոց երկրի վասց.
- 3 Առաստաթիւն ու հարսասաթիւն պիտի ըլլոց անոր  
տանը մէջ,
- 4 Ու անոր արդարութիւնը յաւիտեան պիտի մնայ:
- 5 Խուռարի մէջ լցոյ կը ծագի ուղիղներուն.  
Ողբարձու ու գթած և արդար է:
- 6 Բարի մարդը կ'ողբարի ու փոխ կու տաց.  
Եր լսները իրաւունքով կը կատարէ:
- 7 Յիբուի տնիկա յաւիտեան պիտի չսասանի.  
Արդարին յիշատակը յաւիտեան պիտի մնայ:
- 8 Անիկո գէշ լսութէն չվախնար.  
Անոր սիրով հաստատ է, ու Տէրոջը կը յուսայ:
- 9 Անոր սիրով հաստատաւած է, չվախնար,  
Մինչեւ իր թշնամներուն չըստարը տեսնէ:
- 10 Տարածեց, աղքատաներուն տուտու.  
Անոր սրդարութիւնը յաւիտեան կը մնայ.  
Անոր եղիսւը փառքով պիտի բարձրանայ:
- 11 Ամրարիշտներուն ցանկութիւնը պիտի կորսուի:

### ՍՈՂՄՈՍ ՃԺԹ

- 1 Ալէլուիս: Օրհնեցէք, ով Տէրոջը ծառաները,  
Օրհնեցէք Տէրոջը անունը:
- 2 Օրհնեալ ըլլոց Տէրոջը անունը  
Ասկէ ետե մինչեւ յաւիտեան:
- 3 Արեւելքէն մինչեւ արեւմուտք  
Օրհնեալ ըլլոց Տէրոջը անունը:
- 4 Տէրը բարձր է բալը աղգերուն վասց.  
Անոր փառքը երկինքէն վեր է:
- 5 Մեր Տէր Առաստածոյն պէս ո՞վ կայ,  
Որ բարձրութեան մէջ կը բնավի.
- 6 Որ երկինքի ու երկրի մէջ եղած բաները  
Տեսնելու համար կը խոնարհի.
- 7 Որ աղքատը փոշիէն վեր կը վերցնէ,  
Ու անանիկը աղբանացէն կը բարձրացնէ,
- 8 Որպէս զի զանան նատեցնէ իշխաններուն հետ,  
Եր ժառվութիւն իշխաններուն հետ.
- 9 Որ ամուշ կինը տունը կը բնակեցնէ,  
Ու որդիներու ուրախ մայր Շնէ: Ալէլուիս:

### ՍՈՂՄՈՍ ՃԺԹ

- 1 Երբ նարայէլ Եղիպատոսէ գուրս ելաւ,  
Ու Ցակորի տունը օտարալեզու ժողովուրդին մէջէն,
- 2 Յուգա անոր օրբարսանը՝  
Ու նարայէլ անոր իշխանութիւնը եղաւ:
- 3 Ծովը տեսաւ ու փախու.  
Ցորդանան ետ գարձաւ:
- 4 Լեռները խցերու պէս ցաթկացըն,

- Ո- բլուբները՝ գառնուկներու պէս:  
 5 Վեղի լոնչեղաւ, ով ծով, որ փախար,  
 Ե- գուն, Յօրդանան, որ ետ գարձար:  
 6 Ո՛վ լեռներ, Բաշ՝ խցերու պէս ցամթ կտեցիք,  
 Ո- գուք, բլուբներ, գառնուկներու պէս:  
 7 Սարսափէ, ով երկիր, Տէրոջը երեսէն,  
 Յակաբի Աստուծյոն երեսէն,  
 8 Որ վէմը ջուրերու լիճի գարձաւց,  
 Ո- ապաւաժը՝ ջուրերու աղբիւրի:

## ՍԱՂՄՈՍՍ ՃՖԵ

- 1 Ու թէ մեզի, ով Տէր, ու թէ մեղի,  
 Հապա քու անսւանդ փոսուք տուր՝  
 Քու ուղբանւթեանդ ու Ճշնարսութեանդ համար:  
 2 Խնչ՝ համար հեթանոսները լսեն թէ  
 Ո՞ւր է հիմու անսնց Աստուածը:  
 3 Բայց մեր Աստուածը երկինքն է.  
 Անիկա իր բոլոր ուզածը ըրաւ:  
 4 Անոնց կուռքերը արծաթ ու սոկի են  
 Մարդու ձեռքի գործեր են.  
 5 Բերան ունին, բայց չեն խօսիր.  
 Աչքեր ունին, բայց չեն տեսներ.  
 6 Ականջներ ունին, բայց չեն լսեր.  
 Քիմ ունին, բայց հաս չեն տաներ.  
 7 Զեռքեր ունին, բայց չեն շօշափեր.  
 Ոտքեր ունին, բայց չեն քայեր,  
 Ո- իրենց կոկրդավլ ձայն չեն հաներ:  
 8 Անոնց նման կ'ըլլան զանոնք շինողները  
 Ո- բոլոր անսնց յուսացողները

- 9 \*Ով հարացէլ, Տէրոջը յուսուս.  
 Ան է անոնց օդնութիւնը ու ասպարը:  
 10 Ով Ա. Յարմնի տունը, Տէրոջը յուսացէք.  
 Ան է անոնց օդնութիւնը ու ասպարը:  
 11 Ով Տէրոջմէ վախցողներ, Տէրոջը յուսացէք.  
 Ան է անոնց օդնութիւնը ու ասպարը:  
 12 Տէրը մեղ կը յիշէ ու պիտի օրչնէ,  
 Խարացէլի տաւնը պիտի օրչնէ,  
 Ա. Յարմնի տունը պիտի օրչնէ.  
 13 Տէրոջմէ վախցողները պիտի օրչնէ,  
 Պատիկները մեծերուն չեսու:  
 14 Տէրը ձեղի բարէ պիտի աւելցնէ,  
 Ձեղի ու ձեր որդիներուն:  
 15 Օրչնեալ էք գուք Տէրոջմն,  
 Որ երկինքն ու երկիրը ասեղծեց:  
 16 Երկիրը երկինքը Տէրոջն է,  
 Բայց երկիրը մարդոց որդիներուն տոււաւ:  
 17 Մեռելները Տէրը չեն օրչներ,  
 Ու ալ այն ամենը որ լգերեղմանը Կիջնեն:  
 18 Բայց մենք Տէրը պիտի օրչնենք  
 Ասկէ ետև մինչև յաւիսեան Ալէլսւիտ:

## ՍԱՂՄՈՍՍ ՃՖԶ

- 1 ՏՊւրախ եմ եմ, վասն զի Տէրը

\*Կամ, Խարացէլ Տէրոջը կը յուսուս  
 +Կամ, Ա. Յարմնի տունը Տէրոջը կը յուսուս  
 +Կամ, Տէրոջմէ վախցողները Տէրոջը կը յուսուս  
 ||Եբը, լւութիւնը  
 ՏԿամ, Տէրը կը սիրեմ

- իմ՝ ձոյնս ու աղաչանքս լոեց.  
 2 Վասն զի անիկա իր ազանջը ինծի խոնարհեցուց,  
   Ու իմ՝ օրերու մէջ անոր պիտի կանչեմ:  
 3 Մահուան լարերը զիս պատեցին,  
   Ու գերեզմանին վիշտերը զիս դտան.  
   Նեղութիւն ու տրամնւթիւն դտայ:  
 4 Բայց ես Տէրոջը անունը կանչեցի,  
   Կ'աղաչեմ, ով Տէր, քրէտ իմ՝ անձա:  
 5 Ուղրմած ու արդար է Տէրը,  
   Եւ մեր Աստուածը գթած է:  
 6 Տէրը միամիտները կը պահէ.  
   Ես իւղձ եղայ ու անիկա զիս աղատեց:  
 7 Ով իմ՝ անձա, գարձիր քու հանգստութեանդ,  
   Քանդի Տէրը քեղի բարիք ըրաւ:  
 8 Վասն զի գուն իմ՝ անձա մահուանէ փրկեցի,  
   Իմ՝ աչերս արցունքն, ու իմ՝ սոռքերս դայթակղելէն,  
 9 Տէրոջը առջև պիտի քալեմ՝  
   Կենդանիներուն երկրին մէջ:  
 10 Հաւատացի, անոր համար խօսեցայ.  
   Ես իւսու թշուառացոյ:  
 11 Իմ՝ շփոթութեանս մէջ ըսի թէ  
   Ամէն մորդ սուս է:  
 12 Ի՞նչ հասուցանեմ՝ Տէրոջը՝  
   Անոր բոլոր ինծի ըրած բարութեանը փոխարէն:  
 13 Փրկութեան բաժակը պիտի սունեմ,  
   Ու Տէրոջը անունը պիտի կանչեմ:  
 14 Իմ՝ ուխտերս Տէրոջը պիտի հասուցանեմ՝  
   Իր բոլոր ժողովուրդին առջև:  
 15 Պատուական է Տէրոջը առջև  
   Իր սուրբերս մահը:

- 16 Կ'աղաչեմ, ով Տէր, վասն զի ես քու ծառագ եմ,  
   Ես քու ծառագ եմ ու քու աղախինիդ որդին.  
   Դուն իմ՝ կապերս արձակեցիր  
 17 Գոյսութեան պատարագ պիտի մատուցանեմ՝ քեղի,  
   Ու Տէրոջը անունը պիտի կանչեմ:  
 18 Իմ՝ ուխտերս Տէրոջը պիտի հասուցանեմ՝  
   Իր բոլոր ժողովուրդին առջև,  
 19 Տէրոջը տանը սրահներուն մէջ՝  
   Բու մէջդ, ով Երուսաղէմ: Ալէլուիա:

## ՍԱՂՄՈՍ ՃԺԷ

- 1 Օրչնեցէք Տէրը, ով բոլոր աղակեր,  
   Գովեցէք զանիկա, ով բոլոր ժողովուրդներ.  
 2 Վասն զի անոր սղրմանթիւնը մեր վոսյ մեծ է,  
   Ու Տէրոջը ճշմարտութիւնը յաւիտեան է: Ալէլուիա

## ՍԱՂՄՈՍ ՃԺԸ

- 1 Պրոհացէք Տէրոջմէն, վասն զի բարի է.  
   Վասն զի անոր սղրմանթիւնը յաւիտեան է:  
 2 Խարայէլ թող ըսէ թէ  
   Անոր սղրմանթիւնը յաւիտեան է:  
 3 Ահարոնի տունը թող ըսէ թէ  
   Անոր սղրմանթիւնը յաւիտեան է:  
 4 Տէրոջմէ վախցաղները թող ըսին թէ  
   Անոր սղրմանթիւնը յաւիտեան է:  
 5 Նեղութեան մէջ Տէրոջը կանչեցի,  
   Եւ Տէրը պատասխան տուտ ինծի, լոյնարձակ տեղ  
   մը հանէլու:  
 6 Տէրը ինծի հետ է, չեմ լախար.

- Մարդք ինձի թ'ոչ կը նոյ ընել:
- 7 Տէրը իմ՝ օգնականնեսու հետ Թէրեւ ինձի հետ է,  
Ու ես իմ՝ թշնամիններուս չորսորու պիտի աեսնեմ:
- 8 Լաւ է Տէրոջ յուսուլ,  
Քան թէ մարդոց ապաւինիլ,
- 9 Լաւ է Տէրոջ յուսուլ,  
Քան թէ իշխաններուն ապաւինիլ:
- 10 Բոլոր ազգերը զիս պաշտպեցին.  
Բայց Տէրոջը անունովը պիտի ջարդեմ զանոնք:
- 11 Իմ բոլորտիքս առին, և զիս պաշտպեցին  
Բայց Տէրոջը անունովը պիտի ջարդեմ զանոնք:
- 12 Մեղաններու պէս իմ բոլորտիքս առին,  
Փուշերու կրակի պէս մարեցան.  
Քանզի Տէրոջը անունովը պիտի ջարդեմ զանոնք:
- 13 Սասակի հրեցիր զիս, սրպէս զի վար լինամ.  
Բայց Տէրը ոգնեց ինձի:
- 14 Տէրը իմ՝ զօրութիւնս ու սաղմոս է,  
Ու իմ փրկութիւնն եղաւ:
- 15 Արդարներուն բնակարաններուն մէջ ցնծութեան ու  
փրկութեան ձայն կոյ.
- Տէրոջը աջ ձեռքք զօրութիւն կը դործէ:
- 16 Տէրոջը աջ ձեռքք բարձր է.  
Տէրոջը աջ ձեռքք զօրութիւն կը դործէ:
- 17 Պիտի չմեռնիմ, հազար պիտի ապրիմ,  
Ու Տէրոջը գործերը պատմեմ:
- 18 Տէրը զիս շատ խրատեց,  
Բայց մահուան չմասնեց զիս:
- 19 Բացէք ինձի արդարութեան դռները.  
Անոնց մէջ պիտի մտնեմ, ու Տէրոջը գոհութիւն մատացանեմ:

- 20 Այս է Տէրոջը դուռը,  
Արդարները առկէ պիտի մտնեն:  
21 Կը դահմամը՝ քեզմէ որ ինձի պատասխան տուիր,  
Ու ինձի փրկութիւն եղաւ:
- 22 Այս քարը զոր շնաղները անարգեցին,  
Անկեւնին գլուխը եղաւ:
- 23 Ասիկա Տէրոջմէն եղաւ.  
Զարմանապի է ասիկա մեր աչքերուն:
- 24 Այս ոյն օրն է զոր Տէրը ասեղծեց.  
Ցնծոնք և ուրախ ըլանք անոր մէջ:
- 25 Հման կ'աղաւեմ, ով Տէր, փրկէ.  
Հման կ'աղաւեմ, ով Տէր, յոջողէ:
- 26 Օրչնեալ ըլաց ան որ Տէրոջը անունովը կու դոյ.  
Օրչնեցինք ձեզ Տէրոջը տունէն:
- 27 Տէրը Աստուած է, և ըստ կը ցուցնէ մեղի.  
Զոհի աստուածները չուաններով կապեցեք,  
Ու սեղանին եղջիւններուն հոդացացի:
- 28 Դուն ես իմ՝ Աստուածս, ու քեզի գոհութիւն պիտի  
մատուցանեմ.  
Ով իմ՝ Աստուածս, քեզ պիտի լսորձացնեմ:
- 29 Գոհացէք Տէրոջմէն, վասն զի բարի է,  
Վասն զի ամոր ողբանութիւնը յաւիտեան է:

## ՍԱՂՄՈՍ ՃԺԹ

Ա, Ե, Ֆ

- 1 Երանի՛ ճամկավ ամիկծներուն,  
Օրմաք Տէրոջը օրէնքին մէջ կը քաղէն:  
2 Երանի ամանց՝ սրմաք անոր վկայութիւնները կը պահն,

- Ա- բոլոր սրանվ զինք կը խնդրեն,  
 3 Եւ անօրէնութիւն չեն ընկը,  
 Հառա անոր ճամփաներուն մէջ կը քալեն;  
 4 Դուն պատուիրեցիր որ շատ գդուշութեամբ  
     Քու հրամաններդ պահէնք;  
 5 Երանի՛ թէ իմ՝ ճամփաներս յաջողն,  
     Որպէս զի քու կանոններդ պահէմ;  
 6 Այս առեն պիտի չամչնամ՝  
     Երբ քու բարձր պատուիրանքներուդ դդուշութիւն  
     ընեմ;  
 7 Պիտի գովեմ՝ քեզ ուղեղ սրանվ,  
     Երբ քու արդար դատաստաններդ սորվիմ;  
 8 Քու կանոններդ պիտի պահէմ.  
     Զիս բոլորավին մի թողուր:

## Պ Ե Թ

- 9 Երիտասարդը ինչք՞ մաքրէ իր ճամբան.  
     Քու խօսքիդ համեմատ առա զդուշութիւն ընելով:  
 10 Իմ՝ բոլոր սրանվ խնդրեցի քեզ.  
     Մի՛ թշողար զիս որ քու պատուիրանքներէդ մոլորիմ;  
 11 Իմ՝ սրանիս մէջ պահէցի քու խօսքիր,  
     Որպէս զի չմեղմնչեմ՝ քեզի դէմ:  
 12 Օրջնեալ ես դուն, ոլ Տէր.  
     Մորքեցու ինծի քու կանոններդ:  
 13 Իմ՝ շրթունքներովս պատմեցի  
     Քու բերնիդ բոլոր դատաստանները:  
 14 Քու վկայութիւններուդ ճամփավը ուրախացայ,  
     Որպէս թէ ամէն կերպ հարաստութիւնով:  
 15 Քու հրամաններուդ վրայով պիտի մատծեմ,

- Եւ քու ճամփաներդ պիտի գիտեմ:  
 16 Քու կանոններովդ պիտի ուրախացամ,  
     Ո- քու խօսքիդ պիտի չմաւնամ;

## Կ Ի Մ Է Լ

- 17 Բարութիւն ըրէ քու Ճառացիդ,  
     Որքէս զի սազիմ ու քու խօսքի պահէմ:  
 18 Բաց իմ՝ աչքերս,  
     Որպէս զի քու օրդներէդ հրաշքներ տեսնեմ:  
 19 Պանդուխան եմ ես երկրի վրայ.  
     Մի՛ ծածկեր ինձմէ քու պատուիրանքներդ:  
 20 Իմ՝ անձս կը նեղուի  
     Ամէն ժամանակ քու դատաստաններուդ ցանկա-  
     նովէն:  
 21 Դուն սաստեցիր անիծեալ ամբարտաւանները,  
     Քու պատուիրանքներէդ մնորողները:  
 22 Նախամինքը ու անսորդանքը վերցուր ինձմէ,  
     Վասն զի քու վկայութիւններդ պահէցի:  
 23 Եշխաններ ալ կը նատէին ու ինծի դէմ՝ կը խօսէին,  
     Բայց քու ծառադ քու կանոններուդ վրայով կը  
     մոռածէր:  
 24 Քու վկայութիւններդ ալ իմ՝ ուրախութիւնա  
     Ո- իմ՝ խորհրդականներս են:

## Տ Ա Լ Ե Թ

- 25 Իմ՝ անձս հողին կը փակչի.  
     Կենդանացուր զիս քու խօսքիդ ժամեմատ:  
 26 Իմ՝ ճամփաներս պատմեցի, ու դուն ինծի պատմա-  
     խոն առակը,

- Սարվեցուր ինծի քու կանաներդ:
- 27 Քու հրամաններուդ ճամբան ինծի իմացուր,  
Եւ քու պասնչելիքներուդ վրայով պիտի \*մասածեմ:
- 28 Իմ անձս արամութենէն կը հայի.
- Հաստատէ զիս քու խօսքիդ համեմատ:
- 29 Ստութեան ճամբան հեռացուր ինծմէ,  
Ու քու օրէնքդ շնորհէ ինծի:
- 30 Ճշլարատթեան ճամբան լշտրեցի,  
Եւ քու գատասատաններդ է՞ ո՞չ զիս զիլի:
- 31 Քու վկայութիւններուդ յարեցայ.  
Ոլ Տէր, զիս մի ամշներ:
- 32 Քու պատուիրաններուդ ճամբուն մէջ պիտի լազեմ:  
Վան զի դուն իմ սիրատ պիտի լոյնցնես:

## Հ Ե

- 33 Ոլ Տէր, սորվեցուր ինծի քու կանաներուդ ճամբան,  
Ու մինչեւ վերջը պիտի պահէմ զանիկա:
- 34 Իմաստուն ըրէ զիս, որպէս զի քու օրէնքդ պահէմ:  
Ու բարսը սրտով զանիկա ի գործ դնեմ:
- 35 Առաջնորդէ ինծի քու պատուիրաններուդ շաւիղին  
մէջ,
- Վան զի անոր հաւնեցայ:
- 36 Իմ սիրատ քու վկայութիւններուդ յօժարեցուր:  
Ու ոչ թէ ագահութեան:
- 37 Ետ գարձուր իմ աչքերս, որպէս զի մաստի բան չտես-  
նեն.
- Եւ զիս քու ճամբուդ մէջ կենդանացուր:
- 38 Հաստատէ քու խօսքդ:

- Քեզմէ վախցող ծառալյիդ վրայ:
- 39 Ետ գարձուր ինծմէ իմ նախատինքս, որմէ կը վախ-  
նամ,
- Վան զի քու գատասատաններդ բարի են:
- 40 Ահա ցանկացայ քու հրամաններուդ  
Քու արդարութեանդ մէջ կենդանացուր վիտ

## Վ Ա Վ

- 41 Ոլ Տէր, թողլ իմ վրաս գոյ քու ողբրմութիւնդ:  
Եւ քու փրկութիւնդ քու խօսքիդ համեմատ:
- 42 Ու ես խօսքով պատասխան պիտի տամ զիս նախա-  
տողին,
- Վան զի քու խօսքիդ յուսացած եմ:
- 43 Եւ ճշմարտութեան խօսքը բնաւ մի հեռացներ իմ  
բերնէս,
- Վան զի քու գատասատաններուդ յուսացած եմ:
- 44 Ու քու օրէնքդ միշտ պիտի պահէմ:
- Յաւիտեան յաւիտենից:
- 45 Եւ լայնարձակ ռէզ մէջ պիտի քալեմ:  
Քանզիք քու հրամաններդ ինդրեցի:
- 46 Ու քու վկայութիւններդ թագաւորներուն առջև  
պիտի խօսիմ:
- Եւ պիտի չսոմչնամ:
- 47 Ու պիտի ուրախանամ քու պատուիրաններպիտ  
Զորանը սիրեցի:
- 48 Եւ ձեռքերս դէպ ի քու պատուիրաններդ պիտի  
վերցնեմ զրոնք սիրեցի:
- Ու քու կանաներուդ վրայով պիտի մտածեմ:

\*կամ, խօսիմ. Սաղ. ճիշ. 5, 6:

Ձ Ա Յ Ի Ւ

- 49 Ցիշէ քու ծառայիր եղած խօսքը,  
Որտն վրայ ինձի յօւսու առուիր։  
50 Իմ նեղութեանս մէջ միմիթարութիւնս այս է,  
Վասն զի քու խօսք զիս կենդանացաւց։  
51 Ամբարաւաւանները իփաս շատ ծաղր ըրին զիս,  
Բայց ես քու օրէնքէդ չխոսարեցայ։  
52 Ով Տէր, քու առաջստան դաստաստաններդ յիշեցի,  
Ու միմիթարուեցայ։  
53 Սակումը զիս բանեց այն ամիսարիշաններուն համար՝  
Օրոնք քու օրէնքդ կըթողաւն։  
54 Բու կանաններդ ինձի երգեր եղան  
Իմ պանդիստութեանս առանը մէջ։  
55 Ով Տէր, գիշերը քու անունդ յիշեցի,  
Ու քու օրէնքդ պահեցի։  
56 Այս եղաւ ինձի,  
Վասն զի քու հրամաններդ կը պահեմ։

Խ Ե Թ

- 57 Դաման իմ բաժինս էս, ով Տէր.  
Բիր որ քու խօսքերդ պահեմ։  
58 Բոլոր սրտով քու երեսդ ինդրեցի,  
Ողբակէ ինձի քու խօսքիդ համեմատ։  
59 Իմ ճամբաններուս վրայով մասածեցի,  
Եւ իմ սոքերս քու վկայութիւններուդ դարձուցի։  
60 Բու պատուիքաններդ պահելու  
Արտորացի ու չուշացայ։

- 61 Ամբարիշաններուն \*խումբերը զիս պատեցին,  
Բայց ես քու օրէնքդ չմասցայ։  
62 Կէս գիշերին կ'ելլեմ՝ քեզի գոյսութիւն մասուցաննել  
Քու արձար գաստաստաններուդ համար։  
63 Ես ընկեր եղաց այն ամէնուն սրճկ քեզմէ կը վախ-  
նան,  
Ու քու հրամաններդ կը պահեն։  
64 Ով Տէր, երկեր լեցուն է քու սղօրմութիւնովդ։  
Սորվեցուը ինձի քու կանոններդ։

Գ Ե Թ

- 65 Բարութիւն ըրիր քու ծառայիր, ով Տէր,  
Ռու խօսքիդ համեմատ։  
66 Բարի իմաստութիւն ու գիտութիւն սորվեցուը ինձի,  
Վասն զի քու պատուիքաններուդ հաւատացի։  
67 Բանի որ վշտացած չէի՝ կը սփալէի,  
Բայց հիմա քու խօսք կը պահեմ։  
68 Բարի ես գուն ու բարերար,  
Սորվեցուը ինձի քու կանոններդ։  
69 Ամբարաւաւանները սուութիւն հնարեցին ինձի գէմ,  
Բայց ես բոլոր սրտով քու հրամաններդ պիտի պահեմ։  
70 Անոնց սիրուը ճարպի պէս պարապտացաւ,  
Բայց ես քու օրէնքովդ ուրախացայ։  
71 Աղեկ եղաւ ինձի որ վշտացայ,  
Օրպէս զի քու կանոններդ սորիմ։  
72 Ինձի հազարաւոր ուկիէ ու արծաթէ  
Աւելի աղեկ է քու բերնիդ օրէնքը

\*կամ, լորերը

Ե Օ Տ

- 73 Զիս քու ձեռքերդ ըրին ու ստեղծեցին.  
Խմասուն ըրէ զիս, որպէս զի քու պատուիրանքներդ  
սարվիմ:
- 74 Քեզմէ վախցողները զիս պիտի տեսնեն և ուրախանան,  
Վասն զի քու խօսքիդ յաւսացայ:
- 75 Գիտեմ, ով Տէր, որ քու գատառատաններդ արդա-  
րութիւննը են,
- Ու իրաւունքով զիս վշտացուցիր:
- 76 Հիմա թող քու ողպրմութիւնդ ինձի միիթարութիւն  
ըլլայ՝  
Քու ծառայիր բառակ խօսքիդ համեմատ:
- 77 Թող քու գթութիւններդ իմ վրաս գան, որպէս զի  
սարվիմ,  
Վասն զի քու օրէնքդ իմ ուրախութիւն է:
- 78 Ամբարտաւանները պիտի ամշնան,  
Վասն զի առանց պատճառի անիրաւութիւն ըրին  
ինձի դէմ:
- Բայց ես քու հրամաններուդ վրայ պիտի մատածեմ:  
79 Թող ինձի գտաւուն քեզմէ վախցողները  
Եւ քու վկայութիւններդ ճանչցողները  
80 Թող իմ սիրո կատարեալ ըլլայ քու կանոններուդ  
մէջ,  
Այնպէս որ չամչնամ:
- Գ Ա Յ
- 81 Իմ անձս քու փրկութեանդ \*կը կարօտի,

\*ԵԲՀ. կը մոշի

- Ու ես քու խօսքիդ կը յաւսամ:
- 82 Եմ աչքերս քու խօսքիդ համար կը նուազին,  
Ըսելով թէ Ե՞րբ պիտի միիթարես զիս:
- 83 Վասն զի ես ծուխի մէջ դրառած ամիկի պէս եղայ,  
Բայց քու կանոններդ չմնացայ:
- 84 Ո՞րչափ են քու ծառայիրդ օրերը.  
Զիս հալածողներուն Ե՞րբ գատառատան պիտի ընես:
- 85 Ամբարտաւանները փասեր փորեցին ինձի համար,  
Որ քու օրէնքիդ պէս չեն:
- 86 Քու բոլոր պատուիրանքներդ Ճշմարիտ են,  
Զուր տեղ զիս կը հալածէն, օգնէ ինձի:
- 87 Քիչ մասց որ զիս կորանցնէին երկի մէջ,  
Բայց ես քու հրամաններդ չթողուցի:
- 88 Քու ողպրմութեանդ համեմատ կենդանացուր զիս,  
Եւ քու բերնիդ վկայութիւնը պիտի պահէմ:

Լ Ա Մ Է Տ

- 89 Ու Տէր, քու խօսքդ  
Յաւսաւեան հաստատ է երկինքի մէջ:
- 90 Քու հաւատարմութիւնդ աղդէ մինչև աղդ կը մասց.  
Դուն հաստատեցիր երկիրը ու կը կենայ:
- 91 Քու հրամաններուդ պէս կը կենան հնաւ այսօր,  
Վասն զի բոլորը քու ծառաններդ են:
- 92 Եթէ քու օրէնքդ իմ ուրախութիւնս չըլլար,  
Այն ասեն կորսուած պիտի ըլլայի իմ արտամութեանս  
մէջ:
- 93 Յաւսաւեան պիտի չմնանամ քու հրամաններդ,  
Քանզի անոնցմով կենդանացուցիր զիս:
- 94 Ես քուկդ եմ, փրկէ զիս.  
Վասն զի քու հրամաններդ փնտուեցի:

95 Ամրաբիշտները ինձի պատսեցին, որպէս զի զիս կոր.  
ոլնցնեն,

Բույ ես քու վկայութիւններդ միտքս պիտի բերեմ:

96 Ամէն կատարելութեան վերջը տեսաց.

Քու պատուիրանքդ շատ ընդարձակ է:

### Մ Է Մ

97 Ո՞րչափ կը սիրեմ քու օրէնքդ.

Այն է ամէն օր իմ մտածութիւննա:

98 Քու պատուիրանքներդ զիս իմ՝ թշնամիններէս իմաս.  
տուն ըլին,

Քանզի անոնք միշտ իմ քովս ենտ

99 Իմ բոլը աւսուցիչներէս աւելի հանճարեղ եղաց,  
Վասն զի քու վկայութիւններդ իմ մտածու.  
թիւնն են:

100 Ծերերէն աւելի իմաստուն եղաց,  
Վասն զի քու հրամաններդ պահեցի:

101 Ամէն գէշ ճամբոյէ իմ սոքելս ետ քաշեցի,  
Որպէս զի քու խօսքդ պահեմ:

102 Քու գատառառններէդ չխստորեցաց,  
Վասն զի գուն սորվեցուցիլ ինձի:

103 Ո՞րչափ քաղցր է քու խօսքդ իմ՝ բիմիս.  
Մեղմէն աելի անուշ է իմ՝ բերնիս:

104 Քու հրամաններօդդ իմաստուն եղաց,  
Անոր համար ստութեան ամէն ճամբան ատեցի:

### Ն Ո Ւ Ն

105 Քու խօսքդ իմ՝ սոքերուս ճրագ է,  
Ու իմ՝ շատիղներուս լցաւ:

106 Երդում ըլի ու պիտի կատարեմ:

Օրպէս զի քու արդար գատառառններդ պահեմ:

107 Շատ նեղացաց.

Ով Տէր, կենդանացուր զիս քու խօսքիդ համեմատ:  
108 Հիմա իմ՝ բերնիս կամաւոր զոհերը ընդունէ, ով

Տէր,

Ու քու գատառառններդ սորվեցուր ինձի:

109 Իմ՝ հոգիս ամէն ժամանակ ափիս մէջ է,  
Բոյց քու օրէնքդ չեմ՝ մոռնար:

110 Ամրաբիշտները որոգայթ լորեցին ինձի համար,  
Բոյց ես քու հրամաններէդ չմնչրեցաց:

111 Քու վկայութիւններդ յաւիտեան ինձի ժառան,  
գումարին առի,

Վասն զի անոնք իմ՝ սրտիս ցնծութիւնն են:

112 Խոնարհեցուցի իմ՝ սիրատ, որպէս զի քու կանոններդ  
կասարեմ:

Ցաւիտեան մինչեւ վլրջը:

### Ս Ա Մ Է Կ

113 Երկմանները տուեցի,

Բոյց քու օրէնքդ սիրեցի:

114 Իմ ապաւէնս ու ասպարագուն ես.

Քու խօսքիդ յուսացաց:

115 Ետ քաշուեցէք ինձմէ, ով չարագործներ,

Վասն զի ես իմ՝ Աստուծաց պատուիրանքները պիտի  
պահեմ:

116 Պահպանէ զիս քու խօսքիդ համեմատ, որպէս զի  
ապիմ:

Եւ զիս իմ՝ յոյսէս մի ամցներ:

117 Զօրացուր զիս որպէս զի ապիմ,

Ու միշտ քու կանոններուդ ուշադրութիւն ընեմ:

118 Անարդեցիր այն ամէնը որոնք քու կանոններէդ խոտորեցոն,

Քանզի անսանց նենգութիւնը սուտ է:

119 Դուռ հետաձեւու \*զղկղանք կը համարիմ՝ երկրի բոլոր ամերիշանները.

Անոր համար ես քու վկացութիւններդ կը սիրեմ:

120 Խմ մարմինս քու աչէդ դողաց,

Ու ես քու դատաստաններէդ վախցայ:

### Ա Զ Ի Ն

121 Իրաւոնք ու արդարութիւն ըրի.

Զիս իմ նեղիներուս մի մասներ:

122 Քու ծառայիդ բարութեան համար երաշխաւոր եղիր.

Ամերաբատանները չչարսաւահաբեն զիս:

123 Խմ աչքերս նուաղեցան քու փրկութեանդ համար Ու քու արդարութեանդ խօսքին համար:

124 Ըմէ քու ծառայիդ քու ողսրմութեանդ համեմատ, Եւ քու կանոններդ սորվեցուր ինձի:

125 Ես քու ծառապ եմ, իմաստան ըրէ զիս, Որպէս զի քու վկացութիւններդ ճանչնամ:

126 Տէրոջը բան տեսնելու ժամանակն է, Վաճան զի քու օրէնքդ խսպաննեցին:

127 Անոր համար քու պատուիրանկիներդ Ուկիէն ու աղնիւ սոկիէն աւելի սիրեցի:

128 Ուստի ամէն բանի վրայով պատրակած +ու բոլոր հրամաններդ ուղղեց կը համարիմ, Ու սոութեան ամէն ճամբան կ'ատեմ:

\*կամ, կղկղանքի պէս մերժեցիր

### Փ է

129 Քու վկացութիւններդ զարմանալի են.

Անոր համար իմ անձս զանոնք կը պահէ:

130 Քու խօսքերուդ յայտնութիւն լցու կու տայ, Ու միամիաններս իմաստուն կ'ընէ:

131 Խմ բերանս բացի ու հեւացի, Վասն զի քու պատուիրանկիներուդ ցանկացայ.

132 Ինձի նոյէ ու ողըրմէ ինձի, Ինչպէս ասվաբար կ'ընէ քու անունդ սիրողներուն:

133 Խմ գնացքներս հաստատէ քու խօսքիդ մէջ, Ու ընաւ անօրէնութիւն մը չսիրէ ինձի:

134 Փրկէ զիս մարդոց բանութենէն, Եւ քու հրամաններդ պիտի պահէմ:

135 Երեսդ փայլեցուր քու ծառայիդ վայ,

Ու սորվեցուր ինձի քու կանոններդ:

136 Զուրերու տառուներ կ'իջնեն իմ աչքերէս, Վասն զի յարտէն քու օրէնքդ չզահեցին:

### Ց Ա Ց Է

137 Արգար ես դուն, ոլ Տէր,

Եւ քու դատաստաններդ ուղիդ են:

138 Քու պատուիրած վկացութիւններդ Արդուր ու իմաստ ճշմարիս են:

139 Խմ նախանձս զիս մաշեց, Վասն զի իմ թշնամիներս քու խօսքերդ մնացան:

140 Քու խօսքդ իմաստ մաքուր է,

Անոր համար քու ծառապ զանիկս կը սիրէ,

141 Ես ցած ու անարդուած եմ:

Բայց քու հրամաններդ չմնոցայ:

142 Քու արդարութիւնդ յաւիտենական արդարութիւն է,

Ու քու օրէնքդ ճշմարտութիւն է:

143 Նեղութիւն ու վեշտ զիս գտան,

Բայց քու պատուիբանքներդ իմ ուրախութիւնս են:

144 Քու վկայութիւններուդ արդարութիւնը յաւիտեան է.

Իմաստուն ըրէ զիս, ու պիտի ապրիմ:

#### Գ Օ Ֆ

145 Բոլոր սրաով աղաղակեցի,

Ով Տէր, պատասխան տուր ինծի, ու քու կանոններդ պիտի պահեմ:

146 Քեզի աղաղակեցի, փրկէ զիս,

Եւ քու վկայութիւններդ պիտի պահեմ:

147 Կանուխ ելայ արշալցյան ու աղաղակեցի,

Քու խօսքիդ յաւացայ:

148 Դէւրուսն պահերէն տուրջ բացուեցան իմ աչքերս,

Քու խօսքերուդ վրայ մտած ելու համար:

149 Իմ ձայնա լոէ քու ողբարութեանդ համեմատ կեն-

դանացուր զիս:

150 Ոնորէնութեան հետեւողները մօտեցան,

Անոնք քու օրէնքդ հետացան:

151 Ով Տէր, դան մօտ ես,

Ու քու բոլոր պատուիբանքներդ ճշմարտութիւն են:

152 Առաջուընէ իմացած եմ քու վկայութիւններդ,

Զորնիք յաւիտեան հաստատեցիր:

#### Բ Է Շ

153 Տես իմ՝ խզութիւնս ու զիս փրկէ,

Վասն զի քու օրէնքդ չմնոցայ:

154 Խմ՝ իրաւունքս պաշտովանէ ու փրկէ զիս,

Քու խօսքիդ համեմատ կենդանացուր զիս:

155 Փրկութիւնը հեռու է ամիւրիշտներէն,

Վասն զի քու կանոններդ չխնդրեցին:

156 Ով Տէր, քու գիտութիւններուդ չամեմատ կենդանացուր զիս:

157 Շատ են իմ՝ հալածիներս ու թշնամիներս,

Բայց ես քու վկայութիւններդ չխստորեցայ:

158 Անօրէնները տեսայ ու զըսւեցայ,

Վասն զի անոնք քու խօսքդ չէին պահեր:

159 Նոյէ որ քու հրամաններդ կը սիրեմ:

Ով Տէր, քու ողբարութեանդ համեմատ կենդանա-  
ցուր զիս:

160 Քու խօսքիդ \*սկիզբը ճշմարտութիւն է,

Ու քու բոլոր արդար դաստաստաններդ յաւիտ-  
եան են:

#### Շ Ի Ն

161 Իշխանները զուր տեղ զիս հալածեցին,

Բայց իմ՝ պիտս քու խօսքէդ վախցաւ:

162 Ես կը ցնծամ՝ քու խօսքերուդ,

Շատ աւար գտնողի պէս:

163 Ստութիւնը ատեցի ու անարդեցի,

\*կամ բովանդակութիւնը

Բայց քու օրէնքդ սիրեցի:

164 Օրը եօթը անգտամ՝ կ'օրչնեմ քեզ,

Քու արդար դաստատաններուդ համոր:

165 Քու օրէնքդ սիրովներուն շատ խաղաղութիւն կայ,

Ու աննաց գայթակլութիւն չըլլար:

166 Ու Տէր, քու քրիութեանի սպասեցի:

Եւ քու պատուիրանկներդ կասարեցի:

167 Խմ' անձս քու վկայութիւններդ պահեցի,

Ու ես զաննք շատ կը սիրեմ:

168 Քու հրամաններդ և քու վկայութիւններդ պահեցի,

Վասն զի խմ' բոլոր ճամփաներս քու առջեւդ են:

Դ Ա Վ.

169 Ու Տէր, թող իմ' աղաղակս քու առջեւդ մտենայ.

Քու խօսքիդ համեմատ իմաստուն ըրէ զիս:

170 Թող իմ' աղաղակս քու առջեւդ ելլէ.

Քու խօսքիդ համեմատ քրկէ զիս:

171 Խմ' շրթունքներս օրչնութիւն պիտի բղիսն,

Վասն զի քու կանոններդ սորվեցուցիր ինծի:

172 Խմ' լեզուս քու խօսք պիտի պասմէ,

Վասն զի քու բոլոր պատուիրանկներդ արդար են:

173 Թող քու ձեռքդ ինծի օգնական ըլլայ,

Վասն զի քու հրամաններդ ընտրեցի:

174 Ու Տէր, քու քրիութեանդ ցանկացայ,

Ու քու օրէնքդ իմ' ուրախութիւնն է:

175 Թող իմ' անձս ասքիր ու քեզ օրչնէ,

Եւ քու դաստատաններդ օգնեն ինծի:

176 Կարուած ոչխարի պէս մոլորեցայ.

Փնտուէ քու ծառադ, վասն զի քու պատուիրանք-

ներդ չընացայ:

## ՍԱԼՄՈՍ ՃԻ

Աստիճաններուն երգը:

1 Իմ նեղութեանն մէջ Տէրոջը աղաղակեցի,

Ու անիկա ինծի պատուիսոն տուաւ:

2 Ու Տէր, քրկէ իմ' անձս սուտ շրթունքներէն

Ու նենգաւոր լեզուէն:

3 \*Ու նենգաւոր լեզու, քեզի ի՞նչ տրուի,

Եւ քեզի ի՞նչ աւելցուի:

4 Զօրաւոր մարդուն սուր նետերը

Ու գիշին կայցերը:

5 Վայ ինծի, որ Մասքի մէջ պանդուխս եղայ,

Եւ կեդորի վրաններան քովերը լնակեցայ:

6 Շատ ժամանակ իմ' անձս բնակեցաւ

Խաղաղութիւնը ասուղներուն հետ:

7 Ես խաղաղութէր էի.

Բոյց երբ կը խօսէի, անոնք կոիւ վ'ընէն:

## ՍԱԼՄՈՍ ՃԻԱ

Աստիճաններուն երգը:

1 Աչքերս դէպի ի լեռները պիտի վերցնեմ,

Ուրկէ իմ' օգնութիւնն պիտի գայ:

2 Խմ' օգնութիւնն Տէրոջմէն է,

Որ երկինքը ու երկերը ստեղծեց:

3 Անիկա քու սուք չդողացնէ,

\*Լուս, Կենգաւոր լեզուն քեզի ի՞նչ կու տոյ ու քեզի  
ի՞նչ կ'աւելցնէ

- 1 Քու Պահապանդ չքնանոյ:
- 4 Ա. Տ Խարսցելի Պահապանը  
Պատի չքրափէ ու պիտի չքնանոյ:
- 5 Տէրը քու պահապանդ է:  
Տէրը քու աշ ձեւքիդ քով քու հովմիդ է:
- 6 Յորեկը արեգակը քեզ պիտի չզարնէ,  
Ոչ աշ գիշերը լուսինը:
- 7 Տէրը գեղ ամեն չարէն պիտի պահապանէ,  
Քու անձդ պիտի պահապանէ:
- 8 Տէրը քու ելլերդ ու մտնելդ պիտի պահապանէ  
Առկէ ետև մինչեւ յաւիտեան:

## ՍՈՂՄՈՍ ՃԻՒ

Դաւիթի աստիճաններուն երդը,

- 1 Կ'ուրախանանոյի երը ինձի կ'լսէին,  
Տէրոջը տունը երթանք:
- 2 Մէր սորերը քու դաներուդ մէջ կայնեցան,  
Ով Երաւաղէմ:
- 3 Երաւաղէմ այնինք քաղաքի մը պէս շինուած է,  
Որ ինքնիրեն միաւորուած է.
- 4 Որ ցեղերը, Տէրոջը ցեղերը, չո՞ն կ'ելլեն  
Խարսցէլի պատուիրածին պէս:
- Տէրոջը անտանը գոհութիւն մաստցանելու համար:
- 5 Վ'ան զի չո՞ն դրուած են գատաստանի աթուները  
Դաւիթի տանը աթուները:
- 6 Երաւաղէմի խալազութիւնը ինդրեցէք.  
Թողթ յաջողին անոնք որ քեզ կը սիրեն:
- 7 Խալազութիւն թողթ ըլլոյ քու պարիսպներուդ մէջ,  
Ու յաջողութիւն քու պալատներուդ մէջ:

- 8 Իմ՝ եղբայրներուս ու ընկերներուս համար  
Հիմն պիտի ըսեմ՝ Խաղաղութիւն ըլլոյ քու մէջ:
- 9 Մէր Տէր Աստուծոյն տանը համար  
Քեզի բարութիւն պիտի ուղեմ:

## ՍՈՂՄՈՍ ՃԻՒ

Աստիճաններուն երդը:

- 1 Փեղի կը բարձրացնեմ՝ իմ՝ աչքերս,  
Ով երկենքի մէջ բնակող:
- 2 Ա. Տ ինչպէս ծառաներուն աչքերը իրենց ակրոջը  
ձեռքին էւ այլն,
- Ու ինչպէս աղաքինին աչքերը իր տեկնած ձեռքին,  
Այնպէս մէր աչքերը Տէրոջը, մէր Աստուծոյն, ու ու
- նոյնին,
- Մինչեւ մեղի ողարմի:
- 3 Ողորմէ մեղի, ով Տէր, ողորմէ մեղի,  
Վ'ան զի խիստ լեցուեցանք անարդանիքով:
- 4 Խիստ լեցուած է մեր անձը հանգիստ վշտելողներուն  
նախատինքովը
- Ու ամերարտաւաններուն անարգանքովը

## ՍՈՂՄՈՍ ՃԻՒ

Դաւիթի աստիճաններուն երդը:

- 1 Եթէ Տէրը մեղի հետ չըլլոր,  
Հիմն Խարսցէլ թողթ ըսեն,  
2 Եթէ Տէրը մեղի հետ չըլլոր,  
Երբ մարդիկ մէր վրոյ ելան,  
3 Այն ասեն ողջ պիտի կլէին մեղ,

- Երբ անոնց բարկութիւնը մեր վրայ բարբառած էր.
- 4 Այս ատեն ջուրերը մեղ պիտի ընկղմէին,  
Հեղեղը մեր անձերուն վրայէն պիտի անցնէր.
  - 5 Այս ատեն հպարտացած ջուրերը  
Մեր անձերուն վրայէն պիտի անցնէին,
  - 6 Օրչնեալ ըլլայ Տէրը,  
Որ մեզ անոնց ակտաներուն որս չտուաւ:
  - 7 Մեր անձերը ճնճղուկի պէս սրադրներուն որոգոյ-  
թէն ազատեցան.
  - Որոգոյթը կոստրեցաւ ու մենք ազատեցանք:
  - 8 Մեր օգնութիւնը Տէրոջը անունովն է,  
Որ երկինքն ու երկրը ստեղծեց:

## ՍԱՂՄՈՍ ՃԻԵ

Աստիճաններուն երգը:

- 1 Տէրոջը յուսացալները Ախօն լեռանը պէս են,  
Որ չառասնիր, հաղո յաւիտեան կը մնայ:
- 2 Խաչեա երաւաղէմ լեռներով պատած է,  
Նշանիւ Տէրը իր ժողովուրդին չորս կողմն է  
Առկէ ետև մինչեւ յաւիտեան:
- 3 Վասն զի ամբարիշտին գաւաղանը արդարներուն վի-  
ճակին վրայ պիտի չմնայ,  
Որպէս զի արդարները ձեռքերնին անօրէնութեան  
չերկնցնեն:
- 4 Ով Տէր, բարիք ըրէ բարիներուն

Ու արտով ուղիղներուն:

- 5 Սակայն զանոնք որ իրենց ծուռ ճամբաններուն մէջ  
կը մոլորին,

Տէրը պիտի \*կորսնցնէ անօրէնութիւն գոլծողներուն  
չեաւ:  
Խաղաղութիւն ըլլայ Խրասսէլի վրայ:

## ՍԱՂՄՈՍ ՃԻԵ

Աստիճաններուն երգը:

- 1 Երբ Տէրը Ախօնի գերութիւնը դարձուց,  
†Երալ անմոլներու՝ պէս եղանք:
- 2 Այս ժամանակ մեր բերանը խնդութիւնով լեցուե-  
ցաւ,  
Ու մեր լեզուն ցնծութիւնով.  
Այս ժամանակ չեթանսներուն մէջ ըսին թէ  
Տէրը ասոնց համար մեծ բաներ ըստաւ,  
3 Տէրը մերի համար մեծ բաներ ըստաւ,  
Ու մենք ուրախացանք:  
4 Ով Տէր, դարձուր մեր գերութիւնը  
Հարաւի առաններուն պէս:
- 5 Անոնիք որ արցունքավ կը ցանեն,  
Ցնծութիւնով կը հնձեն:  
6 Ան որ լալավ կ'երթայ,  
Ցանելու սերմը առանելով,  
Անշաւշա ցնծութեամի ետ պիտի դառնայ,  
Իր շարենի խուրձերը բերելով:

\*ԵՐ. ասնի

†Կ-Շ, Առողջացողներու

## ՍԱՂՄՈՍ ՃԻԵ

Սաղմոնի աստիճաններուն երգը:

- 1 Եթէ Տէրը չշինէ տանց,  
Զուր տեղ կ'աշխատին անոր շինողները.  
Եթէ Տէրը չպահպանէ քաղաքը,  
Զուր տեղ կը հոկեն պահպանները.
- 2 Պարսագ բան է ձեզի համար կանուխ ելելը և ուշ  
Հանդչիլը

Ու ցաւով հաց ուտելլը:  
Արդարեւ անիկա իր սիրելիին քուն կու տայց  
3 Ա.չա տողաբը Տէրովը ժառանգութիւնն էն.  
Որովոյնի պատուզը անոր \*պարզեւն է:

- 4 Խնչպէն են նետերը զօրաւորին ձեռքին մէջ,  
Այնավէն են երիտասարդներուն տղաբը:  
5 Երանի՞ այն մարդուն,  
Որ իր կոսպարծը անսնցմով լեցուց.  
Երբ դրանք մէջ թշնամիներուն հետ խօսելու ըլլան,  
Պիտի չամշնան:

## ՍԱՂՄՈՍ ՃԻՅ

Աստիճաններուն երգը:

- 1 Երանի՞ այն ամէնուն՝ որոնք Տէրովմէ կը վախնան,  
Ու անոր ճամբաններուն մէջ կը քայեն:
- 2 Վասն զի քու ձեռքիդ աշխատութիւնը պիտի ուտես,  
Երանի՞ է քեզի, ու քեզի բարի պիտի ըլլայ:
- 3 Քու կինդ պաղպահը որթի մէ պէս պիտի ըլլայ

\*կոմ, վարձքն

- Քու տանդ ներսիդիերը,  
Ու քու որդիները ձիթենիի առւնկերու պէս  
Քու սեղանիդ չըսո կողմը:  
4 Ա.չա Տէրովմէն վախցող մարդը  
Այսպէս պիտի օրչնուի  
5 Տէրը քեզ Սիօնէ օրչնէ,  
Ու երուսաղմէնի բարութիւնը տեսնես  
Քու կեանքիդ բոլոր օրերաւն մէջ.  
6 Եւ քու որդւոցդ որդիները տեսնես  
Խաղաղութիւն ըլլայ Խորացէի վրայ:

## ՍԱՂՄՈՍ ՃԻՅ

Աստիճաններուն երգը:

- 1 Հիմն Խարսցէլ թող ըսէ,  
Խմ մանկութենէս ի վեր շատ անդամ զիս նեղեցին,  
2 Խմ մանկութենէս ի վեր շատ անդամ զիս նեղեցին,  
Բայց լինծի չյաղթեցին:  
3 Հերկալները իմ կոնակիս վրայ հերկեցին,  
Ու իրենց ակօսները երկնցուցին,  
4 Տէրը արդար է,  
Անիկա ամերարիշտաններուն չուանները կարտեց:  
5 Սիօնը աստղներուն ամէնը  
Պիտի ամշնան ու ես դաւանան,  
6 Տանիքի վրայի խոտին պէս պիտի ըլլան,  
Որ գեռ չփրցուած կը չօրնայ,  
7 Որով հնձողը չկրնալ իր ձեռքը լեցնել,  
Ոչ ալ խուռճ կապողը իր գոգը:  
8 Եւ անցնողները չեն ըսեր թէ

Տէրոջը օրհնութիւնը ձեր վրայ բլսու,  
Ո- ձեզ Տէրոջը անոնապը կ'օրհնենք:

## ՍԱՂՄՈՍ ՃԼ.

Աստիճաններուն երգը:

- 1 Պարունակ տեղերէն քեզի կանչեցի, ով Տէր,
- 2 Ով Տէր, իմ ձոյն լսէ.  
Քու ականջներդ թող մաիկ ընեն իմ աղօթքիս ձայնը,
- 3 Ով Տէր, եթէ անօրէնութիւնները յիշելու ըլլաս,  
Տէր, ո՞վ կրնոյ կենալ:
- 4 Բայց քու քովդ է թողութիւնը,  
Որպէս զի քեզմէ վախնոն:
- 5 Ես Տէրոջը կը սպասեմ, իմ անձս կը սպասէ,  
Ու անոր խօսին կը յուսամ:
- 6 Առառուան սպասողներէն, առառուան սպասողներէն  
առելի  
իմ անձս Տէրոջը իւ սպասէ:
- 7 Խորսոյէլ թող Տէրոջը յուսայ,  
Վասն զի Տէրոջը քովլ ուժրմութիւն կայ,  
Ու անոր քովլ շատ փրկութիւն կայ.
- 8 Եւ անիկա պիտի քրկէ Խորսոյէլը  
իր բալոր անօրէնութիւններէն:

## ՍԱՂՄՈՍ ՃԼ.Ա.

Թառիթի աստիճաններուն երգը:

- 1 Ով Տէր, իմ սիրսո չգուսզացաւ,  
Եւ իմ աչքերս չբարձրացան.  
Ու ես մեծամեծ բաներու մէջ,

- Եւ ինծմէ բարձր բաներու մէջ չբալեցին:  
2 Արդարեւ իմ անձս հանդարտեցուցի ու հանգստացուցի  
իր մօրը կաթէն կարուտծ տղու մը պէս.
- իմ անձս կաթէն կարուտծ տղու մը պէս է:  
3 Խորսոյէլ թող Տէրոջը յուսայ  
Ասկէ ետև մինչև յաւիտեան:

## ՍԱՂՄՈՍ ՃԼ.Բ

Աստիճաններուն երգը:

- 1 Պառիթի համար յիշէ, ով Տէր,  
Անոր բալոր նեղութիւնը.
- 2 Որ երդում ըրաւ Տէրոջը,  
Եւ ուժան դրաւ Յակոբի Զօրաւորին,  
3 Յակուլ թէ իմ ասնա բնակարանը չմննեմ,  
Ու իմ փուած անկողինիս վրայ չելեմ,  
4 Թէ իմ աչքերուս քուն՝  
Եւ արտեւանունքներուս նիրհում չտում,  
5 Մինչև Տէրոջը համար տեղ մը գտնեմ,  
Ու Յակոբի Զօրաւորին համար բնակարան,  
6 Աչա անոր վրայովլ լսեցմէք Եփրամայի մէջ,  
Եւ զանիկա գտանք անտառի դաշտերուն մէջ :
- 7 Մանեկը անոր բնակարանները,  
Ու երկրպագութիւն ընենք անոր պատուանդանին  
քովլ՝  
8 Քու հանգստութեանդ աելը ելիք, ով Տէր,  
Դուն ու քու զօրութեանդ տապանակը:  
9 Քահանաներդ թող արդարութիւն հագնին,  
Եւ քու սուրբերդ ցնձան:

- 10 Քու Դաւիթ ծառայիդ համար  
Անդին մի գարձներ քու օծեալիդ երեսը  
11 Տէրը երգում ըրտու Դաւիթի ճշմարտութեամբ,  
Ու ես չըտաւնար անկէ,  
Թէ Քու որդուայիդ պառուղէն  
Քու ամբուիդ վրայ պիտի նատեցնեմ:  
12 Եթէ քու որդիներդ պահէն իմ ուխտու ու վկայու-  
թիւններս  
Զորոնք անոնց պիտի սորվեցնեմ,  
Այս առէն անոնց որդիներն ալ  
Քու ամբուիդ վրայ պիտի նատին յաւիտեան:  
13 Վասն զի Տէրը Ախօնը ընտրեց,  
Եւ զանիկա իրեն բնակութեան համար ուղղեց,  
14 Հաւելէ, Այս է յաւիտեան իմ հանգիստու.  
Ասոր մէջ պիտի բնակիմ, վասն զի սանիկա ուղեցի,  
15 Անոր պաշշարը առաստաբար պիտի օրհնեմ,  
Ու անոր աղքամները հացուլ պիտի կշտացնեմ,  
16 Եւ անոր քահանաներուն փրկութիւն պիտի հագ-  
ցընեմ.  
Ու անոր սուրբերը ուրախութեամբ պիտի ցնծան:  
17 Այն աեզզ Դաւիթի եղջիւր պիտի բռուցնեմ,  
Ու ճագա պիտի պատրաստեմ իմ օծեալիս համար:  
18 Անոր թշնամիներուն ամութ պիտի հագնեմ,  
Բայց անոր վրայ իր թագը պիտի ծաղին:

## ՍՍՂԱՄՈՍԱՅ ՃԼ.Գ.

Դաւիթի ստոիմաններուն երգը:

- 1 Աչա ո՞քսափ բարի ու ո՞քսափ վայելուլ է  
Օր եղաոյրները եւոքու հետ միաբանութեամբ բնակին:

- 2 Այն ազնիւ իւղին պէս է,  
Օր գլխուն վասյէն մօրու քին վրայ;  
Ա. Հարոնի մօրու քին վրայ, վագեց,  
Ու մինչև անոր դգեստաներուն ծոյըը իջաւ:  
3 Սիօնի լեռներուն վրայ իջած  
Հերմոնի շաղին պէս է.  
Վասն զի Տէրը հան հաստատեց օրհնութիւնը  
Ու կեանքը մինչև յաւիտեան:

## ՍՍՂԱՄՈՍԱՅ ՃԼ.Գ.

Աստիճաններուն երգը:

- 1 Աղէ, օրհնեցէք Տէրը, ու Տէրոջը բոլոր ծա-  
ռաները,  
Օր Տէրոջը սունը կը կենաք գեցերները:  
2 Սուրբ աեզզ ձեռքերնիդ վեցուցէք,  
Ու օրհնեցէք Տէրը:  
3 Երկինքը ու երկիրը սաեղծող Տէրը  
Թող օրհնէ քեզ Ախօնէ:

## ՍՍՂԱՄՈՍԱՅ ՃԼ.Ե

- 1 Աւելուիտ Օրհնեցէք Տէրոջը անունը,  
Օրհնեցէք, ու Տէրոջը ծառանները,  
2 Օր Տէրոջը սունը կը կենաք,  
Մեր Աստուծոյն սունքը պահներուն մէջ,  
3 Օրհնեցէք Տէրը, վասն զի Տէրը բարի է.  
Սաղմու ըւէք անոր անուանը, վասն զի քաղցր է,  
4 Վասն զի Տէրը իրեն համար բնարեց Յակովը  
Ու Խարայցէլը իրեն սեպհական ժողովուր ըլլալու,  
5 Վասն զի ես իմացայ, որ Եհավս մեծ է,

- Ու մեր Տէրը՝ բոլոր ասառւածներէն։  
 6 Տէր ամէն ինչ որ ուզեց՝ ըստ,  
 Երկինքի ու երկի մէջ,  
 Ծովերուն ու բոլոր անդունդներուն մէջ։  
 7 Երկի ծայրերն շոգիներ կը հանէ,  
 Անձրեւի համար փայլակներ կը շինէ,  
 Ու հով կը հանէ իր շտեմարաններէն։  
 8 Անիկա Եգիպտասի առջնեկները զարկաւ  
 Մարդէ մինչեւ անսառւն։  
 9 Նշաններ ու հրաշքներ դրկեց քու մէջդ, ով Եգիպտաս,  
 Փարաւոնի ու անոր բոլոր ծառաններուն փրայ։  
 10 Շատ աղգեր զարկաւ,  
 Ու զօրել թագաւորներ ապաննեց։  
 11 Ամօքհացւոց Սեհոն թագաւորը,  
 Բասանի Ովգ թագաւորը,  
 Եւ Քանանու բոլոր թագաւորութիւնները։  
 12 Ու աննց երկերը ժառանգութիւն տառւ,  
 Եր Խարսչէլ ժազավորդին ժառանգութիւն։  
 13 Ով Տէր, քու անունդ մինչեւ յաւիտեան իւ հայ.  
 Ով Տէր, քու յիշասակդ աղդէ մինչեւ աղդ։  
 14 Վասն զի Տէրը իր ժազավորդը կը դատէ,  
 Եւ իր ժառաններուն կ'ոզմովի։  
 15 Հեթանոսներուն Կուռ-քելը արծոթ ու սոկի են,  
 Մարդու ձեռքեր գործեր են։  
 16 Բէրտոն առնին, բայց չեն խօսիր.  
 Աչքեր առնին, բայց չեն տեսներ.  
 17 Ականջներ առնին, բայց չեն լսեր,  
 Ու շունչ չիայ անոնց բերնին մէջ։  
 18 Աննց նման կ'ըլլան զանոնք շինողները  
 Ու բոլոր անոնց յուսացողները

- 19 Ով Խարայէլի տունը, օրչնեցէք Տէրը.  
 Ով Աչարոնի տունը, օրչնեցէք Տէրը.  
 20 Ով Դեւիի տունը, օրչնեցէք Տէրը.  
 Ով Տէրոջմէն վախցողներ, օրչնեցէք Տէրը.  
 21 Օրչնեալ ըլլան Տէրը Արծէ,  
 Որ Երուսաղէմի մէջ կը բնակի: Ալէլուիս:

## ՍԱՂՄՈՍ ՃԼ.Զ

- 1 Գոհացէք Տէրոջմէն, վասն զի բարի է.  
 Վասն զի անոր ողբարմութիւնը յաւիտեան է.  
 2 Գոհացէք ասառւածներուն Աստուծմէն,  
 Վասն զի անոր ողբարմութիւնը յաւիտեան է.  
 3 Գոհացէք տէրերուն Տէրոջմէն,  
 Վասն զի անոր ողբարմութիւնը յաւիտեան է.  
 4 Մինակ մեծ հրաշքներ ընողէն,  
 Վասն զի անոր ողբարմութիւնը յաւիտեան է.  
 5 Երկննքը իմաստութեամբ ասեղծողէն,  
 Վասն զի անոր ողբարմութիւնը յաւիտեան է.  
 6 Երկերը ջուրերուն վրայ տարոծողէն,  
 Վասն զի անոր ողբարմութիւնը յաւիտեան է.  
 7 Մեծամեծ լուսաւորներ ասեղծողէն,  
 Վասն զի անոր ողբարմութիւնը յաւիտեան է.  
 8 Արեգակն որպէս զի ցրեկին եշիէ,  
 Վասն զի անոր ողբարմութիւնը յաւիտեան է.  
 9 Լուսինը ու ասաղերը՝ որպէս զի գիշերին իշխեն,  
 Վասն զի անոր ողբարմութիւնը յաւիտեան է.  
 10 \*Եգիպտացւոց անդրանիկները՝ զորնողէն,

\*Եցր. Եգիպտացիները իրենց անդրանիկներուն մէջ

Վասն զի անոր ողբրմնւթիւնը յաւիտեան է.

11 Ու Խորսյէլը անոնց մէջէն հանողէն,

Վասն զի անոր ողբրմնւթիւնը յաւիտեան է.

12 Հզօր ձեռքապլ ու տարածուած բաղըկով,

Վասն զի անոր ողբրմնւթիւնը յաւիտեան է.

13 Կարմիր ծավլ երկուքի բաժնողէն,

Վասն զի անոր ողբրմնւթիւնը յաւիտեան է.

14 Ու Խորսյէլը անոր մէջէն անցընողէն,

Վասն զի անոր ողբրմնւթիւնը յաւիտեան է.

15 Եւ Փարաւոնը ու անոր զգբերը Կարմիր ծավլուն մէջ

թօթվաղէն,

Վասն զի անոր ողբրմնւթիւնը յաւիտեան է.

16 Իր ժաղվաւրդը անտպատին մէջ պալսոցնողէն,

Վասն զի անոր ողբրմնւթիւնը յաւիտեան է.

17 Մէծ թագաւորներ զարնողէն,

Վասն զի անոր ողբրմնւթիւնը յաւիտեան է.

18 Ու զօրեղ թագաւորներ սպաննողէն,

Վասն զի անոր ողբրմնւթիւնը յաւիտեան է.

19 Ամօրհացւոց Սեհնն թագաւորը,

Վասն զի անոր ողբրմնւթիւնը յաւիտեան է.

20 Ու Բասանի Ովգ թագաւորը,

Վասն զի անոր ողբրմնւթիւնը յաւիտեան է.

21 Եւ անոնց երկիրը ժառանգութիւն տուսղէն,

Վասն զի անոր ողբրմնւթիւնը յաւիտեան է.

22 Իր Խորսյէլ ժառային ժառանգութիւն,

Վասն զի անոր ողբրմնւթիւնը յաւիտեան է.

23 Մէր խոնարհութեանը մէջ մեղ յիշողէն,

Վասն զի անոր ողբրմնւթիւնը յաւիտեան է.

24 Ու մեր թշնամիներէն մեղ փրկողէն,

Վասն զի անոր ողբրմնւթիւնը յաւիտեան է.

25 Բոլոր մարմինի հաց տուսղէն,

Վասն զի անոր ողբրմնւթիւնը յաւիտեան է.

26 Գոհացէք երկինքի Աստուծմէն,

Վասն զի անոր ողբրմնւթիւնը յաւիտեան է:

## ՍՈՂՄՈՍ ՃԵ

1 **Բ**արելոնի գետերուն քով հաց կը նստէինք,

Ու Սիօնը մագերնիս բերելով կու լոյինք:

2 Անոր մէջ ուռիներուն փայ

Կախեցինք մեր քնարները,

3 Վասն զի մեղ գերի ընալները

Հնա մեղմէ երգ մը խնդրեցին,

Ու մեր Կարմագիչները ուրախութիւն,

Ըստէւ, երդեցէք մեղի Սիօնի երգերէն:

4 **Տ**երոջը երգը ի՞նչպէս երգենք

Օտար երկը մէջ :

5 Ով Երուսաղէմ, եթէ քեղ մասնամ,

Թող իմ աջ ձեռքառ էր պաշտօն մասնայ.

6 Թող իմ լեզուս իմ քիմքիս փակչի,

Եթէ քեղ չըիշեմ,

Եթէ Երուսաղէմը իմ գլխաւոր ուրախութենէս

Աւելի մեծ չչամարիս:

7 Ցիշէ, ով Տէր, Երավիմ սրբիները

Երուսաղէմի օրուանը մէջ,

Որոնք կ'ըսէին, Փլցացէք, Փլցացէք

Մինչև անոր հիմլ:

\*Կամ, գերեվարները

- 8 Ով Բարելոնի \*աւերսղ աղջիկը,  
Երանի՛ անոր՝ որ քեզի կը հաստացանէ  
Մշղի ըրած գործերուդ փափարէնը.  
9 Երանի՛ անոր՝ որ քու զաւակներդ կը բռնէ  
Ու քարի կը զարնէ:

## ՍԱՂՄՈՍ ՃԼԲ

Սաղմոս Դաւթի:

- 1 Փեզի գոհութիւն պիտի մաստացանեմ իմ բոլոր  
սրանց.  
+Աստաւածներուն առջև քեզի սարմաս պիտի երգեմ:  
2 Երկարագութիւն պիտի ընեմ դեպի ի քու սուրբ  
տաճարդ:  
Եւ քու անուանդ գոհութիւն պիտի մաստացանեմ  
Քու ողորմութեանդ ու ճշմարտութեանդ համար.  
Վասն զի քու բոլոր անունեդ վեր մեծցուցիլ քու  
խօսք:  
3 Կանչած օրս պատասխան տուիր ինձի,  
Իմ անձիս մեջ զօրութիւնով զիս ու ժայլուցիր:  
4 Ով Տէր, երկրի բոլոր թագաւորները քեզի գոհութիւն  
պիտի մաստացանեն,  
Երբ քու բերնիդ խօսքերը ըսեն.  
5 Ու Տէրոջը ճամբաներուն մեջ պիտի երգեն.  
Վասն զի Տէրոջը փառքը մեծ է:

\*Կամ, աւրաւելու. Ես. ժգ. 1, 6, ևն իւ. 1: Երեմ.  
իւ. 12: ժ. 2:  
†Կամ, Հըշշատակներուն, չամ, Դաստաւորներուն, և չամ,  
Աստաւածոյ

- 6 Թէպէտ Տէրը բարձր է, բայց խոնարհը կը տեսնէ,  
Ու բարձրամասը հեռաւէն կը ձանձնայ:  
7 Եթէ նեղութեան մէջ ալ քալեմ,  
Պուն զիս պիտի կենդանացնես,  
Իմ թշնամիներուս բարկութեանը դէմ  
Քու ձեռքք պիտի երկնցնես,  
Եւ քու աջ ձեռքք զիս պիտի փրկէ:  
8 Տէրը պիտի գործէ ինձի համար.  
Ով Տէր, քու ողբարսութիւնն յաւիտեան է.  
Քու ձեռքք գործերը երեսէ մի ձգեր:

## ՍԱՂՄՈՍ ՃԼԹ

Գլխաւոր երաժշտին, Սաղմոս Դաւթի:

- 1 Ով Տէր, զիս քննեցիր ու ճանչցարէ  
2 Դուն գիտես իմ նասիլս ու ելեւս,  
Իմ խորհուրդս հեռաւոնց կիմնասա  
3 Իմ շաւիցս ու պառկիլս կը քննես,  
Ու իմ բոլոր ճամբաներս գիտես  
4 Վասն զի բնաւ խօսք չկայ իմ լեզուիս վրայ,  
Ահա, ով Տէր, դուն ամէնը գիտես  
5 Իմ ետեւես ու առջեւես զիս պաշարեցիր,  
Եւ քու ձեռքք իմ վրաս գրիւ  
6 Այս գիտաթիւնը ինձի խիստ զարմանալի է,  
Բարձր է ու չեմ կնար համենալ զանիկա:  
7 Ո՞ւր երթամ քու Հսդիկ,  
Եւ քու երեսէդ ո՞ւր փախչիր:  
8 Եթէ երկինք ելեւմ, դուն չոն ես,  
Եթէ գժողովը անկողինս ընեմ, ահա դուն հան ես,  
9 Եթէ արշալցոյն թեւերը առնեմ,

- Եւ ծավուն վերջի ծայրը բնակիմ՝,  
 10 Հան ալ քու ձեռ-քդ ինմի պիտի առաջնորդէ,  
 Ու քու աջ ձեռ-քդ զիս պիտի բռնէ:  
 11 Եթէ լսեմ, Խրառցընէ խաւարը զիս պիտի ծածկէ,  
 Այս որէն գիշերն ալ լցո Կ'ըլլոս իմ բոլորակատ  
 12 Մութն ալ քեզի խաւար չէ.  
 Հապա գիշերը ցորեկի պէս լսւաւոր Կ'ըլլոյ.  
 Խաւարը և լցոր միենայն բան են ուս ուղիւր:  
 13 Վ ան զի գուն \*ասեղջեցիր իմ երիկամնակներս,  
 Ու իմ մօս օրովայնն մէջ գուն զիս ծածկեցիր:  
 14 Կը գոհանամ՝ քեզմէ,  
 Որ ահաւոր ու զարմանալի կերպով ասեղջուեցայ.  
 Քու գողծերդ զարմանալի են,  
 Ու իմ անձս աղէկ գիտէ:  
 15 Իմ գյուղթիւն չժածկուեցաւ քեզմէ,  
 Երբ գաղտուկ տեղը շնուեցայ,  
 Երկիր խորութիւններուն մէջ †ճարտարութեամի  
 կազմուեցայ:  
 16 Քու աչքերդ իմ անկաստար կազմուածքս տեսան.  
 Ու առաջնութեաս բոլորը քու գիշերդ մէջ գրուած էին,  
 Որո՞ւ ժամանակին պիտի կազմուեին,  
 Երբ դեռ անոնցմէ մէ՛կը չկար:  
 17 Ո՛րչափ պատուական են ինձի քու խորհուրդներդ,  
 ալ Աստուած.  
 Ո՛րչափ մեծ է անոնց թիւը:  
 18 Եթէ համբեմ զանանք՝ աւազէն շատ են.  
 Երբ ալթնամ՝ դեռ քեզի հետ եմ:

\*կամ, ստացար  
 գեր, նկալակերպեցայ

- 19 Խրառցընէ ամբարիշտը պիտի սպաննես, ալ Աստ.  
 ուած.  
 Ուրեմն, ալ արիւնահեղ մարդիկ, հեռացեկ ինձմէ:  
 20 Անոնք քեզի դէմ նենդութեամի կը խօսին,  
 Եւ քու \*թշնամիներդ ուս ասունդ պարապ աեղ  
 կ'առնեն:  
 21 Քեզ ասազները չե՞մ ատեր, ալ Տէր,  
 Ու քեզի դէմ ելլաներէն չե՞մ զզուիր:  
 22 Զանոնք կատարեալ ատելսութեամի կ'ատեմ,  
 Եւ ինձի թշնամի կը համարիմ:  
 23 Փորձէ զիս, ալ Աստուած, ու գիտցիր իմ սիրաս.  
 Զիս քննէ ու գիտցիր իմ մոածմաններս,  
 24 Եւ նոյէ թէ արգեօք չար ճամբու մէ՛ջ եմ,  
 Եւ զիս դէպի յաւիտենական ճամբան առաջնորդէ:

## ՍՍԼԱՄՈՍ ձև

Գլխաւոր երաժշտին. Ատղմա Դաւթի.

- 1 Պ ալ Տէր, չար մորդէն զիս փրկէ,  
 Ու բռնաւոր մորդէն զիս պահէ,  
 2 Որոնք պատերնուն մէջ չար բաներ կը մտածեն,  
 Ու ամէն օր կախներու համար կը ժողվուին:  
 3 Իդենց լեզուները օձի պէս որեցին.  
 Իժի թշն կայ անոնց շրթունքներուն տակի. (Աէլու)  
 4 Ո լ Տէր, զիս ամենաըշտին ձեռ-քէն պահէ.  
 Զիս բռնաւոր մարդէն պահպանէ,  
 Որոնք իմ գնացըներս խափանելու խորհուրդ ըրին:

\*կամ, քաղաքներդ անիրաւութեամբ կ'առնեն

5 Ամիսաբաւաւնները ինծի համար գալանի որոդայիթ ու  
չուսններ լորեցին.

Ուռկան փուեցին էւ ճամկաւս վրայ,

Վարմեր գրին ինծի համար (Սէլաւ)

6 Ըստ Տէրաջը, Դուն ևս իմ Աստուածաւ.

Ով Տէր, լու իմ աղազնիքիս ձայնը:

7 Ով Տէր Եշավա, իմ քրիսթեանս զօրութիւնը,

Դուն իմ պլաստիկի եղար պատերազմին օրը:

8 Ով Տէր, ամբարջալին ցանկութիւնները մի տար.

Անոր չար խորհուրդը մի յաջողեր,

Ու աւազ ներարձանան (Սէլաւ)

9 Զիս պաշտրազներուն գլուխը

Կրինց շրիմ ուներուն աշխատաւթիւնը պիտի ծածկէ:

10 Վաստած ածուխներ պիտի իյնան անոնց վրայ.

Կրտիկի մէջ պիտի ձգէ զաննիք,

Ու խորուն ջուրերու մէջ, սրակւ զի լուսւ վեր չելլեն:

11 Զարպասու մարդը երկի վրայ պիտի չչաստասաւի:

Թշաւաւութիւնը պիտի սրայ բանաւոր մարդը,

Որպէս զի շատիւ կործաննէ:

12 Գիտամ որ Տէրը դասասասն պիտի ընէ խեղձին,

Ու իրաւունք՝ աղքատներուն:

13 Ցիլաւի արդարները քու անունդ պիտի գովեն.

Ու զիշները քու առջեւդ պիտի բնակին:

## ՍՈՎԼՄՈՍ ՃԽԱ

Սաղմա Գաւթիւ

1 Պու Տէր, քեզի կը կանչեմ, շրւտով հասիր ինծի.

Ականջ գեր իմ ձայնիս ելլը քեզի կը կանչեմ:

2 Թուղ իմ աղօթքս խունկի ուր քեզի շիտկուի,

Եւ իմ ձեռքերուս վեր վերցուիլը՝ իրիկուան պատա-  
րագին պէա:

3 Ով Տէր, պահապան զիր իմ լրենիսա,

Ու իմ շրթունկներուս գուռու պահապանէ:

4 Խմ զիրաս չար բանի ետեւէ խասորելու մի թողուր,  
Որպէս զի անօրէնութիւն գործող մարդաց հետ գէւ  
գործեր չնեմ:

Ու անոնց համագում կերակուրներէն չուտեմ:

5 Արդարութուղ զիս գապնէ, այն սղորմեթիւն է,  
Եւ զիս յոնդիմաննէ, այն զիսու իւղ է.

Խմ զլուխս չմերժէ շնէիս:

Վասն զի անոնց նեղութիւններուն մէջ ալ պիտի  
աղօթեմ:

6 Երբ անոնց դասաւորները ապառաժններու մէջ ձբդ-  
ուին,

Այն տանեն իմ խօսքերս պիտի լսեն, վասն զի քաղցր են:

7 Խնչդիւ չերկողը ու ձեղքողը հւարակ երկի վրայ,  
Այնդիւ մեր ակորները գերեզմանին բերանը ցիրուցն  
եղան.

8 Սակայն, ով Տէր Եշավա, իմ աշքերս գեսպի քեղեն.  
Քեզի յուսացայ, իմ հոգիս մի մերկացներ:

9 Խնձի համար լարսաւծ սղորդութիւն,

Ու անօրէնութիւն գործողներուն վարսերէն զիս  
պահէ:

10 Ոմերարիշանները իրենց ցանցերուն մէջ պիտի կյանան,  
Երբ ես բոլորսպին անցնիմ:

## ՍԱՂՄՈՍ ՃԽԲ

- Դաստիքի երգը ու աղօթքը՝ երբ ինք այլին մէջ էր։
- 1 **Իւ** ձայնաված Տէրոջը կ'աղաղակեմ։  
Իմ ձայնաված Տէրոջը կ'աղաղակեմ։
  - 2 **Իմ** գոնգասա անոր առջեւ կը թափեմ։  
Իմ նեղութիւնս անոր առջեւ կը պատմեմ։
  - 3 Երբ հոգին իմ՝ մէջս կը մարեր,  
Գուն իմ՝ շաւիդս գիտցար։  
Իմ բալած ճամկուս մէջ  
Ինձի համար գաղառուկ որոգայիթ լորեցին։
  - 4 Եսյէ առ կողմը ու տես,  
Որ բնաւ զիս ճանցող մը չկոյ։  
Ապաւէնը ինձմէ կրառուեցաւ。  
Բնաւ մէկը չկոյ որ իմ անձիս համար հոգ ընէ։
  - 5 **Ու** Տէր, քեզի աղաղակեցի,  
Ու ըսի, Գուն ես իմ՝ աղառէնս,  
Ես իմ՝ զիժակս կենդանիներուն երկրին մէջ։
  - 6 **Ականջ** դիր իմ աղաղակիս,  
Վասն զի շատ նուռասացայ։  
Ազատէ զիս իմ հալածիչներէս,  
Վասն զի ինձմէ զօրաւոր են։
  - 7 **Իմ** անձ բանակն հանէ,  
Որպէս զի քու անուտնդ զոյսութիւն մատուցանեմ։  
Արդարները իմ՝ չըս կողմն պիտի պատեն,  
Երբ ինձի բարութիւն ընես։

## ՍԱՂՄՈՍ ՃԽԲ

Սաղմաս Գաւթիւ

- 1 **Ու** Տէր, լսէ իմ աղօթքս,  
Ականջ դիր իմ՝ աղաղանքիս։  
Պատասխան տուր ինձի քու ճշմարտութիւնովդ։  
Ու քու արդարութիւնովդ։
- 2 Եւ քու ծառապիդ հետ գատառատանի մի մաներ,  
Վասն զի բնաւ կենդանի մը պիտի չարդարանայ քու  
առջեւաւ։
- 3 Վասն զի թշնամին իմ անձս հալածեց,  
Իմ կենակս գետմինը զարկաւ,  
Զիս շատանցուլնէ մեռածներուն պէս  
Մութը նստեցաւ։
- 4 Եւ իմ հոգիս ներսիդիս մարեցաւ,  
Իմ սիրոս ներսիդիս խոսվեցաւ։
- 5 Աւաջուսն օրերը կը յիշեմ,  
Քու բալոր գործերուգ վրոյ կը մատծեմ։  
Քու ձեռքերուգ ըրտաներուն վրոյ կը խորհիմ։
- 6 Զեռքերս դէպի ի քեզ կ'երկնցնեմ։  
Իմ անձս չըս երկրի պէս քեզի չւ հորուէն (Աէլու)։
- 7 Շուտով պատասխան տուր ինձի, ուլ Տէր.  
Իմ հոգիս մարեցաւ,  
Քու երեստ մի ծածկեր ինձմէ,  
Որպէս զի գուրը իջնողներուն պէս չըլլամ։
- 8 Աւաստանց քու ողորմնաթիւնդ ինձի լսել տուր,  
Վասն զի քեզի յաւսացայ։  
Իմ երթալու ճամբաս ինձի ցուցուր,  
Վասն զի իմ անձս գէպի քեզ վերցուցիւ

- 9 Ով Տէր, քրկէ զիս իմ՝ թշնամիներէս,  
Վահու զի քեզ իմ՝ ապաւէնս ըրի։
- 10 Սորվեցուր ինձի որ քու կոմքդ լնեմ,  
Քանզի գուն ես իմ՝ Աստուածու։  
Թող քու բարի Հոգիր զիս ուղիդ երկիրը առաջնորդէ։
- 11 Ով Տէր, քու անսուանդ համար կենդանացուը զիս։  
Քու արդարութեանդ համար իմ՝ անձս նեղութենէ  
հանէ։
- 12 Եւ քու սղորմութիւնովդ աստկեցուր իմ՝ թշնամին  
ներս,
- Ու կորսնցուր բոլոր իմ՝ անձս վշտացնողները,  
Վասն զի ես քու ծառադ եմ։

## ՍԱՂՄՈՍ ՃԽԴ

Սույն դաւթի։

- 1 Օրհնեալ ըմայ Տէրը, իմ՝ Աէմա,  
Որ իմ՝ ձեռքես մարտնչելու կը վարժէ,  
Ու իմ՝ մաստեր՝ պատերազմելու։
- 2 Անկեա է իմ՝ սղորմութիւնս ու պարիսպս,  
Իմ՝ ապաւէնս ու իմ՝ փրկիչս,  
Իմ՝ վահունա, և ես անոր կը յուսում,  
Որ իմ՝ ժողովսուրդս ինձի կը հնազանդեցնէ։
- 3 Ով Տէր, մարդը ի՞նչ է որ զանիկա կը ճանչնաս,  
Ու մարդու որդին՝ որ զանիկա կը յարգես։
- 4 Մարդը ունայնութեան պէս է,  
Անոր օրերը անցնող շուրբի պէս են։
- 5 Ով Տէր, խանարհեցուր քու երկինքդ ու վար իջիր.  
Լեռներուն դպչէ ու պիտի միտն։
- 6 Փայլակը նետէ ու ցրուէ զաննիք։

- Քու նետերդ դրկէ ու զաննիք խոռվեցուր։  
7 Քու ձեռքք վերէն դրկէ և աղասոկ զիս։  
Փրկէ զիս մեծ ջանքերէն ու օտարներուն ձեռքէն,  
8 Որոնց բերանը անսայնութիւն կը խօսի,  
Եւ անոնց աջ ձեռքք ստութեան աջ ձեռք է։
- 9 Ով Աստուած, քեզին նոր երդ պիտի երգեմ,  
Տարը լոր ունեցող տաւելղով սաղման պիտի լսեմ  
քեզի։
- 10 Թագաւորներուն փրկութիւն տուսը,  
Ու իր Դաւելթ ծառան չար ստութիւն աղասողը ան է։
- 11 Զիս աղասէ ու օտարներուն ձեռքէն փրկէ,  
Որոնց բերանը անսայնութիւն կը խօսի.  
Եւ անոնց աջ ձեռքք ստութեան աջ ձեռք է։
- 12 Որպէս զի մեր որդիները իրենց երիտասարդութեանը  
մէջ տունկերու պէս մեծնան,  
Ու մեր աղջիկները պալատի շնչին համար փորագ-  
րուած անկենիք քարերու պէս ըլլան.  
13 Որպէս զի մեր ամիալները լեցուին,  
Եւ ամէն տեսակ իւրաքանչէր ըլլիւն,  
Ու մեր սչխարները հաղարաւոր և բիւրաւոր ճնանին  
մեր արտերուն մէջ։
- 14 Որպէս զի մեր արջունները \* բազմածին ըլլան,  
Ու ամենեւին բոնութեամի մանելու ու ելլել ըլլան,  
Ոչ ալ աղազակ մեր հրազարակներուն մէջ։
- 15 Երանի՛ ոյսափիսի վիճակի մէջ եղող ժողովուրդին.  
Երանի՛ ոյն ժողովուրդին՝ որուն Աստուածը Եհովան է։

\*կամ, պարագա

## ՍԱՂՄՈՍ ՃԽԵ

ՕՐՀՆՈՒԹՔՆ ԴԱՌՔԻ

- 1 **Փեղ** պիտի բարձրացնեմ, ով իմ Աստուածու, որ թագաւոր ես.
- 2 Ու քու անունդ յաւիտեանս յաւիտենից պիտի օրհնեմ:
- 3 Ամէն օր քեղ պիտի օրհնեմ,
- 4 Եւ քու անունդ յաւիտեանս յաւիտենից պիտի գովեմ:
- 5 Մեծ ու խիստ գովելի է Տէրը,
- 6 Ու անոր մեծութիւնը անքննելի է;
- 7 Ազգ ազգի պիտի գովել քու գործերդ,
- 8 Եւ քու զօրութիւններդ պիտի պատմէ:
- 9 Քու փառքիդ մեծութեանը վայելչառթիւնը
- 10 Ու քու հրաշալի գործերդ պիտի զրուցեմ:
- 11 Եւ քու աշաւոր գործերդ պիտի խօսին,
- 12 Ու ես քու մեծութիւնդ պիտի պատմեմ:
- 13 Քու մեծ բարերարութեանդ յեշատակը պիտի հրատապիեն,
- 14 Եւ քու արդարութիւնովդ պիտի ցնծան:
- 15 Ուղրմած ու գժած է Տէրը,
- 16 Երկայնամիտ և բազումողորմ է:
- 17 Տէրը ամէնուն բարի է,
- 18 Ու անոր ողբրմութիւնները իր բոլոր գործերուն
- 19 Քու գործառնութիւնները իր բոլոր գործերուն
- 20 Տէրը բոլոր զինք սիրունները կը պահէ,
- 21 Եմ՝ բերուն Տէրոջը գովութիւնը պիտի խօսի,
- 22 Ու ամէն մարմին անոր սուրբ անունը օրհնէ յաւիտեանս:

## ԳԻՐՅ ՍԱՂՄՈՍԱՅ

Ու քու զօրութիւնդ պիտի պատմեն.

- 12 Որպէս զի անոր զօրսանը գործերը ու անոր թագաւոր բական փառաւոր մեծութիւնը
- 13 Մարդոց որդիներան գիտցնեն:
- 14 Տէրը կը հաստատէ բոլոր իշխալու վրայ եղանցները,
- 15 Եւ բոլոր վար ծռածները կը կանգնեցնէ:
- 16 Ամէնուն աչքերը քեզի կը սպասեն,
- 17 Ու ժամանակին անոնց կերպակուրը դռն անոնց կուտաս:
- 18 Բու ձեռք գործ կը բարնասա,
- 19 Ու ամէն կենդաներին փափաքը կը լեցնեա:
- 20 Տէրը արդարութիւններդ կը կանչեն,
- 21 Ու ողբրմած է իր բոլոր գործերուն մէջ,
- 22 Տէրը մօտ է այն ամէնուն որ զինք կը կանչեն,
- 23 Անին ամէնուն՝ որ ճշմարտութեամբ զինք կը կանչեն,
- 24 Անիկա իրմէ վախցողներուն փափաքը կը լեցնէ,
- 25 Եւ անոնց աղաղաղակը կը լուէ ու կը փրկէ զանոնք:
- 26 Տէրը բոլոր զինք սիրունները կը պահէ,
- 27 Սակայն բոլոր ամերափշոնները կը կորունցնէ:
- 28 Եմ՝ բերուն Տէրոջը գովութիւնը պիտի խօսի,
- 29 Ու ամէն մարմին անոր սուրբ անունը օրհնէ յաւիտեանս:

## ՍԱՂՄՈՍ ՃԽԵ

- 1 **Աւելուիս** Օրհնէ Տէրը, ով իմ անձաւ
- 2 Տէրը պիտի օրհնեմ իմ կեանքիս մէջ,

- Քանի որ ո՞վ եմ՝ իմ Աստուծոյս սալմոս պիտի ըսեմ՝  
 3 Մի յառաք իշխաններուն,  
 Մարդու որդիին՝ որուն քով Փրկութիւն չկոյ:  
 4 Անոր հսկին կ'ըլլէ, անիկա իր հողը կը դասնաց.  
 Նան օրը անոր խորհուրդները կը կրտսուին:  
 5 Երանի՛ անոր՝ որուն օգնականը Յակոբի Աստ-  
 ուածն է,  
 Ու անոր յայով իր Տէր Աստուծոյն վրայ է.  
 6 Որ երկինքը ու երկրը,  
 Ծովը ու լուսը, անոնց մէջ եղածը ստեղծեց  
 ձշնարարութիւն կը պահէ յաւիտեան,  
 7 Կրտսունէ կ'ընէ զրկուածներուն,  
 Ու հայ կու առյ ստօթիներուն.  
 Տէրը կ'արձակէ կազմածները.  
 8 Տէրը կը բանաց կայրերուն աչքերը.  
 Տէրը կը կանգնեցնէ վար ծաածները.  
 Տէրը կը միրէ արդարները.  
 9 Տէրը կը պահէ պանդախոսները.  
 Կը հաստատէ որբը ու որբեւարին,  
 Բայց ամերիշաններուն ճամփան կը ծռէ:  
 10 Տէրը պիտի թագաւորէ յաւիտեան,  
 Քու Աստուծոյ, ով Սիօն, աղդէ մինչև աղդ: Ալէ-  
 լուիս:

## ՍՈԼՄՈՍ ՃԽԵ

- 1 Պովեցէք Տէրը, վասն զի բարի է մեր Աստուծոյն  
 սալմոս ըսել.  
 Վասն զի քաղցր ու վայելուչ է օրհնութիւնը  
 2 Տէրը կը ընէ Երառապէմի,  
 Խորոցէլի ցուսւածները կը ժողվէ.

- 3 Արտով կոարտածները կը բժշկէ,  
 Ու անոնց խոցերը կը փաթթէ,  
 4 Ասազերաւն թիւը կը համբէ,  
 Անոնց ամէնն ալ էրեւաց անուններովը կը կանչէ:  
 5 Մեծ է մեր Տէրը, ու իր զօրսութիւնը շատ է.  
 Անոր իմաստութիւնը անհանն է:  
 6 Տէրը կը հաստատէ խեղճերը,  
 Ու ամբարիշանները մինչև հողը կը խոնարհեցնէ:  
 7 Երգեցէք Տէրովը գոյսաթիւնով.  
 Մեր Աստուծոյն սալմոս ըսեք քննարավ:  
 8 Որ երկինքը ամեներով կը ծածէ,  
 Անձրէկ կը պատրաստէ երկրի համար,  
 Խաս կը բուացնէ լեռներուն վրայ:  
 9 Որ անսաւններուն իրենց կերակուրը կու տայ,  
 Ու ագռաւին ձագերուն՝ որոնք կ'ազաղակեն:  
 10 Անիկա ձիւն զօրսութեանը չհամճիր,  
 Մարդուն պունքներուն չհաւիրի:  
 11 Տէրը կը հաւնի իրմէ վախցողներուն  
 Ու իր ողբանութեանը յաւսացողներուն  
 12 \*Ով Երառապէմ, գովէ Տէրը.  
 Օրհնէ քու Աստուծոյ, ով Ախօն:  
 13 Վասն զի անիկա քու գոներուգ նիգերը ամսւրցուց,  
 Ես քու որդիներդ քու մէջդ օրհնեց:  
 14 Անիկա քու սահմաններուգ խաղաղութիւն կու տայ,  
 Ու պարարտ ցորենով քիզ կը կշացացնէ:  
 15 Անիկա իր խօսքը երկրին մէջ կը զրկէ.

\*Եօթանառնէց և Հայոց բարբար Արքանութեանց Հէջ  
 առիւ և անէ ձիսի. Սողուու: Տէս Սողուու Ժ. Ի. Ք. Պ. Հ.  
 Ճանաբարինաւու:

- Եր խօսքը շուտապվ կը վազէ:  
 16 Անիկա բուրդի պէս ձիւն կու տայ,  
     Ու եղեամը մնիսիրի պէս կը ցանէ:  
 17 Եր ասալ պատասաներու պէս կը նետէ.  
     Անոր ցուրտին դէմ ո՞վ կրնայ կենալ:  
 18 Անիկա իր խօսքը կը դրիէ ու կը հալեցնէ զանակք.  
     Եր հալը չչել կու տայ, ու ջաւրեր կը վազին:  
 19 Անիկա իր խօսքը կը պատմէ Յակորի,  
     Եւ իր կանաները ու գատաստաները՝ Խորոշէի:  
 20 Բնեա ազգի մը այսպէս չըրտա.  
     Ու անոնք առար գատաստաները չժանչանցան: Ալէլուիա:

## ՍԱԼՄՈՍ ՃԹՅ

- 1   Ալէլուիա Օրհնեցէք Տէրը երկնեքէն.  
     Օրհնեցէք զանիկա բարձր տեղերուն մէջ:  
 2 Օրհնեցէք զանիկա, ալ անոր բալրը հոեշտակները.  
     Օրհնեցէք զանիկա, ալ անոր բալրը զօքքերը  
 3 Օրհնեցէք զանիկա, ալ արեգակ ու լուսին.  
     Օրհնեցէք զանիկա, ալ բալր ֆայլուն ասազեր:  
 4 Օրհնեցէք զանիկա, ալ երկնից երկնիք  
     Ու երկնեք վեր եղող ջաւրեր:  
 5 Թող Տէրզը անունը օրհնեն.  
     Վասն զի ինք հրամայեց, ու անոնք ստեղծուեցան:  
 6 Եւ զանեք յաւրաբենն յաւրաբենից հասաստեց.  
     Կանոն դրաւ որ չխափանուիր:  
 7 Օրհնեցէք Տէրը երկը,  
     Ով իշխաններ ու բալր անդունդներ.  
 8 Կրակ և կարկուտ, ձիւն ու շողի,  
     Եւ անոր խօսք կատարող մըրկարից հոգ,

- 9 Լեռներ ու լողար բլուրներ,  
     Պաղասու ծառեր ու եղեցներ,  
 10 Գաղաններ ու բոլոր անասուններ,  
     Սուլցաղներ ու թեւաւոր թաշններ,  
 11 Երկրի թագատարներ և բոլոր աղջեր,  
     Եշխաններ ու երկրի բոլոր գատաստորներ,  
 12 Երիտասարդներ և կյա աղջեկներ,  
     Ծերեր ու տղափներ,  
 13 Թող Տէրզը անունը օրհնեն,  
     Վասն զի միայն անոր անունը բարձր է,  
     Անոր փառքը երկը ու երկնեք վեր է:  
 14 Անիկա բարձրացուց իր ժողովուրդին եղջիւրը,  
     Իր բալր սուրբերուն,  
     Իրեն մատ եղող ժողովուրդին,  
     Խորոշէլի որդիներուն օրհնութիւնը Ալէլուիա

## ՍԱԼՄՈՍ ՃԹՅ

- 1   Ալէլուիա Տէրզը նոր երդ երգեցէք,  
     Ու անոր օրհնութիւնը՝ սուրբերուն ժողովքին մէջ:  
 2 Խարոյէլ թող ուրախանայ իր Սուեղծոցին վրայ.  
     Ախօնի որդիները թող ցնծան իրենց թագատարին վրայ:  
 3 Թող անոր անունը պարտվ օրհնեն,  
     Թմբուկով ու քնարով սուզմնս թող ըսեն անոր:  
 4 Վասն զի Տէրը իր ժողովուրդին կը հաւեն,  
     Խոնարհները քրիստունով պիտի փառաւորէ:  
 5 Թող սուրբերը ուրախանան փառքով,  
     Ու իրենց անկողիններուն մէջ ցնծան,  
 6 Աստուծոյ գովութիւնները անոնց բերնին մէջ թող  
     ըլլան,

- Ու երկու բերնով սուր՝ անոնց ձեռքին մէջ,  
 7 Որպէս զի հէլթ անոսներէն զիւժ առնեն,  
 Ու ժողովուրդները պատճեն,  
 8 Որպէս զի անոնց թագաւորները շղթ աներով կապեն,  
 Ու անոնց աղնուականները՝ երկալը է կապանքներով,  
 9 Որպէս զի գրաւած գատառասանը անոնց վրայ կա-  
 տարեն:  
 Այս անոր բալոր սուրբերուն փառքն է: Ալէլուիս:

## ՍԱՂՄՈՍ ՃԾ

- 1 Ալէլուիս Օրչնեցէք զլիստուած իր սրբարանին  
 մէջ.  
 Օրչնեցէք զանիկա իր զօրութեանը հաստատութեանը  
 մէջ:  
 2 Օրչնեցէք զանիկա իր զօրուար գործերուն համար.  
 Օրչնեցէք զանիկա իր մեծ ափառութեանը համեմատ:  
 3 Օրչնեցէք զանիկա փողի ձայնով.  
 Օրչնեցէք զանիկա տաւեղով ու քնարով:  
 4 Օրչնեցէք զանիկա թմրուկով ու պարով.  
 Օրչնեցէք զանիկա լար ունեցող նուագարաններով  
 ու սրինդով:  
 5 Օրչնեցէք զանիկա մեծաձայն ծնծղաներով.  
 Օրչնեցէք զանիկա ցնծութեան ծնծղաներով:  
 6 Ամէն շունչ սւնեցող թող Տէրը օրչնէ: Ալէլուիս:





ՄՄ Հայոցիտական գրադարան



MAL038344

199 (1)

1/2 Luke

